



9 (= 91.99)  
~~10 89~~

ՄԱՌԻԿԱԿԱՆ Ե 1987 Ձ.

մ. 75 9

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ  
Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն  
Կ Ե Ս Ա Ր Ի Ո Յ Ն Ի Ր Զ Է Գ Ի Ի Ն Ի

27104

A  $\frac{\pi}{32298}$

Գրեց

ՍԵՆԵՔԵՐԻՄ ԽՏԸՐԵԱՆ



1918

ՀԱՍՈՅԹԸ ԱՄԲՈՂՋՈՒԹԵԱՄԲ  
ՊԻՏԻ ՅԱՏԿԱՑՈՒԻ  
ԿԵՍԱՐԻՈՅ ՆԻՐԶԷ ԳԻՒՂԻ  
Վ Ե Ր Ա Շ Ի Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այս գործին նպատակն է ծանօթացնել Նիրզէ դիւղը, և մտոացութեան չ'տալ այն յիշատակները, որ մեղի համար պաշտելի են: Սոյն աշխատութեան ձեռնարկելու ատեն դիմած եմ Նիրզէցիներուն առանց բացառութեան, և պահանջած եմ իրենց կենսադրութիւնը և պատկերը. դժբաղդարար շատ քիչերը արձագանդ տուին իմ պահանջներուս:

Առաջները ուէ մտադրութիւն չեմ ունեցած այս կարգի աշխատութիւն մը կատարելու. այլ դէպքերը այնպէս բերին որ, ստիպուած եղայ այս դժուարին գործը յանձն առնել:

Իմ հայրենակիցներս թող ներող ըլլան այն թրւականներուն կամ տարիքներուն համար որ թերևս տարի մը առաջ գրուած է կամ ետ: Ինչպէս ըսի, ուէ դէպք ճիշտ թուականներով և ժամանակին յիշել բաւական դժուար է:

Ես բաւականացած եմ ձեռքիս տակ եղած մօտաւորապէս 400 հատ նամակները մանրակրկիտ կարդալով: Եօթը տարի է Ամերիկա եմ. այդ շրջանի անցուդարձերը առանց բացառութեան ինձ գրուած են այս կամ այն անձնաւորութիւններու կողմէ:

Գրքիս մէջ կան շատ մը կենսադրական նօթեր. տարակոյս չի կայ որ շատ մը սխալմունքներ ըլլան,

դարձեալ ներողամտութեան կը դիմեմ իմ սիրելի  
Հայրենակիցներուս :

Գիրքս կը ներկայացնէ մօտաւորապէս 100 տար-  
ուայ կեանքը Նիրդէ դիւղին : Օգտուած եմ մեր պա-  
պերու և մամերու պատմութիւններէն :

Մենք մեր երկրին մէջ թողուցած ենք մեր ծը-  
նողքները, եղբայրները, քոյրերը, աղգականները  
և բարեկամները. անոնց կարօտը կը քաշենք, ու-  
րոնց Հեռ կ'ուզենք նամակներով խօսիլ և մեր կա-  
րօտակէզ սրտին մասամբ զովութիւն տալ, բայց  
ախտո՞ս, ատկից ալ զրկուեցանք :

Ես ստիպուած էի Ամերիկայի զանազան ան-  
կիւնները եղող Նիրդէցիներուն դիմել և տեղեկու-  
թիւն հաւաքել և ամփոփել զրքիս մէջ իմ կարողու-  
թեան ներած չափով :

Մեր սիրելիներէ եկած նամակներու դադրելը  
և Հայ ազգին գլխին պայթած աղէտը Հարկադրեց  
որ այս գիրքը հրատարակ հաննեմ : Մարդկութիւնը  
իբ. գոյութեան ճանապարհին վրայ իբր առաջնոր-  
դող աստղ մը ունենալով միշտ երջանկութեան ի-  
տէալը, անոր իրականացումը ազատութեան մէջ  
փնտռած է : Հայ ժողովուրդն ալ իբրև մարդկութեան  
մէկ մասնիկը կը ձգտէր ազատութեան. բայց այդ  
սրբազան ազատութիւնը իրագործելու համար պէտք  
էր պայքարիլ : Դժբախտաբար չըջապատուած էինք  
վայրենի ցեղէ մը, զուրկ տարրական քաղաքակրթ-  
ութենէ, հասարակ գիտակցութենէ, զուրկ նաեւ  
մարդկային դադափարներէ, անընդունակ իրերը  
իրենց բուն արժէքներով դատելու. միայն մէկ  
սկզբունք որդեգրած էր. ջարդել և աւերակ ընել :  
Ահա ասոր համար է որ այս աշխարհաստան պա-  
տերադմին մէջ մեծագոյն տուժողը Հայ ժողովուր-

դը եղած է, և իր դոյութիւնը վտանգի տակ է. այսօր շատ մը քաղաքներ և գիւղեր փլատակ եղած են, նոյնպէս Նիրզէ գիւղը:

Գիրքս տպագրութեան չ'յանձնած նամակ մը ստացայ Կեսարիայէն. խեղճ նամակագիրը կ'ըսէ. «Երկաթագործ ըլլալու հանգամանքովս առ այժմ կ'ապրիմ»: «Բայց բոլոր ոչխարները դայլը կերաւ, մի մտահոգուիք»: Այս կարճ բայց ազդու նախադասութիւնը շատ բան կը պարունակէ իր մէջ: Մեզ խորհրդածել կուտայ թէ Նիրզէցիներ կամ բոլորովին ջարդուած կամ տեղափոխուած են: Հետեւապէս կ'արժէ, Նիրզէի ջուրին, օդին, լեռին ու ձորին նկարագրութիւնը մեր քով ունենալ, իրրև մասունք, և մեր ապագայ սերունդին իրր յիշատակ:

1917, 20 Սեպտեմբեր

Ուօրքքաուն

ՍԵՆԵՔԵՐԻՄ





## ԿԵՍԱՐԻԱ

### ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Հատ հայոց աւանդական պատմութեան, Հարմայի որդին Արամ Թազաւորի օրով, սկսած էր Հայկազունեաց տիրապետութիւնը, տարածուելով երկրին այլևայլ կողմերը, Արամի մասին առասպելական պատմուածքներ շատ են: Հայկազունեաց շրջանին մէջ Արամ Թազաւորն է եղած ամենաերկրաչէն արքան, ան կազմակերպած է և կսպ հաստատած երկրին մէջ ցրուած հայերու միջև: Արամ նահապետ յաղթած է շատ Թազաւորներուն և նուաճած է երկիրները, որոնցմէ գլխաւորն է, Կապադովկիոյ իշխանը. Պայապիս Բաղևայի դէմ պատերազմիլը: Արամ 60,000 զօրքով յարձակեցաւ Կապադովկիոյ վրայ. յաղթելով զայն փախցուց մինչև Միջերկրականին եզերքը: Այս յաղթութիւններուն վերայ Արամ սկսաւ ընդարձակել Հայաստանի արեւմբտեան սահմանը: Արամ իր դրաւած տեղերուն անունները կը կնքէր այսպէս: Առաջին Հայք, երկրորդ Հայք, երրորդ Հայք, չորրորդ Հայք, վերջէն ամէնքը միասին կոչուեցան Փոքր Հայք: Արամ նահապետ իր այս աշխարհակալած երկիրներուն վրայ կառավարիչ կարգեց Մշակ անուն երկրաչէն զօրա-

վար մը (1300 Ն. Ք.) և պատուիրեց որ բնակիչնե-  
րուն հայերէն լեզուն պարտաւորիչ ընէ և Զանայ  
հայացնել: Զօրավարին յանձնեց 10,000 զօրք: Մշակ  
նոր քաղաք մը հիմնեց իր անունով զոր յոյները չի  
կարենալով արտասանել Մաթաք կոչեցին: Քաղաք  
մը որ ետքէն Յունաց Յուլիոս Կեսարին կողմէ  
գրաւելով նորոգեցին, այդ ատենն էր որ Կեսարիա  
անունը առաւ: Հայոց կայսրութիւնը հիմնուեցաւ  
Մեծն Տիգրանի օրով: (84 Ն. Ք.) Տիգրան Մեծն էր  
որ իր նախորդներուն օրով կորսուած երկիրները  
սկսաւ գրաւել: Մեծն Տիգրան հասաւ մինչև Եգիպ-  
տոս, գրաւեց Պաղեստինի քաղաքները և հրէաները  
խոնարհեցուց իրեն: Հայոց դրօշակը կը ծածանէր  
Դամասկոսի, Տիրոսի և Փիւնիկեան ուրիշ քաղաք-  
ներուն վրայ: Տիգրանի օրով էր որ հրէա զաղթա-  
կանութիւն հաստատուեցաւ Հայաստանի մէջ: Տիգ-  
րան մեծ տիրեց Ասորոց վրայ, Ասորեստանցիները  
աննման բարգաւաճում մը վայլեցին Տիգրանի օ-  
րով: Տիգրան Մեծ աշխարհի տիրանալու միտումով  
կը քալէ Կիլիկիոյ վրայ Սելեւիկեան վերջին շառա-  
ւիղն ալ ձեռք ձգելու, Տիգրան շատ մը քաղաքներ  
հորձանեց Կիլիկիոյ մէջ և բնակչութիւնը Հայաս-  
տան տարաւ. այս ատենն էր որ Հայոց թագաւորը  
Մեծն Տիգրան երրորդ անգամ գրաւեց Կապադով-  
կիան, Մաթաք կամ Կեսարիա և ուրիշ քաղաքներ,  
որոնց մէջ գտնուած յոյն բնակչութիւնը թիւով մօ-  
տաւորապէս 300,000 քչուեցան զէպի Տիգրանա-  
կերտ, Արքայից Արքային նոր մայրաքաղաքը  
(77 Ն. Ք.):

Արշակունեաց հարստութեան ժամանակ, Խոսրով պատերազմի բռնուեցաւ Պարսից Շապուհ Ա. Թագաւորին հետ: Հայերը Դաշնակից էին Հռոմի Փիլիպոս կայսրին հետ, որ այս վերջինը հարկադրուեցաւ ամօթալի դաշինք մը կնքել, վատարար ծառնելով Հռոմի դաշնակից Հայաստանը Արքայից Արքային, Խոսրով ստիպուեցաւ առանձին շարունակել պատերազմը Շապուհին դէմ. Շապուհ հայոց զէնքին յաղթեւէ յուսահատ դաւաճանութեան դիմեց: Սուրէնեան տոհմի իշխաններէն մէկը Անակ Պահլաւունի (հայրը Գրիգոր Լուսաւորիչին) յանձն առաւ այդ անարդ դաւաճանութիւնը. ան բոլոր ընտանեօք Հայաստան եկաւ, պատրուակելով թէ Պարսից Թագաւորին ձեռքէն կը վախչի: Խոսրովին ազդականներէն ըլլալով անոր վստահութիւնը շահեցաւ և մեծ պաշտօններու տիրացաւ, օր մըն ալ դաշոյնի հարուածով սպանեց հայոց Թագաւորը: Խոսրով մեռնելէ առաջ յայտնեց դաւաճանին ով ըլլալը, հայ նախարարները իրենց Թագաւորին վերէժը առին Անակ Պարթևը և իր կուսակիցները կամուրջէն վար գահափոխելով և անոր սերունդը սրէ անցնելով: Այդ օրն էր որ Պարսից Թագաւոր Շապուհ Ա. ահարկու թշնամիէ մը ազատուեցաւ, Հայաստանի ճամբաները բաց դռնելով մտաւ երկրին մէջ. դուրս քնեց Հռոմէական զինուորները: Նախարարները սկսան փախչիլ, Արտաւազդ Մանդակունին Խոսրովի որդին Տրդատ Հռոմ փախցուց, իսկ Տաճատ իշխանը Արտաւազդի մէկ քոյրը Կեսարիա փախցնելով անոր հետ ամուսնացաւ: Արշակունեաց

վերջին ատենները Պարսից Վոամ թագաւորը, նանչնալով Հոռմի դերիշխանութիւնը Հայաստանի վրայ խաղաղութեան դաշինք կնքեց :

Դէռկղետիանոս կայսրը Հայոց թագաւոր նշանակեց Տրդատը և մեծ բանակով Հայաստան զրկուեցաւ, Կեսարիոյ մէջ զիմաւորեցին զինքը շատ մը Հայ նախարարներ, որոնցմով շրջապատուած իրբեւազատարար մտաւ Հայաստան :

Տրդատի ընդունակ մտքին քրիստոնէութեան լոյսը բերողն եղաւ Գրիգոր Լուսաւորիչ որ Տրդատի հօր սպանիչ Անակ Պարթևի որդին էր : Երբ Անակի սերունդը վրէժխնդիր Հայ նախարարներու ձեռքով բնաջինջ կըլլար, Գրիգորն էր որ միակ այդ ցեղէն ազատուեցաւ և իր ազատարարին ձեռքով Կեսարիա փոխադրուեցաւ. Կեսարիոյ մէջ Գրիգոր Լուսաւորիչ մեծցաւ Քրիստոնէական և Հէյլէն կրթութիւն ստանալով : Տրդատի վերադարձին անոր միանալով եկաւ Հայաստան : Տրդատի և Գրիգոր Լուսաւորիչի միջեւ տեղի ունեցած կարգ մը առասպելական պատմութիւններէ յետոյ Տրդատի բաղձանքով Գրիգոր Լուսաւորիչ 16 երեւելի նախարարներով հանդիսաւոր ընկերակցութեամբ Կեսարիա գնաց և Յունաց Ղեւոնդ մէտրոպոլիտին և ուրիշ եպիսկոպոսներուն, Հայոց եպիսկոպոսապետ կամ կաթողիկոս ձեռնադրուեցաւ (302 Յ. Ք.) :

Գրիգոր Լուսաւորիչի ձեռնադրուած եկեղեցին Սուլթան Ֆաթիհի օրով մզկիթի վերածուած է՝ ու կը կոչեն Հուսթ ճամիւքը, Կեսարիոյ մէջ ամենէն երեւելի մզկիթն է :


Կեսարիա ունի երեք հատ եկեղեցի. Ս. Սարգիս, Ս. Աստուածածին և Ս. Գրիգոր. եկեղեցիներու կողքին կան դպրոցներ: Կեսարիոյ կրթական գործը կանոնաւոր կերպով առաջ կը տարուէր այնպէս որ Կեսարիոյ դպրոցներուն մէջ ուսուցուած դասերը ուէ միսիօնարական հաստատութենէ բարձր է. Կեսարիոյ մօտ կար Ս. Կարապետ վանքը ուր կուսանին մէկ-երկու հարիւր աշակերտներ: Ս. Կարապետէն ուէ շրջանաւարտ յարգալիբ ընդունելութիւն կը դոնէ շրջանին մէջ ուսուցչութեամբ պաշտօնավարելու համար:

Կեսարիոյ մէկ մասը շրջապատուած է բարձր պարիսպներով, բոլոր քաղաքը դարդարուած է գեղեցիկ շէնքերով, պարտէզներով և զօրանոցներով: Վաճառականական տեսակէտով արեւելքի և արեւմուտքի կեդրոն մըն չր այն ժամանակին իսկ, ներկայիս ոչ այնքան, բայց կը շարունակէր իր համբաււոր վաճառականութիւնը նախանձելի կերպով: Կեսարիա ներկայիս Փոքր Ասիոյ մէջ ամենէն վաճառաշահ քաղաքն է. Կեսարիոյ ժողովուրդը հիանալի կերպով ճարպիկ է և գործունեայ: Հայերը որ համբաւ ունին իրրև վաճառականութեան ընդունակ ժողովուրդ, այդ համբաւը մեծաւ մասամբ կեսարացիներուն կը պարտին. Եւրոպա կամ ուրիշ տեղեր, Պօլիս մասնաւորապէս երևելի վաճառականները կեսարացիներ են. Կեսարիոյ շուկան շինուած է հիանալի արուեստական ձևով ոչ մէկ երկրին մէջ չէ կարելի տեսնել այդպիսի շինութիւն մը: Կեսարիա հեռզհեռէ մեծնալով պարիսպը մնացած է մէջը շատ պզտիկ սահմանով, իսկ թուրք տիրապետութենէն ի

վեր բոլորովին խարխուլ վիճակ մը ունեցած է. պարիպով շրջապատուած տեղերը կը բնակին թուրք ընտանիքներ: Թուրք հերամներուն մէջ եղող կիններուն համար կըսուի թէ, չեն գիտեր թէ հայը ինչ է. մարդ է թէ անասուն, անոնց համար բացարձակապէս արգիլուած է տունէն դուրս ելնել: Կեսարիոյ մէջ Հնչակեան կուսակցութիւնը բուսականաչափ դործ տեսած է, ոչ ոք չի կրնար ուրանալ, բայց պառակտումէն յետոյ անկաղճակերոյ վիճակ մը ունեցաւ, և այդպէսով շատ քիչ բացառութեամբ լուծուեցաւ. իրաւ է գոյութիւն ունէին քաղաքին և մէկ քանի գիւղերուն մէջ բայց պէտք եղած ուժը չէին ներկայացնէր: Զ. Յ. Գաշնակցութիւնը որ արդէն գոյութիւն ունէր, բայց Սահմանադրութենէ յետոյ սկսաւ տարածուիլ և զօրանալ. Գաշնակցականներու ձեռքով կը հրատարակուէր «Հայեկ» անունով շարաթաթերթ մը որ խիստ օգտակարութիւն ունեցաւ՝ մանաւանդ Ամերիկայի մէջ Կեսարացիներու համար որ մեր երկրին անցուդարձերուն տեղեակ կը պահէր: Բայց տաճկական պատերազմին առաջին օրը դադրեցաւ: Կեսարիոյ մէջ կար Զ. Յ. Գ. Քրիստափոր գրադարան մը որ քաղաքին ամէնահամբաւաւոր ակադը շինուած պատկառելի շէնք մըն էր: Կուսակցութիւնը օրէ օր աճեցաւ ու տարածուեցաւ քաղաքին և գիւղերուն մէջ: Կուսակցական դործերը առաջ կը տարուէր Նիրզէցի Վահան էֆ Քիւրքճեանի (Կեսարիոյ դպրոցներու ընդհանուր տեսուչ) եւ սօքթօր Սաչիկ Տէօվլէթեանի աշխատութեամբ: Թուրք զաղանութիւնը վերջ տուաւ այդ կենդանի աշխատութեան: Արամի օրով հաստատուած Կեսար

րիա մը մօտաւորապէս 3000 տարուայ կեանք ունի այսօր աւերակ դարձած է : Բնաջնջուած է նաև այն հսկայ վաճառականութիւնը և ոչնչացուած է հայ բնակչութիւնը : Բայց Կեսարիա առաջին անգամ չէ որ այս տեսակ փոթորիկներու կը հանդիպի . պատմութեան տեղեակ մէկը կրնայ գիտնայ թէ Կեսարիա եղած է Հայոց և Յունաց կոռուսինձորը միշտ աւերակ ըլլալու ենթակայ : Բայց կաղնիի պէս մնացած է հաստատ և ոչ մէկ փոթորիկ կրցած են սաստել զայն :

Մենք կեսարացիներս ենք որ պիտի երթանք, դարձեալ Կեսարիան վերակենդանացնելու և վաճառականութիւնը ծաղկեցնելու համար : Լիայոյս եմ որ մեր սիրելի հայրենակիցները չպիտի զլանան վերադառնալու այն երկիրը որ ունի իր ետև պատմութիւնը, հետեւապէս այդ հայրենիքը ամէն կեսարացիի համար պաշտելի է :



The ... of ... .. 1906



## Գ Լ ՈՒ Խ Ա.

## ՆԻՐՁԷ ԳԻՒՂԸ ԵՒ ՄԵՐ ՆԱԽԱՀԱՅՐԵՐԸ

Հնութիւններուն նայելով, նիրզէ գիւղը քանի մը հազար տարուայ կեանք ունի. մեր նախահայրերը կը պատմեն թէ, գիւղը կազմուած է ընդհանրապէս Տերսիեաւ, Կէօժուրկէն և Կասսիէն եկած գաղթականներէ:

Վերջերս եկած են 10 տուն գաղթականութիւն թոճարգաէն 1852 թուականին, ըստ հայկական աւանդութեան, գիւղին մէջ երկպառակութիւն իյնալով սկսած են պայքար մղել իրարու դէմ, հիներ և նորեր, վերջապէս յաջողած են թոճարգաէն եկող գաղթականները դուրս վճնտել գիւղէն, որոնք 4—5 տարի թուրք գիւղեր թափառած են:

Այն ատենուայ առաջնորդ Յակոբոս եպիսկոպոսի միջամտութեամբ դորձը կարգադրելով ետ վերադարձած են: Այն ատենն էր որ Յակոբոս եպիսկոպոսը լաւ մը ծեծած են Ս. Կարապետ վանքին մէջ, վերջապէս հաշտութիւն կնքելով 30—40 տարի խաղաղ կեանք ունեցած են, այն ատեններ գիւղը 50—60 տունէ կը բաղկանար:

Գիւղը ունեցած է շարք մը տէրտէրներ, որոնց կարգին է Տէր Ստեփան քահանայ. վախճանեալ Տէր հայրը շափազանց պահպանողական ըլլալով,

գիւղին մէջ ոչ մէկ դրական գործ չէ կատարած :  
 Միննոյն ատեն այնպէս ըրած է որ գիւղը բացար-  
 ձակապէս քառս մը դարձուցած է իր միակողմանի-  
 ութեան պատճառաւ . բայց գիւղացիներն ալ ան-  
 տարբեր չէին մնացած . բուն պայքար կը մղէին  
 Տէր հօր դէմ . քանի մը անգամ պատարագի ժամա-  
 նակ սեղանէն վար առնուած է, եկեղեցիի մէջ քանի  
 քանի անգամներ կոխ է ելած, Տէրտէրին անձին  
 դէմ կամ Տէրտէրին պատճառաւ : Սուլթան Համիտի  
 սորսապէն այնքան կը վախնար որ, Տէր Ողորմիաի  
 մէջ երգուած այն նախադասութիւնը թէ, «Ազգիս  
 Հայոց ազատութիւն» երգել կուտար, «Ազգիս  
 Հայոց սէր միութիւն» : Պատահած են նաև իր հոգե-  
 ւոր հովիւ եղած ժամանակ, կարգ մը բացասական  
 դէպքեր, որոնք զանց կընեմ գրքոյկիս մէջ առնել :  
 Վախճանեցաւ Տօտաւորապէս 1905 թուականին :  
 Տէր Ստեփան քահանայի վախճանելէն յետոյ, գիւ-  
 ղացիներ 5—6 հատ տէրտէրութեան թեկնածուներ  
 ներկայացուցին, որուն պատճառաւ գիւղացիներ  
 ուն մէջ վէճ մը բացուելով, իրար չէզոքացուցին  
 և ոչ մէկը յաջողեցաւ, ստիպուեցան դուրսէն բե-  
 րել . դուրսէն եկածներուն շարքին կը պատկանէր  
 Տէր Գարեգին քահանան . յիշեալը ազատամիտ, յե-  
 ղափոխական, խրոխտ և քաջ տէրտէր մըն էր, որու  
 նմանը շատ քիչ անգամ կը գտնուի . Տէր հայրը Ա-  
 տանայի ջարդին ատեն ոչ թէ ջանաց գիւղը կազմա-  
 կերպել, այլ ինքը իւրացուցած էր պօսպայ շինելու  
 յատկութիւնները, տասնեակներով շինելով ծախեց  
 թէ գիւղացիներուն և թէ դուրսի հայերուն, բայց


դժբաղդաբար մատնուեցաւ կառավարութեան,  
բայց ազատ արձակուեցաւ շնորհիւ իր ճարպիկ լեզ-  
ուին:

### ՆԻՐՁԻՒ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Նիրգէի մէջ հարսանեկան տարօրինակ սովո-  
րութիւն է որդեգրուած. մանրամասնութեան չը  
մտնելով հարեւանցի ըսեմ որ բացարձակապէս ազ-  
ջրկան կողմը կողոպտել էր, այնպէս որ դիւղին մէջ  
աղջիկ հարս ընողը տղայ ամուսնացնողի չափ ծախ-  
սի կ'ենթարկուէր: Միայն երեւոյթապէս լաւ տպա-  
ւորութիւն թողողը այն է թէ, կիրակի առաւօտուն  
երբ եկեղեցիին մէջ պսակի արարողութիւնը լմննայ,  
փեսային կը հազցնեն եկեղեցիի ճերմակ շապիկ մը,  
ձեռքը սրարմաշէք մոմ մը, կը կանգնի Տէրտէրին  
մօտ, բոլոր հանդիսականները առանց բացառու-  
թեան նոր փեսային թազը կը համբուրեն:

Իմ հետ մէկտեղ հազարաւորներ այնպէս հա-  
ւատացած են թէ, նոյն օրն է որ նորապսակ ամուլ-  
ները կղզան թէ նոր աշխարհ են եկած: Ո՛հ, արդ-  
եօք ամէն երիտասարդ պիտի արժանանայ այդ փառ-  
քին և վայելչութիւններուն զոր մարդկային կեան-  
քին մէջ թագաւորութիւն կ'անուանեն:

Յետոյ բոլոր ժողովուրդը եկեղեցիին դաւիթը  
կըստասէ փեսային դալստեան. և ահա հրաշափա-  
ռով փեսան դուրս կուգայ, հարսը իր կողքին, շատ  
մը երիտասարդ հայուհիներով շրջապատուած որ  
(ենկէ) կ'անուանենք, և ահա տէրտէրով մէկտեղ,  
բոլոր տիրացուներ առաջ կ'իյնան, եկեղեցական



A II 32298

2704

զանգակը ի ձեռին, երգելով եկեղեցական հրաշալի երգեր, ժողովուրդը կը հետեւի փեսային, մի ոգևորութիւն կը տիրէ ներկաներուն սրտին մէջ: Հարսը ինչպէս ըսի կիներէ և օրինորդներէ շրջապատուած դանդաղ քայլերով կը հետեւին ժողովուրդին: Արդեօք այդ պահուն ո՞ր մէկ երիտասարդի միտքէն չանցնիր այդ բազդին արժանանալու պատուած դանդաղ քայլերով կը հետեւի ժողուրսելու թէ, ճամբուն վրայ աղղականներ և բարեկամներ, օդի և կամ դինի կը պատրաստեն ճամբորդ հարսնետրները պատուելու համար:

Գիւղին մէջ սովորութիւն է դարձած հարուստ թէ աղքատ անպայման հարս ու փեսային ոտքը աքաղաղ մը մորթելու. ասոնք միսիթարական երեւոյթներ են, իսկ կան խայտառակութիւններ ալ բայց զանց պիտի ընեմ այդ բացասական կողմերու մասին գրել:

### ՆԻՐՁԷԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ճշմարիտ է, Նիրզէի մէջ Հնչակեան կուսակցութիւնը գոյութիւն ունեցած է, բայց հազիւ քանի մը ամիս մնալով օդին մէջ է ցնդած, և վերջէն բոլորովին անհետացած է շնորհիւ Սուլթան Համիտի սարսափներուն:

Գիւղը առանց կազմակերպութեան է մնացած մինչև 1908 թուականը, եւ ահա Սահմանադրութիւնը հռչակուելէն քիչ վերջը, գիւղին մէջ կարգ մը երիտասարդներու աշխատութեամբ, կը կազմուի միութիւն մը, որ նպատակ կունենայ վառօդ և զէնք

Հայթայթեւ տեղւոյն մէջ: Միութեան անունն էր, «Հայ Յառաջդիմասէր Երիտասարդաց Միութիւն»: Սկսեցին անդամներ գրել, շարաթը անդամ մը լսարանական և դասախօսական ժողովներ սարքել, այնպէս որ 30—40 անդամներ ունեցած են, միւսնոյն ատեն գիւղացիներուն բաւականաչափ ուշադրութիւնը դրաւած էին: Եւ ահա Հազիւ ամիս մը շանցած ստեղծուեցաւ երկրորդ միութիւն մը որուն անունը մկրտեցին ..... այսպէսով սկսեցաւ պայքարը խօսքով ու գրիչով, այսինքն թոուցիկներով, այնպէս որ իրար գործունէութիւնը կը խաչաձեւէին, շատ անգամ ժողովներուն մէջ կ'ուր կը ծագէր և իրար աթոռ կը քաշէին, վերջապէս չեղած խայտառակութիւններ:

Իրազեկ աղբիւրէ կիմանամ թէ այդ ատենները Տօթթօր Խ. Տէօվէթեան միջամտած է իր ներկայացուցիչին միջոցաւ, բայց չէ յաջողած: Քանի մը ամիս պայքարելէ յետոյ իրար հասկնալով միացած են: Բայց անդամներուն շատերը հրաժարած էին անտեղի պայքարէն զուեւելով, այնպէս որ հրապարակաւ կը յայտարարէին թէ «մի անգամազրուիք, տուած դրամնիդ աթոռի և սեղանի կուտան իրիկունները իրարու մօտ գալով ժողովի պատրուակին տակ տանձ, խնձոր կուտեն» . որքան որ միացան դժբաղդարար ոչ մէկ դրական գործ չեն կատարած, քանի մը օխա վառօղ և այլն որ ունէին, այն ալ այսինչ կամ այնինչ անհատներուն վրայ մնաց, առանց ոչ մէկ պատասխանատուութեան:

## 1909 ՔՈՒԱԿԱՆԸ

Խեղճ Նիրզէցիները Սուլթան Համիտի սարսափներէն այնքան վախցած էին որ, միութեան կամ կուսակցութեան խօսք ընողը սաստիկ կերպով կը սաստէին, այնպէս որ նոր սերունդը որ երեւան եկաւ, կատարեալ պահպանողական մի երիտասարդութիւն էր:

Տարիներու ընթացքին մեր քոյր գիւղացիները բոլորն ալ կազմակերպուեցան, Հ. Յ. Դաշնակցութեան դրօշակին տակ, բայց մեր գիւղին մէջ ոչ մէկ ձայն. Տօքթօր Տէօվլէթեան քանի մը անգամներ դիմումներ ըրած է, բայց յուսահատ կերպով ետ վերադարձած է. այդպէս չի մնաց:

Ահա եկաւ Ատանայի ջարդը որ մեր գիւղացիները ոչ մէկ պատրաստութիւն չունէին, միեւնոյն ատեն կզգային թէ ոչխարի պէս պիտի ջարդուէին, եթէ ուէ դիմադրութիւն չընէին, նկատելով այդ պարագան, անմիջապէս կը փութան համագիւղացիական ժողով մը սարքել, գիւղին մեծամեծներէ բաղկացած, ժողովին կը մասնակցէին նաև փորձառու զէնք դորժածողներ և հին յեղափոխականներ, վերջիներու կարգին կար հանրածանօթ մօրեղբայրս Մ. Պօղոս Հաճի Սարգիսեանը, ժողովի մինակ օրակարգը կ'ըլլայ, գիւղը ի՞նչ գիրք պիտի բռնէ թուրքերու կողմէ յարձակման ժամանակ. երկար վիճարանելէ յետոյ որոշ եզրակացութեան մը չեն կրնար դալ: Վիճարանութեան նիւթը կը կազմէ հարուստներէն դրամ առնել, որպէսզի զէնք զնուի, արդէն ժողովին մեծամասնութիւնը հարուստներ

ըլլալով չընդունուիր այդ առաջարկը, իսկ փորձառու Հաճի Պօղոսին առաջարկն ալ բացարձակապէս կը մերժեն — այն էր թէ, փոխանակ Հարուստներուն կամ աղքատներուն դիմելու ամենէն դիւրին միջոցը կայ. այս է. վաղը թշնամին եթէ դայ, ոչ հարուստ կը ճանչնայ և ոչ ալ աղքատ, ոչ դպրոց կը ճանչնայ և ոչ ալ եկեղեցի: Քանի որ այդպէս է մեր եկեղեցին ունի շատ մը ոսկի խաչեր և զանազան անօթներ, եկէք քանի մը հատը ծախենք որ ոչ մի բան չի պակսիր եկեղեցիէն, այն ատեն նպատակնուս դիւրութեամբ կը հասնինք կ'ըսէ Հաճի Պօղոսը, բայց աջէն ձախէն կ'սկսին պօռալ. «Աստուած իմ խաչը ծախել, այս ինչ անհաւատութիւն է»: Վերջապէս չեն կրնար համաձայնիլ և զործը կը վիժի. ժողովէն կը ցրուին առանց ոչ մէկ գործ տեսնելու:

Վերջէն կը յայտարարուի թէ իւրաքանչիւր տուն իրեն կարողութեան ներածին չափով, զէնք պէտք է առնէ ինքնապաշտպանութեան համար, այդպէսով կարգ մը երիտասարդներ եւ ծերեր հին քախմախով զէնքերով եւ քանի մը մարքիճններով կսկսին պահակ պատիլ: Բարեբաղդաբար ոչ մէկ զէպք չէ պատահած, թէ ոչ ոչխարի պէս պիտի մորթուէինք:

### ԵՐԿՐԱՇԱՐԺԸ

Մեր պապերը կը պատմէին թէ 1846ի ատենները երկրաշարժ մը եղած է որ տեւած է 3—4 օր մերթ ընդ մերթ սարսելով տուները, և դիւղացիները ստիպուած են կալը երթալ և շարաթներով հոն

րնակիլ վրաններուն տակ : Միևնոյն ատեն քանի մը Հոգի և քանի մը տուներ զո՛հ դացած են այդ երկրաշարժին :

### ՆԻՐՁԻ ԶՈՒՐԵՐԸ

Նիրգէ գիւղը կը գտնուի Կեսարիոյ Հիւսիսային արեւելեան կողմը երեք ժամ հեռաւորութեամբ, գեղեցիկ ձորի մը մէջ շինուած է, այգիներով և պարտէզներով շքապատուած գիւղ մըն է :

Չորին մէջէն կ'անցնի առու մը ջաղացք մը դարձընելու զօրութեամբ : Այդ առուն երեք-չորս գիւղերու այգիները կը ջրէ. օգտաշատ ջուր մըն է, որուն համար շատ անգամներ արիւնահեղութիւն եղած է, կոիւր ամէն օրուայ գործ է այդ ջուրին համար. ջուրին անունը Կոկօ (Սալղմայ սուեռ) Սալղմայ ըսուած թրքարնակ գիւղին մէջն է ջուրին ակը : Կ'օգտուին հետեւեալ գիւղերը. Սալղմայ օրական երկու ժամ, Նիրգէ շաբաթ և ուրբաթ օրերը. Կասսի կիրակի, երկուշաբթի և երեքշաբթի, իսկ Մանճոն, չորեքշաբթի և հինգշաբթի օրեր. այսպէս դասաւորուած է ջուրէն օգտուելու պարագան : Գիւղերուն մէջ առանց բացառութեան հերթին պիտի սպասես : Նիրգէի մէջ չի կայ մէկը որ այգի կամ պարտէզ չունենայ :

Ինչպէս ըսի, Նիրգէ գեղեցիկ դիրքի մը վրայ շինուած ձորի մը մէջն է. օդը մաքուր և լաւ դասաւորուած փողոցներ ունի, առանց բացառութեան բոլոր փողոցները դառի վեր են : Կեսարացիները ամառը օգափոխութեան կուգան, գիւղին բո-



լոր տունները քարաչէն են . պարզ մետաղաքար զեղեցիկ տաշուած քարերէ : Ընդհանրապէս քարակոփեր կը պատրաստեն մաքուր սիւներ և սեմեր : Քաղաքին և գիւղերուն մէջ ճարտարապետութիւնը բաւական առաջ կացած է , շուկաները մաքուր քարերով պատրաստուած են :

### ԷՐՃԻԷՍ ԼԵՌԸ

Էրճիէս լեռը Ասիոյ մէջ առաջին բարձր լեռներէն մէկը կը նկատուի . իր գագաթին վրայ միշտ ձիւնը անպակաս է , այնպէս որ այդ ձիւնին շնորհիւ կեսարիա , Թալաս և շատ մը ուրիշ գիւղեր մաքուր և զով ոչ կ'ունենան : Հազարաւոր հարուստներ ամառը օդափոխութեան կ'երթան : Թուրքերը այս լեռան անունով թերթ կը հրատարակեն կեսարիոյ մէջ :

### ՆԻՐՁԷԻ ԴՊՐՈՅԸ

Ինչպէս ուրիշ վայրեր , նոյնպէս Նիրզէի մէջ ալ դպրոցը շատ յետամնաց էր , մինչև մօտաւորապէս 1895 թուականները , այնպէս որ Սաղմոս , Ժամադիրք էր աշակերտներուն դասագրքերը , բայց վերոյիշեալ թուականէն սկսեալ Նիրզէցիներ սկսեցին զէպի յառաջգիմութիւն , եկեղեցիին կողքին կառուցին դպրոց մը , որ իրեն բարձրութեամբ և օդին մաքրութեան տեսակէտով Նիրզէի մէջ առաջինն է . դպրոցը ունի սերտարան մը 150—200 աշակերտ դիւրութեամբ կրնան տեղաւորուիլ . ունի դասարան

հիւրանոց, և քանի մը ուրիշ սենեակներ. ասոնց կողքին կայ մութ և խոնաւ անկիւն մը որ սատանայատուն (ճիշիկ) կ'անուանենք, հոտ ալ օրինազանց կամ անպարտաճանաչ աշակերտներ կը բանտարկեն, ունի նաև գեղեցիկ պարտէզ մը, որ ուսուցիչները իրաւունք ունին դործածելու: Իսկ հին դըպրոցը որ փլատակ եղած է, հոն ալ զբօսավայր էինք դարձուցած օրական կէս ժամ:

Եկեղեցին որքան որ նոր շէնք չէ, բայց շատ գեղեցիկ շինուածք ունի, այնպէս որ իր դիրքին ժիջոցաւ բոլոր գիւղին վրայ կ'իշխէ: Վերջերս շինուած է զանգակատուն մը, որու զմայլելի ձայնը կէս ժամուայ տեղ կը հասնի:

Դպրոցը ինչպէս որ ըսի նորոգուելով ուսուցիչներն ալ սկսան նորոգուիլ, այնպէս որ այն առաջուան Սաղմոսը և ժամագիրքը մէջտեղէն վերցան. կանոնաւոր դասագիրքեր մուտք դտան դպրոցին մէջ. դպրոցին պիւտճէն առաջ հազիւ 15—20 ոսկիի կը հասնէր, բայց 1910 թուականներուն պիւտճէն բարձրացած էր մօտաւորապէս 100 ոսկիի. այնպէս որ նախանձելի կեանք մը ունեցած է դըպրոցը վերջերս: Դպրոցին մէջ կ'ուսուցուէր հայերէն, տաճկերէն, անգլիերէն և ֆրանսերէն. դպրոցը կ'ունենար 2—3 ուսուցիչներ:

Ռոճիկներն կ'ստանային առաջները, բոլորն ալ եկեղեցիէն, բայց վերջերս բոլոր աշակերտները իրենց կարգին համեմատ կը վճարէին:

Նիրդէի մէջ մի բարի սովորութիւն ալ կայ. ամէն կիրակի դասատուները տուն կը հրաւիրեն հիւրասիրելու համար: Գիւղին մէջ յոռի բնաւորութիւն

մը կար, այն էր թէ ուէ դասատու երկու տարիէն աւելի չեն պահեր . արդէն այդ երկու տարուայ շըրջանին անպայման պոչ մը կ'անցնեն, և այդ պատճառաւ աշակերտներ բան մը չէին կրնար սորվիլ, որովհետեւ դասատուն որ փոխուեցաւ, դպրոցին սխտէմն ալ կը փոխուի և աշակերտներ ևս կը մընան: Ահա գլխաւոր պատճառը գիւղական դպրոցներու առաջ չ'երթալուն:

## ՆԻՐՁԷԻ ՄԱՐԳԱԳԵՏԻՆԸ

(ՆԻՐՁԷ ԶԱՅԸՐԸ)

Նիրդէն այլ և այլ կողմեր մարդագետիներ ունենալով մէկտեղ ունի նաև հռչակաւոր Նիրդէ Զայըրը անունով մարդագետին մը, Ս. Գրիգորէն ելլող ջուրը մէկ բոպէ վազելով կուգայ Նիրդէ Զայըրը: Այդ մարդագետինը բնութեան կողմէ այնպէս մը շինուած է որ, այդ գեղեցիկ ջուրը կուգայ եւ կը շրջապատէ մարդագետինը: Գարունին կ'սկսին գոյնզգոյն ծաղիկներ երեւան ելլել և հոտը չորս կողմերը կը բուրէ. Մայիսէն յետոյ դպրոցին աշակերտները կ'սկսին խաղ խաղալ, կիրակի օրեր, գիւղին բոլոր երիտասարդութիւնը գրեթէ հոն ներկայ կ'ըլլայ, տեսակ տեսակ խաղերով կ'գրադուին:

Վարդավառի տօնը որ Ս. Կարապետի անուանակոչութեան տօնն է, ուխտաւորներ կուդան Փոքր Հայքի ամէն կողմէն. կիրակի օր վանքին պարտէզներուն մէջ և դրան առաջ կանցնեն ժամանակնին, խիկ երկուշարթի մեռելոց օրը, բոլոր ուխտաւորներ, շրջակայ հայ, թուրք գիւղացիներ կը հա-



ոսան առաջ կան շատ մը գերեզմանաքարեր, որոնց  
 համար կ'ըսուի թէ, Գրիգոր Նիւսացի հայրապե-  
 տին գերեզմանն ալ հոն է: Վանքը ունի իր դռան ա-  
 ռաջ բաւական տարածութեամբ հող մը, ուր կրնայ  
 տուն կամ դպրոց շինուիլ: Իր մէջ ունի գեղեցիկ  
 պարտէզ մը, ուր գիւղին տէրտէրը իրաւունք ունի  
 վարուցան ընելու: Վանքի մասին մեր մամերը պատ-  
 մութիւն մը կը պատմեն թէ, վերջերս վանքին մէջ  
 կայ եղեր վանահայր մը, ինչպէս ըսի վանքին առջև  
 կայ տաք ջուր, ձմեռը տիկիներ և օրիորդներ լը-  
 ուացքի կ'երթան Ս. Գրիգորի ջուրը, օրին մէկը  
 տիկնոջ հետ կ'երթայ իր 4—5 տարեկան երեխան-  
 երեխան հոն կենալով կը մսի կամ կը ձանձրանայ  
 կ'սկսի լալ, վերէն վանահայրը պատուհանէն կը դի-  
 տէ եղեր. երեխային վրայ ցաւելով իր քով եղած  
 խնձորներէն մէկ հատը վար կը նետէ, որպէսզի ե-  
 րեխան ձայնը կարէ. ատոր վարջ հոն ներկայ եղող  
 տիկիներ կասկածելով վանահայրի անկեղծու-  
 թեան կամ չարափոխելով վանահօր բարիքը կ'եր-  
 թան գիւղը կը պատմեն, և ահա նախապաշարուած  
 խաւարամիտ գիւղացիները յաջորդ օրը խեղճ վա-  
 նահայրը կ'աքսորեն վանքէն, այդպէսով վանքին  
 մէջ ոչ մէկ վարդապետ չի մնար. վարդապետը ա-  
 նիծելով Նիւսայ գիւղը կ'երթայ:

### ԿԱԹ—ԱՂԲԻԻՐԸ

Գիւղէն 10 բուպէ հեռաւորութեամբ դէպի հա-  
 րաւ արեւելք, այդիններու մէջ կամարածեւ շինուած  
 կիսախարխուլ մի աղբիւր է, որուն շուրջ նախապա-

չարուճներով լեցուն է. աղբիւրի մօտ ապառաժի վրայ կայ գերեզմանաձև փորուածք մը, որուն համար կ'ըսուի թէ Ս. Աննայի գերեզմանն է եղեր: Կաթ-Աղբիւրի ջուրը սաստիկ պաղ ջուր մըն է, այնպէս որ մօտակայ տեղերէն մասնաւորապէս ջուր խմելու կուզան ամառ ատեն: Աղբիւրի պաշտօնական օրը մայիս 7-ին է: Յիշեալ օրը բոլոր Նիրզէցիներ առանց բացառութեան, առաւօտեան արշալոյսին, իրենց կովերը առնելով Կաթ-Աղբիւր կը տանին որպէսզի կաթը շատնայ: Իսկ կէս օրին՝ դարձեալ բոլոր գիւղացիներ՝ տէրտէրով-վարժապետով և դպրոցի բոլոր աշակերտներով կ'երթան վերոյիշեալ աղբիւրը: Հոն մատաղ կը մատուցուի, աշակերտները կ'երգեն, հարսեր ու աղջիկներ պար կը բռնեն, պղտիկներ տեսակ-տեսակ խաղեր կը խաղան: Այդ օրն ահա Նիրզէն ամբողջովին եռուզեռի մէջ է, ուրախութիւնը չափ ու սահման չունի: Կը դանուին երբեմն նոր տղայ բերող տիկիներ, որոնց կաթը եթէ քիչ ըլլայ և կամ բոլորովին չէ մնացած, անմիջապէս Կաթ-Աղբիւր կ'երթան կամ մարդ կը դրկեն ջուր բերելու որ այդ ջրով ծիծերը լուայ ևւ քիչ մըն ալ խմէ, այդպիսով կաթը շատնայ: Խեղճ նախապաշարուճներ և յիմար մտածումներ: Սա ալ ըսեմ թէ երբեմն բախտին բերումով կը պատահի որ կաթը շատնայ և այդ մէկ պատահումը պատճառ կ'ըլլայ որ հազարներ ալ այդ միջոցին դիմեն:

Կը դանուին երիտասարդներ, որոնք ձիերով կ'երթան օրիորդներուն երևալու համար: Իսկ նըշանուած կամ նշանուելու թեկնածուներ եթէ ուրիշ քաղաքներ ալ դանուին, այդ օրը անպայման կու-

զան. շէ՞ որ բոլոր օրիորդները հոն ներկայ են եւ պար պիտի բռնեն: Եւ ահա այսպէս պարելով, խաղալով, երգելով և միևնոյն ատեն մատաղ ուտելով վերջալոյսը կը մօտենայ. եկեղեցիի ժամանակ է: Տիկիներ և օրիորդներ տուն կը դառնան, իսկ եթէ այդ օրը եօթ կաթիլ անձրեւ եկաւ, գիտցիր դպրոցի աշակերտներ երգելով եկեղեցի կ'երթան: որ մատաղն ընդունելի է, և այդ տարին առատութիւն պիտի ըլլայ:

### ԾԱԿ ՔԱՐԸ

Ծակ Քարը գիւղէն հինգ բոպէ հեռաւորութեամբ դէպի արևմուտք ձորի վրայ դետեղուած մի ապառաժ է, որուն չորս կողմը ծակ է: Եթէ ըլլան երեխաներ, որոնք քուն չունենան, անմիջապէս կը փութան Ծակ Քարը, և հոն մի քանի աղօթքներով մէկտեղ Ծակ Քարէն կ'անցնին: Այս ալ՝ Կաթ-Աղբիւրի նման պատահի որ երեխաներէն մին լաւ քրնանայ, հրաշքը կատարուած է:

Որք եկեղեցին (էօքսիւզ ժամ) գիւղին ճիշտ գիմացը քարէ փորուած եկեղեցիի ձեւով հին շինութիւն մըն է, Կաթ-Աղբիւրի և Ծակ Քարի մէջտեղ: Կը պատմուի որ, շարաթ օրեր իբրև թէ մի լոյս, լապտերի ձեւով Ծակ Քարէ կ'ելլայ էօքսիւզ ժամ, յետոյ՝ Կաթ-Աղբիւր... Մինչև 19 տարեկան հասակիս գիւղն էի և սակայն օր մը իսկ չեմ տեսած... և ինձ հետ շատեր՝ չեն արժանացած այդ բախտին: Զարմանալին այն է թէ ո՞վ է տեսեր որ խեղճ կիները իբրև նշմարտութիւն կը հաւատան:

## ՆԻՐՁԷԻ ԴԻՐՔԸ

Ինչպէս ըսած եմ, Նիրզէ ձորի մը մէջ և քիչ մը կողքին շինուած գեղեցիկ քարաշէն տներ ունի և այս տները մեծ մասով գրեթէ իրար միացած են թէ տանիքով, և թէ տակէն... քարայրներով. ասոնցմէ զատ 5—10 բուլէ հեռաւորութեան ահագին մեծութեամբ շինուած քարայրներ կան, այնպէս որ 1—2000 հոգի մէջը կրնան ապաստանիլ: Ինքնապաշտպանութեան տեսակէտէն շրջակայ շատ մը գիւղերէն աղէկ է: Աւա՛ղ որ ժողովրդին վրայ այդ հաւատքը չը կայ: Նիրզէցին ընդհանրապէս կ'ըրաղի երկաթագործութեամբ, դանակագործութեամբ, կտաւագործութեամբ, կան խանութպաններ և վաճառականներ, իսկ հողագործութեամբ գրեթէ պարապող չը կայ, այնպէս որ հայերուն արտերն ալ տաճիկները կը վարեն, կը ցանեն: Գիւղի մեծամասնութիւնը միջակ դասակարգին կը պատկանի, հարուստը շատ քիչ է, և աղքատ ալ բնաւ չկայ: Ժողովուրդը հիւրասէր է և ճակատագրապաշտ: Գիւղին մէջ արտերէն աւելի այգիներն են ուշագրաւ, որոնք կը շրջապատեն գիւղը շորս կողմէն: Եթէ տանիք մը ելնես և շորս կողմը դիտես, մանաւանդ դարուն ատեն, պիտի տեսնես ահագին տարածութեան վրայ կանաչութիւն մը որ ընդհանրապէս ծառերէ կը բաղկանայ — խնձորենի, տանձենի, ծիրանի, սալորենի, ընկուզենի և այլն: Ամէն տուն, ասանց բացառութեան քիչ կամ շատ այգի ունի, ըլլայ խաղողի կամ այլ ծառերու, այնպէս որ պտուղի ժամանակ ոչ ոք չի նեղուիր:



## ՄԵԾ-ՊԱՀՔԻ ԵՐԿՈՒՇԱԲԹԻՆ

Ներդէի մէջ սովորութիւն մը կայ որ երիտա-  
 սարդներուն համար շատ դեղեցիկ և միանգամայն  
 հաճոյալի է: Մէկ տարուայ մէջ ով որ հարսնիք ը-  
 րաւ անպայման բարեկենդանի օրը դարձեալ նոր  
 հարսնիքի պէս խնճոյք մը պիտի ընեն տանիքներու  
 վրայ երկսեռ խմբով, պարեր կը բռնեն, վայտ կը  
 վառեն, ահազին բոց կը բարձրանայ և ատոր շուրջ  
 կը դառնան պարելով: Մի քանի ժամ ետք վար կ'իջ-  
 նեն հարսանիքի տունը, կ'ուտեն, կը խմեն, գրեթէ  
 մինչև առաւօտ կը զբաղուին: Այդքա՛ն յոգնած  
 մարդիկ, մանաւանդ երիտասարդ դասակարգը կը բ-  
 նա՞յ առաւօտուն կանուխ եկեղեցի երթալ, շա՛տ  
 դժուար է անշուշտ, ատոր համար որոշուած է՝ է-  
 րիկ մարդոցմէ ով որ բացակայ է եկեղեցիէն—տէ՛րն  
 ինք ողորմի—կ'երթան տնէ-տուն, ուր որ է կը զըտ-  
 նեն, հոգ չէ՝ հարուստ կամ աղքատ՝ պայմաններ  
 կ'առաջարկեն:— 1. Էջն հեծնալ և պոչը ձեռք առ-  
 նել. 2. Սանդուխի վրայ կապած գիւղին մէջ պտըտ-  
 ցընել. 3. Եկեղեցիին որոշ տուգանք տալ. 4. Գոան  
 առջև հաւաքուող բազմութեան մէկ-մէկ նուէր տալ:  
 5. Պարագլուխները կաշառել: Այս պայմաններէն  
 մէկ կամ միւսը պէտք է կատարուի թէ ոչ՝ բռնի ու-  
 փի կը դիմեն և շատ անգամ կոխ կը պատահի: Եթէ  
 եկեղեցի չգացողներուն մէջ գանուի մէկը՝ վա՛յ  
 գլխին. առանց զինք խօսեցնելու անմիջապէս զո-  
 քանչին տունը կը տանին և մեծ ծախսի կ'ենթար-  
 կեն:

## 1896-ի ԴԵՊՔԸ ՆԻՐՁԷԻ ՄԷՁ

1896-ին, ինչպէս ուրիշ տեղեր, նոյնպէս Նիր-  
զէն ենթարկուեցաւ թուրք խուժանի կողոպուտին։  
Դէպքը բաւական մեծ է եղած, բայց դժբաղդարար  
այդ ատեն դեռ խելահաս չըլլալուս ոչ մի դէպք եւ  
դէմք չեմ յիշեր, միայն պատմուածքներէն իմացած  
եմ թէ զիւղին մէջ թալանուած են հազիւ 5—10  
տուն, աչքի զարնուող տուներ, և սպանուած քա-  
նի մը հողի՝ որոնցմէ կը յիշեմ.— Եղիա աղա Ասըլ-  
պէկեան, Արապեան Օղլու և մէկ ուրիշն ալ՝ հասի  
Յակոբ Ասլպէկեան։ Յիշեալը չեն սպաննած թէ-  
պէտ, բայց այնպէս են մանրեր ոտքերը փաստրմայի  
պէս, որ 5—10 տարուայ մէջ մի քիչ առողջացաւ չա-  
փազանց կաղ վիճակով, միևնոյն ատեն խելքն ալ  
քիչ մը թեթեւցած էր կ'ըսեն։

Այդ դէպքի ատեն քիչ տուն կողոպտուելուն և  
քիչ մարդ սպանուելուն պատճառը բացարձակապէս  
թուրքերն են. եթէ այդ մարդիկ չըլլային,  
խուժանը պիտի լմնցներ մեր դործը մէկ օրուայ  
մէջ։ Քանի մը թիւրքեր զէն ի ձեռին փողոցներուն  
բերանը կը կենան և երգում կ'ընեն եկողը զարնել  
այսպիսով կարող մը թաղեր կ'ազատեն։ Կը պատմեն  
թէ նոյն օրը հայրս տուն կուգայ ուրիշ տեղէ Աւշար  
մը կը բերէ, զիւղացիները կ'իմանան թէ քաջ մարդ  
մը եկեր է մեր տունը, կ'սկսին հաւաքուիլ այնպէս  
որ տունը (ինչպէս առածը կ'ըսէ) ասեղ ձգելու  
տեղ չի մնար։ Այս մասին պէտք է երկար դրէի,  
բայց ինչպէս առաջ ըսի, չեմ յիշեր ոչ մէկը։

## ԴԱՐՁԵԱԼ ՏԵՐՏԵՐԻ ՀԱՐՑ

Ինչպէս նախորդ էջերու մէջ ըսած եմ թէ Տէր Ստեփան քահանայի վախճանումէն ետք, Նիբղէցին մնայուն տէրտէր չէ ունեցած, այլ միշտ դուրսէն է եկած մէկ-երկու ամսուան կամ տարուան համար: Գիւղացիք տեսնելով որ անտանելի է այդ կեանքը, հողեւոր հովուի մը ներկայութիւնը անհրաժեշտ է ընդմիշտ, դարձեալ հարց կը ծագի գիւղացիներէն մին ընտրել: Կանխաւ ըսեմ որ այդ թուին ես եկած էի Ամերիկա, ինձ զբաժ են ձանրամասնութիւնը, փոխանակ ես պատմելու նամակը նոյնութեամբ կը դրեմ հոս.

(ԱՄՓՈՓՈՒՄ)

Նիբղէ, 1912 Փետր. 12

Սէվկիւիւ վէ արգուլու

Ետլրուլարմ Սենեքերիմ վէ Վահան էՖ.ւեր.

Բարեկենդանը Բաղար կիւնիւ Հաճի Պէյի նշան-լատդ, տարբոր սիգէ օլտուն, Հաճի Սարգիսեան Մարեանինին զըղնայ:

Մեծ-պահքն երկուշարթի կիւնիւ ժամայ կիթ-տիմ թէրս էչէկին զօրգուսընտան, օլ կիւնի պէօյիք զավկայ օլտու ժամասայ: Սէպէպ նէտիր տէրսէն սիգէ նազլ իտէիմ օլմուշլու կիպի, պիբ տազմ իչէ զարչան ատէմլէր & թանէ տէրտէրլիք սէչերլէր. Անդրէաս, Եղիազար, Սիմօն էՖ. Ալէքսիեան Կարապետ. պու իչէ պազանլար տր. Յարութիւն պէյ,

Մկրտիչ էֆ., Իքի Գէիչ օղու, վէ Բախլըօղու,  
 պունլար Հէրիսիտէ Անդրէաս Թարաֆը տըրլար, վէ  
 խթէրլէր քի քուէ վերէն քիմսէլէր 25 եաշընտան ա-  
 շաղը օլմամալը. պունուն իւղէրինէ էհալի իթտաա  
 էթտի քի 15 եաշնտայ օլմալը, մէկէրսէ Հիսապ էթ-  
 միշլէր քի Անդրէաս Թարաֆնտայ օլանլար Հէփ  
 պէօյիւք տրլար 15 եաշնտայ եօզ տր: Պունուն իւղէ-  
 րինէ, ժամն դաւիթինտէ դավկայ պաշլար. օլթայ-  
 քի իմում էհալը Ասվանըն էվինէ պիրիդտիլէր:  
 Գուէի դապուլ էթմէիդ տիէնլար նէ իշուն տէրսէն  
 Անդրէաս գազանմշ 34 քուէ. օպիրլէր գազանմշ 80  
 վէ տահա Փաղլա: Օ սըրա Թաղականտան Հիսապ  
 խթէնտի իսէ գաթիէն ճէվապ էթտիլէր, վէրմէյիդ  
 տէի. վէ պու Թաղմ պիր շօզ դավկալարտան սօնրայ  
 էհալի տաղտը լաքին շիմտի շալըշըլըեօր, տիֆայ  
 պիր արանայ կէլիպ պարշմազ իշին պազալմ սօնու  
 նէ օլուր:

Փէտերիմիդ

ԽԼՏՐ ԽԼՏՐԵԱՆ

Ահա այսպէս է եղեր Նիրզէի գործը. միշտ  
 կողմնակցութիւն եւ այդ պատճառաւ միշտ կուի.  
 դժբաղդարար գործը կը տուժէ եւ ոչ մէկ գործ ա-  
 ոաջ չ'երթար, միշտ կը ջանան իրար խաշածեւել:





ԿՏԸՐԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ



## Գ Լ Ո Ւ Խ Բ .

## ՈՐՏՐԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

Առաջին դուռնին մէջ ըսի թէ Ներդէցիներ եկած հաւաքուած են շատ մը գիւղերէ, որոնց մէջ կան Յըտրեանները՝ որ եկած են Տէրսեահ գիւղէն, մօտաւորապէս 1765 թուին: Մեր նախահայրերէն առաջինը եղած է Յըտր աղան, որուն չուրջ դժբախտաբար ոչ մէկ պատմութիւն չեմ գիտեր: Ինք ամուսնացած է Հահի Սաչերեաններու աղջկան հետ, ունեցած է 4 մանչ և երկու աղջիկ որոնց անուններն են Պալ աղա, Սարգիս, Կարապետ, Սաչեր: Աղջիկներն են Սրբուհի և Եղիսարեթ, որոնց կենսագրութեան կ'անդրադառնամ ուրիշ անգամ: Յըտր աղան մեռած է 90 տարեկան հասակի մէջ: Մահէն վերջ տղաքն անմիջապէս չորսի կը բաժնուին և աղջիկները հարս կ'ըլլան: Անդրանիկ տղան Պալ աղան էր. ամենէն մեծն ըլլալուն հանգամանքով տունէն դուրս կ'ելլայ և զատ տուն մը շինել կուտայ. իսկ մնացած երեքը մէկ տունը երեք մասի կը բաժնեն և կը նստին առժամեայ կերպով: Պալ աղան հին տուն մը գնած էր, որու փլատակներուն վրայ երբ նորի հիմերը կը փորուէին, թուրք գործաւորներէն մէկը պտուկով լի

ոսկի կը գտնէ և կ'անհետանայ, շատ կը փնտռեն, բայց չեն կրնար ձեռք ձգել: Պալ աղան՝ ժամանակին առաջնակարգ հարուստներէն եղած է, բայց իր հիւրասիրութեան և շոյլ ծախսերու պատճառով աչքի զարնող հարստութիւն մը չէ թողած: Ան ունեցած է 3 մանչ և երկու աղջիկ. Յովհաննէս, Խաչեր և Ստեփան. աղջիկները՝ Մարիամ և Եւա:

Առաջին տղան՝ Յովհաննէսը չափազանց խելացի և ճարպիկ երիտասարդ եղած է և լաւ տաճկագէտ, այնպէս որ դիւղին բոլոր կառավարական գործերն ան կը կատարէ եղեր շնորհիւ իր բեղուն գրչին: Ահա իրեն ծաղիկ հասակին մէջ մահը կուգայ վերջ կը դնէ հաղիւ 21 զարուաններ բոլորած կեանքին: Դժբախտութիւնն հոն է որ Յովհաննէսը ոչ մէկ յիշատակելի գործ չէ ըրած և ատոր համար դիւղացիները ոչ մի ատեն չեն յիշեր անոր անունը և շատեր գուցէ չեն իսկ իմացած: Յարգա՞նք քեզ իմ սիրելի հօրեղբայրս:

### ՀԱՅՐԻԿԻՍ ԿԵԱՆՔԸ ԵՒ ՄԱՀԸ

Ինչպէս ըսած էի Պալ աղան ունեցած էր 3 մանչ և 2 աղջիկ, որոնցմէ անդրանիկին Յովհաննէսի մահէն վերջ կրտսեր տղան՝ Խըտըը (իմ հայրս) կ'ամուսնացնէ զիւղի ազնիւ գերդաստանի մը աղջիկներէն մէկուն հետ, օր. Եւա Հանի Սարգիսեան: Հայրս զրիթէ քանի մը տարի դպրոց յաճախած է և միայն ա, բ, գ, սորված, յետոյ մեծ հայրս մարդու պէտք ունենալով տարած է դայն խանութ որպէսզի փուք քաշէ և այդպիսով մնացած է անուս:



Բայց հայրս՝ շնորհիւ իր ճարպիկութեան խանութի մէջ սորված է գրել-կարդալ իրեն պէտք եղածին շափ (վկայ՝ Ամերիկա դրած նամակները) այնպէս որ ուէ գրութեան համար ուրիշի չէր դիմեր, ու իր գործն իր ձեռքով կը կատարէր: Հայրս՝ մեծ հօրս նման կատարելագործած էր իր արհեստը: Պապիս մահէն ետք, ասպարէզը մնաց հօրս որ մինչև այդ եղած էր տէր 3—4 զաւակներու և ահագին ընտանիքի մը պատասխանատուութիւնը իր վրայ էր բեռնաւորուած: Կը գործէր շարաշար և այդ արիւն քրտինքէն հազիւ համեստ արդիւնք մը կրնար ձեռք ձգել: Չափազանց հիւրասէր էր, և առանց հիւրի կերակուր ուտել չէր սիրեր: Իր գործատեղին էր Պողազլեանի կողմերը մինչև 1895 թուին: Մօրեղբայրս այդ տեսնները սկսած է հետապնդուիլ իրրև յեղափոխական կառավարութեան կողմէ և անգործութեան մատնուած, հետեւարար հայրս՝ իրրև հողատար իր երկու ընտանիքի, իր նախկին գործը ձգած, զնաց Ղարաճավիրան ըսուած յոյն գիւղը, ուր արդէն խանութը պատրաստ էր և հոն մնաց մօտ 10 տարի առանց վհատելու: Երբեմն բանտ կ'առաջնորդուէր և շարաշար տանջանքի կ'ենթարկուէր, բայց այս ալ երկար չտեւեց, և առ դարձաւ մօրեղբայրս՝ Սուլթան Համիտի ներման արժանացած: Մօրեղբորս զլխաւոր յանցանքը գինեմոլութիւնն էր, այդ պատճառաւ ալ հայրս ստիպուեցաւ բաժնըւիլ անկէ և զանազան գիւղեր ու քաղաքներ գործելէ ետք վերջին հանգրուանն եղաւ Եըլտըմ կոչուած թուրք գիւղը: Այդ տեղ էր որ հայրս ինձ իր քովը արաւ: Եըլտըմ այնպիսի մի գիւղ էր, որ դը

բացիները զայն (Քիւչիւք Մըսր) կը կոչէին: Վերջնականապէս հաստատուելով հոն՝ բացինք նպարաւ վաճառի խանութ մը: Ասկէ վերջ եղբայրս գնաց Պօլիս, խանութը մնաց թուրքի մը և ինձ ընկերակցութեամբ և քիչ ետք երբ ես ալ ձգեցի, դործերն ամբողջութեամբ մնացին խեղճ հօրս վզին: Ես պահանջեցի իրմէ որ ամէն ինչ ձգած տուն դառնայ եւ հանդիստ ընէ, հայրս համակերպեցաւ յանձնարարութեանս: Իր պահանջած չափով դրամ կը ղըրկէի: Բայց աւա՛ղ, որ եղբայրս իր որդիական պարտականութիւնը չկատարելէ զատ, հօրս դէժ դաւաճանեց ուղղակի կամ անուղղակի կերպով անոր հասկոյնել ուղեց թէ ես իրրեւ անդրանիկ զաւակդ՝ պէտք է 100 կամ 200 ոսկիի մուրհակ մը տաս: Հայրըս մերժեց բացարձակապէս և այս մերժումին վըրայ եղբայրս ոչ միայն չի բաւականացաւ նամակ և դրամ ուղարկելու խղումով, այլ սովընցուցած էր մեր ազգականներուն Նիրզէի մէջ, որպէսզի պէտք եղած չափով հօրս նեղութիւն տան և ան հարկադրուի իր պահանջին զահացում տալ: Իմանալովս մէկտեղ, հա՛յր, գիշեր ցերեկ կը մտածեմ այս դաւաճանութեան համար, երբեմն սաստիկ կերպով կ'արտասուեմ, վերջապէս անորոչ վիճակի մէջ կը մնայ: Մայրս մեռած էր արդէն, մօրեղբայրս և ուրիշներ կը համոզեն հայրս որ կրկին ամուսնանայ, բայց ան զիտէր որ բոլոր եկամուտին միակ աղբիւրը ես եմ. հարկ էր հարցնել և իմանալ իմ այ կարծիքը: Պարոյր եղբայրս՝ այդ եղելութիւնն իմացած և միանգամայն հակառակ էր այդ-

պիտի նոր եղելութեան մը, ու ինձ գրեց հետեւեալ նամակը. —

Նիրգէ, Նոյ. 14, 1911

Մեծապատիւ

Սեմ. Վահ. Խըտրեան

Սիրելի եղբարք,

Թուականէս շարաթ մը առաջ ձեր երկտողին արժանանալով որչափ ուրախութիւն զգացած էինք շեմ կրնար պատմել: Բայց սա ըսեմ թէ նամակը եկած բոպէին միւսիւ Յակոբճանը եկաւ, (հօրս գրագիրը ըլլալ կը կարծուի), առաւ նամակը եւ մեր քով չը կարդաց, առանձին տեղ երթալով կարդացին, բայց յետոյ մենք ալ իմացանք ամէն ինչ. ես կարդացի քու նամակդ և ձեր կարծիքն ալ իմացայ: Գիտես, սիրելի եղբայր, մօրեղբայրս ձեզ կը գրէ որ հաւանութիւն տաք հօրս, որպէսզի երթայ ամուսնանայ. սակայն, կը յուսամ թէ մերժած էք. անոնք ոչ թէ մեր յառաջդիմութեան և բարօրութեան համար այս առաջարկը կ'ընեն, այլ անոնք մեր ներքին թշնամիներն են որ իրենք պիտի դիտեն և վրանիս խնդան, իրենց անձնական շահերուն համար: Բայց գիտցած ըլլաք որ եթէ հայրս ամուսնանայ, որ ձեր ձեռքն է, բաժնուիլը, ցիրուցան ըլլալը, անխուսափելի է: Ես նոյն պահուն ինքզինքըս սպաննելէ յետոյ, ուրիշ շատ մը վնասներու կ'ենթարկուիք: Ուստի, ասոր համար ձեզ կը գիմենք, ինչ որ ձեր ձեռքն է: Սիրելի եղբայրներ,

չըլլայ որ ձեր հայրենիքը մոռնաք, այլ շուտով վերադառնալու փափաքեցէք. մէյ մըն ալ մօրեղբայրս ինչ որ դրէ, երբէք մի անսաք:

Եթէ հօրս ըսածը ըլլայ, մեր վիճակը անտանելի կ'ըլլայ. դուք այդ կողմէն գրեցէք, որպէսզի անգամ մըն ալ բերանը չի բանայ, որ ամբողջ գիւղին մէջ խայտառակ պիտի ըլլանք: Ես ձեզի կը ներկայացնեմ յիշեալ նամակները, իբրեւ ճշմարտութիւն, ինչ որ կ'ուզէք դուք կրնաք կարգադրել. հօրաքոյրերս և քոյրս մինչև իրիկուն կուլան որ «արդեօք կրնանք տեսնել Սեն. և Վահ. : Իմ մասիս ալ ըսեմ թէ եթէ դուք այս երկիրը պիտի դաք ինձ անպայման վանք ղրկեցէք, մի մոռնաք ժամացոյց մը և ատրճանակ մը ղրկելու. իսկ չ'պիտի դաք, գըրեցէք ինձ որ անմիջապէս ես ալ հող դամ, ես կը փափաքիմ ձեր դէմքը տեսնել ուրիշ ոչինչ. դրամը պակաս մի ընէք: Հանեցէք նկարնիդ ղրկելու. ուրիշները կը ղրկեն, իսկ դուք մինչև այսօր ոչ մէկ նկար չէք ղրկած. քանի՞ դուրուչի բան է. մեր ուսուցիչը ձեզ նամակ գրած է, բայց չէք պատասխանած: Այս նամակիս պիտի մանրամասնութեամբ պատասխանէք:

Յարգանքներով

Հարազատ եղբայրնիդ

ՊԱՐՈՅՐ ԽԼՏՐԵԱՆ

Նամակը կարդալէս անմիջապէս ետք, հարկ եղած պատասխանը գրեցի հօրս, բայց մինչ այդ իրմէն ալ նամակ եկած էր և ամուսնութեան համար

Հաւանութիւն կը խնդրէր, ես ալ պատասխանեցի  
 ծօտաւորասպէս սա ձեռով —

Միրելի Հայրիկս. Տարիքդ 55ը անցած է, վրս-  
 տա՛հ եմ թէ ուրիշներու խօսքին ես Համոզուած. ա-  
 ռաջ մտածէ ու ետքը քայլերդ առ: Հրամանը քու  
 ձեռքդ է. ուզածիդ պէս կրնաս ընել: Ես պատրաստ  
 եմ մինչև կեանքիս վերջը քեզ օգնելու, նոյնիսկ  
 պէտք եղածէն աւելի: Նամակս կարդալէ ետք՝ Հայ-  
 րքս վերջ կուտայ ամէն որոշման. կը ձգէ խանութ  
 ու ամէն ինչ և կը սկսի պտտիլ: Բայց ինչպէս ըսի՝  
 եղբայրս Հանդիստ շի թողուր: Խեղճ մարդն այն-  
 քա՛ն կը նեղուի որ ծտահոգութենէն Հազար ու մէկ  
 տեսակ հիւանդութիւններու կ'ենթարկուի:

Հայրս 1912 Օգոստոս 26 թուակիր նամակին մէջ  
 կ'ըսէ. «Իսկապէս վերջին աստիճան դո՛հ եմ որդիա-  
 կան պարտականութիւնդ կատարելուդ Համար (սէ-  
 լամ փարա, քէլամ փարա):

Եւ ահա օրին մէկը սա նամակը ստացայ:

1913 Նոյ. 18, Նիրգէ

### Տրայէթլու

Սէվկիւլիւ վէ ճանտան արզուլու

Պիրատէրիմ Սենեքերիմ էՓ. Խըտրեան

Նոյեմբեր 18 թարիզլի արզու նամէնիզէ նայիլ  
 օլարադ սօն տէրէճէ մէսրուր դալտըզ. վէ լազին  
 պիր ճիճէթտէ տախի միւզէտտէր օլտում իսէտէ Ալ-  
 լահըն էմրիտիր նէ եարալըմ էլիմիզտէն պէր շէյ

կէլմէտի ճէնապը հազ սիղլէրէ էօմիւր վէրսուն թիւրլիւ քէտէրլէրտէն մահսուն էյլէսուն ամէն. պիրտէ Սենեքերիմ էֆ. ճիւմլէմիղին փէտէրի պուլունան իսմի պաղի վէ գըյմէթլի մէրհումուն նուր իշինաէ կաթաուր ճանը խասթալըղընտան էվէլքի մէքգուպտա խասպէր իսթէմիշ խտին: էվէլա նէվազիլ կիպի պօղաղընա էնտի սօնրա շէքըլտի 2—3 այ դատար պու կիւն աշըլըր կարին աշըլըր պիրտէ գըշ կէլտի պու տէֆա պօղազը սըղըլամահա պաշլատը, մեծ պաքա քատարտա պէօյլէ վազըթ կէշիրտի իշարթտը երիղիւնտէն շէնէսինին ալթընտա պիր շիշ բէյտահօ օլտու տէմիր կիպի բէրք խտի Սաշիկ էֆ. եէ պազտըրորդ 5—6 տէֆա կէլտի կէթտի նիհայէթ ումուտունու քէստի էօլիւր գարէրինի շէքտի. օնտան սօնրա Դալասա տատ կէթմէք զարարինի վէրտիք Նըկազար աղա Մկրտիշ էֆէնտի պէրապէր օլարադ Դալասա կէթտիլէր պէնտէ Գայսէրիյէ կէթտիմ ազշամա կէլտիլէր Գայսէրիյէ օրատա կաթտըդ Մկրտիշ էֆէնտինին կանընա կէթտիմ սէվալ էթտիմ տատ նէ տէտի խասպէր վէր պազալըմ տէտիմ իսէ նէ խասպէր վէրէյիմ շիմ ի եուրէղին օյնար տէյինճէ երբէղիմէ սըղը տիւշտիւ պաշլատը խասպէրինի վէրմէկէ գուրգուլուշ կօղ կիղլի խասպէր ալմըշ իսէ շիշ ասլա չըգմազ չըգարընճա եէրինէ օնտա պէօյլիւք բէյտահօ օլուր պօշա սըղընդը վէրմէյին իւշ այ կաշար տէօրտիւնճիւ այ բուհունու թէսլիմ էտէր պու նէտէն իլէրի կէլիր օնուտա սէօյլէյիմ տէմիշ. պու իլլէթ ինսան քէնտի երիւրէղինտէ պիր շէյ օլուր կա սէվինճ կա քէտէր կախուտ պիր տէնմէյէճէք պիր մէսէլէ ութանըր էհթիյաթ էտէր սէօյլէ-

յէմէզ պունտան իլէրի կէլիւր տէմիշ սահի օլարադ  
 թամ տէտիկի կիպի իւշ այ սօնրա թէսլիմ օլտու  
 տահա շօզ շէյլէր վար հազմա իլէ թիւքէնմէզ Աս-  
 լաննանա մուայէնէ էտտիրտիք օտա դուրթարա-  
 մատը Փիրէնկի տէտիլէր 15 կիւնտէ օնա պագարը-  
 տըդ սուրբ Կարապետտէ շօզ էյի օլտու իտի պիր-  
 տէն պօզուլտու պըրագաը կէթտի Ալլահ սիզլէրէ  
 էօմիւր վէրսին հիշ մէրագ էթմէ էվլատլըզ վագի-  
 Փէլէրինի իճրա էթտին տահա շունուտա հափսամ  
 տէյէճէյին գալմատը Ալլահ կէօյնիւնին մուրատլա-  
 րընը վէրսին պիր էյիէք տահա վար քի էօլմէտէն 3  
 գարտաշ սօն կիւնլէրտէ հապէրինիդի ալար սէշին-  
 տի հէլէքի Կարապետ էֆէնտինին 7—8 լիւրա փա-  
 րատընը տար վագթընտա խարճատը հէլէ պու դա-  
 տար պիր էյիէք կէօրտիւ Կարապետ էֆ. պու էյի-  
 դիտէ հափմազսախտի ճիւլիս եիւրէդինտէ էօլէնէ  
 գատար տէրի գալաճադ իտի դատը օտա Ալլահ-  
 տան. հէր նէ իսէ պիրատէր ուզուն միւսատտէմ  
 եօզտուր դուսուր էթմէ, պիրտէ 15 լիւրա մէսէլէ-  
 սինի սանա հազմագ իստէր իտիմ պիրագընը Նէզ-  
 տարիցա սէնէտ վէրտի ալար իտի պիր դազնը ուն  
 ալարըզ 4—5 շէթէն սաման ալարըզ պիր պիր լիւրա  
 ժամա փարա վէրտիք ուֆագ տէֆէկ նէքի իզթի-  
 գալար վար իտի իսէ հափտըզ 2—3 լիւրա գատար  
 տա էօյլէ խարճանտը 3 լիւրատա Արթին էֆ. պի-  
 թիրտի պիր լիւրա օնա պօրճ վար իմիշ պաղալըմ  
 սօնրա առէտլէրիլէ հազարըմ տահապէօյլէ նէրէ  
 նէրէյէ խարճանտը պիլէմէմ զան էտէրսէմ 1—2  
 լիւրա պօրճ արթար ունուտա եէթէլիք էտէմէտիք  
 50 պաթման ուն ալարըզ շունքի ճասէրէթ էտէմէ-

տիք քի փարա խարճանքրսա սօճրատա Սէնէքէրիմ էֆէնտի դասուլ էթմէղսէ սօնրա չօզ զահմէթ չէքէրիզ տեու դօրդումուզտան անճազ օզատար ալապիլտիք սիզտէ սաղ օլուն խարճանմասընա միւսատէ էթմիչսին ամմա վաղըթ կէչտի սաղլըզ օլսուն ինչալլահ սէնտէ կափմըչ օլսուղուն ինսանիյէթլէրի գայիպ էթմէզտէն Ալլահտան պուլուրսուն սէնին կափտըղըն ինսանիյէթլէր պաչտան աչտը պուրատա պաչգա պիր քէտէր եօղտուր էյի բահաթ սըբլար եէյիպ իչիպ տօվա էտիյօբլար դուսուրումա դալմայասըն պիրտէ կազմըչ խտինիզքի պիպիմ էվին ամանէթինի քիմէ հէվալէ էտէյիմ տէմիչսին սանա տէրսէմ օ տարըլըր օնա տէրսէմ օպիրի տարըլըր պերատէր պէնտէն հիչ չէքիլմէ քիմէ հէվալէ էտէրսէնիզ էտին պանա կէլսէլէր պիր չէյ տանըչըբլարսա պիր չէյ խտէրլէրսէ աղլըմըն եէթտիկինի սէօյլէրիմ կիւճիւմին եէթտիկինի վէրիլիմ պէն սիզտէն վազ կէչմէմ ամմա սիզ կէչէրսէնիզ պէնտէ դօրունան պէնիմ իլէ պիր օլահազսընըզ տեու արդանըղա տիւճմէմ պէնիմ իչիմի կէօրսէն չաչան քէօվիւմիզին իւչտէ իքիսինին էքսիկինի պէն տիւչիւնիւյօբըմ էրքէղի օլան տախի պիզէ շու դատար ուն իլազըմ շու դատար պուլոտայ իլաղըմ հէր նէ լաղըմ օլուր իսէ պանա հէվալէ էտարլէր պէնտէ եիւզէ տուրամամ հէփիսինէ սէօղ վէրիլ էլիմտէն կէլտիք դատար չալըչրեօբըմ . սիզտէն սօն տէրէճէ մէմնուն ում պաղի սըհէթ ու աֆիյէթտէ դատիմ օլաս նըզ աղիլիմ :



Մեռաւ Հայրս, բայց ոչ մէկ խղճի խայթ չեմ ունեցած, որովհետեւ բոլոր որդիական պարտականութիւնս լիովին կատարած եմ: Հայրս իր 1911, ապրիլ 25 նամակին մէջ կ'ըսէ. «Երբ նամակդ ստացայ՝ 21 օսմանեան ոսկիի չէք մը կար, կեսարիա տանելով դանձեցի. բայց դրամն համբաւատենս լացի՝ մտածելով թէ խեղճ Սենեքերիմս որքան արիւն քրտինք է թափած...»

### ՄԱՅՐԻԿԻՍ ԿԵԱՆՔՆ ՈՒ ՄԱՀԸ

(Հօրաբոնջս, քրոջս և իր նամակները)

Մայրս մօտաւորապէս 16 տարեկան հասակին ամուսնացած է. որչափ որ տնուս, բայց զարմանալի կերպով ճարպիկ և հաշուադէտ էր: Հնազանդ իր ամուսինին, խաղա՛ղ ու սիրով կեանք էր ունեցած: Մայրս ըլլալով հարուստի աղջիկ, փափուկ ու փառասէր պէտք էր դուրս գար, ընդհակառակը որքան չարքաշ ու գործունեայ աղջիկ ժամանակ, նոյնքան և ժրաջան ու աշխատող եղած է ամուսնանալէ ետք: Կը պատմէր թէ «Հայրս ունէր հօտերով ոչխարներ, 1—2000, որոնք ամէն օր կ'թելու համար կէս ժամուսայ ճամբայ ոտքով կը քալէի Այրոս կոչուած տեղը, ուր մասնաւոր պատրաստուած քոզեր (աղբլ) կային: Ատոնցմէ զատ ունէին գոմէշ, ձի, կով ևն.»:

Մեծ հայրս կ'ունենայ և բաւականաչափ ծառաներ, որոնց ընդհանուրի հոգը կրկին մայրս կը քաշէ: Ահա այդ չարաչար գործունէութիւնը պատճառ կ'ըլլայ որ ամուսնանալէ քանի մը տարի վերջ ալ կը ձեռնարկէ կտուագործութեան, որպէսզի այդ կեր-

պով հօրս օգնած ըլլայ և միաժամանակ գոհացում տայ իր աշխատասէր Ֆիզիքին: Կեանքը եղած է փոթորկոտ: Հաղիւ 35, 45ի տպաւորութիւնը կը կրէր: Պատճա՞ռ. իր ամենէն սիրելի կրտսեր եղբայրը՝ Հաճի Պօղոսը յեղափոխական շարքերու պատկանելով թուրք կառավարութեան կողմէ կը հալածուէր. երկու օրէն մէկը կը նայիս թէ տունը պաշարուեր է: Թուրք պաշտօնեաները ձեռքերէն եկածին չափ կը շարչրկեն անեցիք, անբաժին չի մնար և մայրս իր քոյր ըլլալու հանգամանքով:

Այսպէս կը շարունակուի 5—10 տարիներ: Օր մը դարձեալ 20—30 զարթիւններ կը պաշարեն տունը, երկար-բարակ խուզարկութենէ ետք, ձեռնունայն չվերադառնալու համար կը ձերբակալեն մայրըս և մօրեղբօրս կիներ և կուղարկեն քանտ՝ կեսաբիա: Ծիշտ այդ ատեն եղբայրս Վահանն Կ մասուան էր, պղտիկն ալ մէկտեղ տարած են. բայց հայրս այդ իմանալով անմիջապէս երաշխաւորութեամբ ազատ արձակել կուտայ:

Ինչպէս ըսած եմ մօրեղբայրս ընդհանուր ներման արժանանալով եկած է Եգիպտոսէն, բայց եւ այնպէս որեւէ տեղ ոճրագործութիւն, աւազակութիւն պատահի առաջին անգամ մօրեղբայրս կը ձերբակալեն որպէս հին յեղափոխական և այս ձերբակալութեան ժամանակ բնական է որ ալթուրքա շարչարանքներն անպակաս էին: Ասոնց բոլորին մայրս ականատես կըլլայ. անշուշտ գիտէք քրոջ մը դուրդուրանքը եղբօր հանդէպ: Բրքական վայրագութիւններուն ի տես այնքան կը մտահոգուի որ վերջապէս կ'ենթարկուի անբուժելի հիւանդու-

թիւններու և աւելի կը ծանրանայ երբ եղբոր կրկին ու կրկին բանտարկուիլը կ'իմանայ: Կեանքի մեծամասնութիւնը դրեթէ հիւանդութեամբ անցուցած է: Մեր մասնաւոր տաքթըն էր Սաշիկ Էֆ. Տէօվլէթեան, որ շատ խղճմտօրէն կը կատարէր իր գործը: Որպէս այցեգին շատ անգամներ ուէ դրամ չէր առներ: Մայրս կազմով բարձրահասակ, յաղթանդամ էր ու հուժկու, սև ու խոշոր աչքերով, գեղեցիկ յօնքերով, սև մազերով, ուշագրաւ դէմք ունէր:

Վերջերս այնպէս էր եղած որ բոլորովին գործէ քաշուած էր, տնական գործերը թողելով հօրաքրոջս վրայ: Մայրս եղած է եօթ զաւակներու տէր, որոնցմէ անդրանիկը մեռած է, իսկ 5 մանչ և 1 աղջիկ դեռ կ'ապրին այսօր: Տղայոց անուններն են Կարապետ, Սենեքերիմ, Վահան, Պարոյր, Մարգիտ: Իսկ քրոջս անունն էր Նիկտար. ասոնց դրեթէ բոլորն ալ մեծցնելու նեղութիւնը հօրաքոյրս է յանձրն առած: Այս պատճառով ալ մենք ամէնքս երախտադիտութեամբ և յարգանքով կը յիշենք իր անունը: Մայրս, ինչպէս ատածը կ'ըսէ օսմանցի էր, ազատամիտ և ճշմարտախօս և ամօթխած: Չափազանց հիւրասէր էր՝ այնպէս որ պէյ, փաշա կամ հասարակ մահկանացուներ, ով որ հիւր ըլլար, հոգ չէ հայ է եղեր կամ ոչ, բոլորն ալ կը պատուուէին հաւասարապէս: Չէր սիրեր ընտանիքի անդամներով մինակ կերակուր ուտել, երեկոները կը սպասէր մինչև որոշատեն, որպէսզի հիւր ունենար: Մայրս ազգասէր էր, եթէ որեւէ աղքատ դռան առջև դար ուղորմութիւն խնդրելու, հօրաքոյրս քիչ մը կ'ծծի կը

չարժէր, քիչ կուտար հաց կամ պղլուր, բայց մայրըս անմիջապէս կը սաստէր և խստիւ կը պատուիրէր որ պէտք եղածէն աւելի տան աղքատներուն: 1905—6 սաստիկ հիւանդացաւ ան, սրտի ցաւով կը տառապէր խեղճը. եղբօր հանդէպ տածած սէրը այդ վիճակին էր հասցուցած զինք: Մօտ երկու տարի անկողնի մէջ մնաց: Բժիշկը յուսահատութիւն ցոյց կուտար կամ անուղղակի կերպով կուզէր հասկըցնել որ առողջացնելու յոյս չկայ: Ամառ եկաւ, ստիպուած էինք խանութ երթալ օրապահիկ մը ճարելու, բայց ոչ հօրս և ոչ մեր ձեռքը դործի կերթար, թուլութիւն մը, յուսահատութիւն մը պատեր էր մեզ և օրին մէկը հօրեղբայրս Ստեփանը յանկարծ ներս մտաւ ու պահանջեց որ հայրս տուն երթայ. գիտէինք թէ ինչ ըսել կուզէր հօրեղբայրս: Բոլորին ալ լեզուն քաշուեցաւ. չկրցինք հարցնել թէ ինչու հայրս կուզուի տնէն: Կը վախնայինք մի դուցէ մօրս մասին էր. բայց եղածը եղած էր. ի՞նչ կրնայինք ընել: Առանց խօսք մը արտասանելու հայրս կայծակի արագութեամբ ձին հեծաւ և միայն երկու խօսք ըսաւ. — «Չաւակնե՛րս, դուք կեցէք ես վաղը կուգամ»: Բայց ո՞ր մէկ սիրտն է որ պիտի համբերէ: Մօր մը մահուան լուրը կը տրուի և զաւակը 7—8 ժամ հեռու ուրիշ գիւղ մը կենայ: Ո՛չ, այդ մեզ համար նախատինք էր: Անմիջապէս վահանին հետ որոշեցինք զիշերը մինչև լոյս քալել, հասնելու դէթ թաղումին մնաս բարովն ըսելու: Հայրս, հօրեղբայրս և մեծ եղբայրս մեկնած պահուն խստիւ պատուիրեցին մեզ հոն մնալ: Կեղծեցինք՝ անհանդիստ էինք սակայն ներքնապէս:

Վերջալոյսի ատեն Վահանի հետ ինկանք ճամբայ :  
 Ութը ժամէն հաղիւ կրնայինք հասնիլ : Հեծնելու  
 համար ոչ ձի ունէինք, ոչ ալ էջ, բոլորն ալ տա-  
 րած էին, հետիոտն պիտի քալէինք : Աստուած իմ  
 որքա՞ն դժուարութիւն. բայց ո՛չ, մայրական սէ-  
 րը և զաւակի մը պարտականութիւնը թոյլ չեն տար  
 որ անոր վերջին բոպէին գէթ բացակայ ըլլանք :  
 Ո՛հ, այդ ճամբորդութեան իրիկունը : Կը քալէինք  
 թէ կը վաղէինք այդ չեմ գիտեր : Մերթ ընդ մերթ  
 կուլայի փոքրիկի մը պէս յիշելով այն դուրգուրան-  
 քը, զոր կը վայելէի ամիսներ առաջ, չէի ուզեր սա-  
 կայն ինձ զգեստնող դառն վիշտը յայտնել Վահա-  
 նին ալ, այդ պատճառով իսկ աչքէս հոսող ար-  
 ցունքները զաղտնի կը սրբէի անկէ : Կուզէի բան մը  
 ըսել, միտիթարել զինք, կ'զգայի թէ այն ալ կ'ար-  
 տասուէր ինձ նման, բայց բառերը չրթունքներու  
 վրայ կը մեռնէին, չէի կրնար բան մը ըսել : Կը շա-  
 րունակէինք ճամբանիս : Երբեմն քաջութիւն մը կու-  
 դար վրաս մէկ կողմ նետելու ցաւ ու վիշտ այն պա-  
 տիր յոյսով թէ մայրս մեռած չէ, թերեւս ծանր  
 հիւանդութեան պատճառաւ եղած էր կանչը : Ոչ  
 մէկ ենթադրութիւն սակայն կրնար ամոքել վիշտս :  
 Նղելութիւնն ինքնին անմիտիթարական էր : Վերջա-  
 պէս հասանք Նիրգէյի այդիններուն մօտ ութ ժամ-  
 ուայ տաժանքոտ ճամբորդութենէ ետք՝ գրեթէ ա-  
 ռանց բառ մը իսկ փոխանակելու իրարու հետ : Ծիշտ  
 միջօրէին գիւղին տուները կերեւային : Աստուած  
 իմ. արդեօք մէկը կը պատահի որ լուր մը առնէի  
 մօրս նկատմամբ. չորս կողմս կը նայէի, այգիներու  
 մէջ երբեմն կը տեսնէի մարդիկ, կը վաճէի երթալ

հարցնել, յանկարծ կանդ կ'առնէի, մի գուցէ լսածս  
 դէշ լուր ըլլար. ի՞նչ պիտի ըլլար մեր վիճակը, մա-  
 նաւանդ խեղճ Վահանին, որու աչքերէն արդէն կը  
 հոսէին արտասուքի կաթիլները: Նկատեցի որ ունէ  
 ծանօթ մեզ տեսնելուն պէս երես կը դարձնէր, խօ-  
 սելու տրամադրութիւն ցոյց չէր տար, կ'զգայի թէ  
 բան մը կայ, ես ալ սկսայ հեռուէն քայել մարդ տես-  
 նելու պարագային, մի գուցէ շուտով պիտի լսէի  
 դառնաղէտ լուրը, վերջապէս հասանք երկիրդի ու  
 դողի մէջ: Մեր այն փողոցը՝ զոր մանկութենէս ի  
 վեր հազար անգամ ելեր իջեր եմ վեր ու վար, այսօր  
 կարծես իւրաքանչիւր քայլ հինգ բոպէ կը տեսէր,  
 այնքան դանդաղ կերեւէր մեր գնացքը: Փողոցին  
 մէջ մեզ տեսնողները թռչունի նման կ'երթեւեկէին:  
 Կ'զգայի պատահարին ահաւորութիւնը. չէի կրնար  
 բառ մը իսկ արտասանել: Աստուած իմ, այս ի՞նչ  
 լուրքիւն է: Հանդիպողներէն ամէնքն ալ թէպէտ  
 լո՛ւռ, դէմքերը խօսուն են սակայն. կարծես ըսել  
 կ'ուզեն «խեղճ տղայ, ինչո՞ւ եկար, շատ ուշ ես  
 մնացեր, չկրցիր մօրդ վերջին մնաս բարովին ար-  
 ժանանալ, խե՛ղճ, խե՛ղճ» ճիշտ այսպիսի ձայներ  
 էր որ կ'իմացուէր, քարերը կը խօսէին, խոտերը լուր  
 կուտային: Սալայատակներն անգամ կարծես կը  
 փսփսային «Ձեր մայրը երկու օր առաջ մեզ կոխկըռ-  
 տելով առին-տարին դէպի այնտեղ, ուր յաւիտենա-  
 պէս չպիտի տեսնէք»: Ամէն ինչ կը խօսէր մեր շորս  
 կողմը: Բայց առանց յուսահատելու դանդաղ քայ-  
 ւերով կը շարունակէինք մեր սիրելի հօրենական օ-  
 ճախը, մեր հինաւուրց ծառերն ալ ահա սկսան բո-

դոքեել որ դեռ երէկ իրենց ճիւղերով էին տաքցուցեր մեռելի ջուրը... Անիծեալ ըլլաք ծառեր, որ ջուր տաքցնելու համար փայտ արտադրեցիք, անիծուի՛ք և դուք, սալայատակներ, որ թոյլ տուիք ձեր վրայէն տանելու մեր սիրելի մօր դազաղը:

Վերջապէս հասանք դռան առաջ. տուներնիս երկու դուռ ունի, մին արեւմտեան և միւսը հարաւարեւելեան կողմը. մենք այս վերջինէն ներս մտնել ջանացինք և ահա ի՞նչ տեսնենք. ահադին բազմութիւն մը մեր ետեւէն կուգայ մենք, լուր շունինք. ազգականներ, դրացիներ, բարեկամներ, բոլորն ալ մեզ կուգան: Անշուշտ մխիթարանքի համար: Զսպասեցի անոնց. ներս մտայ, ալ Վահանին շնայեցայ: Ուրախութիւն մը եկաւ վրաս յանկարծ. տան դաւիթը մարդ չկար, ոչ ալ լոյս, պահ մը ենթադրեցի որ մեռելի տունն այսպէս չըլլար, ուրեմն մայրս ողջ է մտածեցի վայրկենաբար: Աճապարեցի 10—15 աստիճան սանդուխներէն վեր, որ սիրելի մայրիկս ողջունեմ, աւա՛ղ, գետին փռուեցայ ուշակորոյս. արթննալէս վերջ դիտեցի որ մօրս սենեակէն դուրս տարուած էր անկողին և այլ առարկաները հիւանդին յատուկ և հիւրեր կային հոն միայն. ամէնքն ալ մխիթարանքի բառեր ունէին միայն: Երկու երեք օր լալէ վերջ հազիւ հազ կարելի եղաւ հաշտուիլ իրերու բնական ընթացքին հետ:

Ահա այսպէս կորսնցուցի մայրս, բայց անոր սերունդը կանգուն կը մնայ միշտ որ յարգանքով կը յիշէ իր անունը: Սիրելի մա՛յր, այսօր Ամերիկա ենք. իսկ երբ վաղը բախտն ունենանք կրկին երկիր

գալ, կարօտի բուն իղձով պիտի խոնարհինք կըրկին շիրմիդ առաջ:

Յարգա՞նք յիշատակիդ, սիրելի՛ մայր:

### ՀՕՐԱՔՈՅՐԵՐՍ

Երկու հօրաքոյր ունիմ, Մարիամ և Եւա: Մարիամ գրեթէ 18 հասակին կ'ամուսնանայ Հաճի Յակօր Հաճի Խաչերեան անուն պատուական, աղնիւ և հարուստ երիտասարդի մը հետ, երեք մանչ եւ մէկ աղջիկ կ'ունենայ. տղուն մէկը՝ Աստուր 1896ի գէպրին Պօլսոյ մէջ ոչխարի պէս կը մորթուի գազան թուրքերու կողմէ. իսկ կրտսեր տղան Յարութիւնը՝ բարձրահասակ, կրթեալ երիտասարդ մը՝ որի նմանը չկար գրեթէ գիւղին մէջ, կ'ամուսնանայ 24 տարեկան հասակին և հաղիւ զաւակի մը տէր ըլլալով՝ անբուժելի հիւանդութենէ մը բռնուած կը մեռնի 35 զարուններ բոլորած: Հօրաքոյրս աղջիկը հարս ըրած էր և տղան ալ տան փեսայ տուած, եկաւ մեր բաղձաթիւ ցաւերուն վրայ հատ մըն ալ աւելցնելու:

Եւա հօրաքոյրս կ'ամուսնանայ կարապետ կըտըրեան անուն զեղեցիկ երիտասարդի մը հետ որ վաճառական էր Պօլսոյ մէջ. ամուսնութենէ երկու տարի վերջ կ'երթայ Պօլիս իր գործին գլուխը, բայց չար բախտը չի թողուր որ երկար ապրի խեղճը և ահա մահուան գոյժը շանթի պէս կ'իջնէ հօրքրոջս գլխին մօտաւորապէս 1887ին. երկու զաւակներ ունէր, անդրանիկը մանչ՝ Եղիապար և երկրորդը՝ աղջիկ, Եղիսարեթ: Այսպէս Եւա հօրաքոյրս ալ ըստիպուած կուգայ մեր տունը:



Այս պատճառաւ է որ մայրս շատ հանդիստ կ'զգար և տնական գործէն չէր նեղուեր. հօրաքոյրերս անոր թեւ ու թիկունք էին միշտ: Ամերիկա եկայ և ամէն անգամ երախտագիտական նամակներ կ'ուղղէի անոնց. կը սիրեմ զանոնք իբրև մայրրս: Զիս և բոլոր եղբայրներս անոնք են մեծցուցած և մեր առողջութիւնը անոնց կը պարտինք:

### ՔՈՅՐՍ

Քոյրս սեւ աչքերով, սև մազերով, միջահասակ, նրբավայել օրիորդ մըն էր. 14 տարեկան հասակին նշանուեցաւ Կարապետ Միւտիրեան անուն յարգելի երիտասարդի մը հետ, գրեթէ երեք տարի նշանուած մնալէ ետք, ամուսնացաւ: Մինչև թուականս չորս զաւակի տէր է եղած: Մօրս մահէն ետք, բոլոր մտահոգութիւններն անոր վրայ կը մընան: Որչափ որ տուներնին ազատ է, բայց ինք միշտ մեզմով կ'զրադէր: Ամէն օր առանց բացառութեան առաւօտները կուզար և կարգադրութիւն ընելով կ'երթար: Վերջին աստիճան խղճամիտ և բարեսէր տիկին մը եղած էր: Աղջկութեան շրջանին վայրկեան մը իսկ հանգիստ չէր ուղեր մնալ: Տնական գործերը հօրաքոյրերուս հետ հաւասարապէս կատարելէ վերջ, գորգ ալ կը շինէր այնքա՞ն արագաշարժ ու ճարպիկօրէն որ իր շինուածքները հիացմունք կը պատճառէին ուրիշներուն ու այսպէս խոչոր չափով օգնած կըլլար տնական ընթացիկ ծախսերու տեսակէտէն: Զափազանց տնտեսագէտ էր. կը ծախսէր ժամանակին և տեղին համեմատ: Հնազանդ էր ամուսնին ու կէսուրին: Երեք շաղիկ զա-

ւակներ ունէր Յովհաննէս, Եղիսարեթ և Ռաֆայէլ : Առաջինը մանաւանդ, Աստուած իմ, ի՞նչ վառվառուն աչքերով, կարմիր այտերով, միջհասակ պատանի էր. խառնուածքին ու շարժումներուն նայած 20 տարու էր կարծես : Ո՛հ, որքա՛ն կը սիրէի Յովհաննէսը. ատանց օր մը դայն տեսնելու հանդիստ չէի ըլլար. եւ սակայն ինչպէս անկէ ու շատ շատերէ լուր չենք առած երկու տարիներէ ի վեր :

Եղիսարեթը գեղին մազերով, կապոյտ աչքերով, կարմիր ու ճերմակ երեսով հրեշտակ մըն էր. տեսնողները կը զմայլէին գեղեցկութեանը վրայ, բայց վատ թուրքի մանդաղն այն ալ չնձած է այսօր. արդեօք պիտի կրնա՞մ զանոնք տեսնել կրկին, երբ ամէն օր զպրօցէն վերադարձին դէմս կ'ելնէին ու կատակելով տուն կ'ուղղուէինք. կը դրկէ դանոնք իբրև մէկ հոգեհատոր սանդուխներէն վեր բարձրացնելու համար : Եթէ մարդ մտարերէ այս յիշատակելի անցեալը, տրամադրութիւն կը մնա՞յ այլևս տանջուելու պանդուխտ երկրի մէջ :

Ռաֆայէլը իմ Ամերիկա մեկնելէս վերջը ծնած է, ոչ մէկ տեղեկութիւն չունիմ անոր մասին :

Քոյրս մեկ կը սիրէր հաւասարապէս : Ինձ հանդէպ սակայն մասնաւոր սէր ու հաւատք ունէր : Երբ Ամերիկա եկայ իրմէն միշտ նամակներ կ'ըստանայի, որոնցմէ մին իբրև նմոյշ վրաս ունեցած անկեղծ սիրոյ արտայայտութեան, ստորև կը դնեմ հարազատութեամբ :

1911 Նոյ. 1 Նիբրգէ

Սէվկիւլիւ

Պիրատէրիմ Սենեքերիմ էֆ.

Չէնտ կիւն ազտէմ պիր գթայ նամէնիզէ նայիւ  
 օլարագ, սօն տէրէնէ մէմնուն վէ մէսրուր օլտում.  
 «Կիւլ գօյմուչլար մանիմչէնին ատընը, տիւնեատան  
 ալամատըմ միւրատըմը զարտաչլարըմը եիթիւր-  
 տիմ արանըեօրում. Սենեքերիմ սաղլընայ կիւ-  
 վէնիեօրում, սաղ օլուր իսէն պիր կիւն կէ-  
 լին էվինէ: «Եիւքսէկ օտալարտայ պիւլպիւլ  
 էօթմէսին, տիւշմանմըն զարտաչլարտայ պէշ  
 երլ կիթմէսին»: «Եիւքսէկ օլուր Ամեիլքանըն սէ-  
 րայի չօզ կէտիպտէ աղ զաղանմային փարաի, ու-  
 նութմաին պիր թանէնիք հէմչէրինիզի սիլաի»: «Կիւնտիւղ  
 խայալմտա, կէնէ տիւլիւմտէ, ու իշէր-  
 քէն թասմտայ, եմէք երքէն զաչղմտայ: Սէվկիւլի  
 զարտաչմ պիլմիշ օլուն պէօյլէ արղունուզու չէքի-  
 եօրում: «Այլար թիւքէնիեօր, երլլար թիւքէնմէզ,  
 շու կէնճլիքտէ հասրէթլիք չէքիլմէզ»: Սէվկիւլի  
 զարտաչմ Սենեքերիմ էֆ. պու սէնէ սէն կէլմէլի-  
 սին քի պիր սէնէ սօնտայ Վահան կէլսին: Ծնունդ-  
 տայ սէնի նշանայաճաղղ, եազմշ օլտուղում գըղ-  
 լարն հանկըսնը իսթէրսէն պիլտիրէսին. մէքթու-  
 պընըզ էքսիկ էթմէին. պագի տօալար:

ՏԻԿ. ՆԵԿՏԱՐԻՉԱ ՄԻԻՏԻՐԵԱՆ

Քոյրս փափաք մը ունէր, իմ Ամերիկա զալէս  
 ի վեր գրեթէ ամէն նամակի մէջ կը գրէ «Միրելի  
 եղբայ՛րս, թոյլտուութիւն տուր ինձ որ քեզ նշա-  
 նեմ»: Իբրեւ թէ պզտիկ եղած ատեննիս, այսինքն

օրօրոցի մէջ դեռ նշանուած եմ եղեր (պէշիկ ֆէրք-մէսի) և քոյրս կը սահանջէր որ մօրս խոստումն անպատճառ կատարուի: Բայց դժբախտաբար իւրաքանչիւր նամակին ժխտական պատասխան կուտայի. ոչ թէ աղջիկը չէի սիրեր, այլ կ'ուզէի նախ ապագաս բարուոքել: Քոյրս սխալ էր հասկցած ինձ և այս անգամ զրկած էր 3—4 օրիորդներու լուսանըկարներ, կենսազրական տողերով միասին զորս չեմ ուզեր հրապարակ դնել, անոնցմէ մէկ հատը միայն հոս կը դնեմ ցոյց տալու համար թէ քոյրս որքան բաղձացող էր իմ նշանուելուս:

1912 Ապրիլ 23, Նիրգէ

Սէվկիւլիւ վէ արզուլու

Պիրատերիմ Սեննքերիմ Խըտրեան

Էվէլա կիւլտէն նաղիկ հաթընդը իսթիֆսար պիրլէ, ումարմ քի պիլա քետերսիղսինիզ:

Թարիդտէն իքի հաֆթայ էվէլ պիր դթայ նամէնիղէ նայիլ օլարագ մէմնուն օլտում: Կէօնտէրմիշ օլտուդուն լուսանկարը ալտզ. էօյլէ քի, դարան դարանայ օլտու: Թաֆսիրինէ պագպ սէօյլէյօրմ ամայ հէշ պիր ճէվապ վէրմէեօր, «գուրպէթլիզ հասրէթլիզ նէ ջարէ» շիմտի պու թարաֆն ասաիշընը սիվալ էտէրսէն, Թիւրքիանն տիւղէնի եօզ, նասլ քի սիղէ մալիմ արզուլու դարտաշմ էնիշտէնէ վէ կիւճիւկ Վահանայ սէլամ սէօյլէ արթզ էգսիկ հէլալ էտին, պիղիմ նէ օլաճաղմզ պէլլի տէիլ. նէ շարէ նէ շարէ էլիմտէ եազմ եօզ, նէ գոսր արզու նամիլէր եազմագ իսթիեօրում, տէրթլի դարնտաշլա-

բըմ սիզ կիտէլի կիւլ պէնդիմ սօլտու: Սիզի վալի-  
տէնիզ պանայ թէպէրիք գօյտու. լ'էպէրիկինիզ  
պէնտէ գալսն սէվկիւլիլէրիմ. շու սէլըզանն պա-  
յիբնտան էնէրքէն, պասպ իզէնկիէ աթայ պինէր-  
քէն, սիզ եօլունուզու դուրպէթ իլէ տէօնէրքէն,  
սանտմ քի ճանմ ճանտան այրլտը: Այրլտմ էլ օլ-  
տում սիզին իշուն եանայ եանայ քիւլ օլտում: Սէվ-  
կիւլիւ դարնտաշմ Սենեքերիմ էվէլքի մէգթուպա-  
բընտայ եազընօր իտինքի պանայ ասլայ գըզ լաֆը  
էթմէն: Պէն իւչ-տէօրթ տէֆայ եազում կէնէ եազը-  
նօրում նիշուն տէրսին, էվիմիզէ էլ կէլմէսին տէ-  
յու: էլլէր տիեար տիեար արաեօր պիզ էլիմիզին ի-  
շինտէքի գըզը նիյէ էլէ վէրեւիմ: էսկեարճլըզ պօյ-  
նումուզու պիզիւօր տէմիշսին. էկէր պու գըզը ալ-  
սան էսկեարտան դուրթուլուբսուն. մանճըսնտան  
շէհէրտէն վէ սաիր երլէրտէն տիւնիւր կէլտիլէր  
պէն վէրտիբմէտիմ, շեհէրտէն զէնկին երտէն կէլ-  
տիլէր իսթէմէեէ Մկրտիշ էֆ. սէօզ վէրտի լազին  
պէն պրազմատմ: Հայվան տայ ռիեօր քի դուրպէթէ  
վէրմէմ էմմիմին օղլու վար օնա վէրիրիմ. սէվ-  
կիւլի դարտաշմ սէն էվէլքինի պէլլէմէ, եօյլէ պիբ  
գըզ օլտու քի էկէր կէօզիւն իլէ կէօրսէն միւճէրէթ  
հէ տէրսին: Պէն եալան իսէմ կէլէն եօլճուլարտան  
սէվալ էթ: Գըզ տաՀայ կիւճիւկ տր 2—3 սէնէ օր-  
տայ տուր սօնրայ Արմենակ իլէ կէլիբսին էվլէնմէէ.  
պուրտան օրայա դտար բիճա էտէրիմ պու տէֆայ  
սէօզիւմիւ բէտ էթմէ տօսթայ տիշմանայ դարշը,  
սէն հէ տէրսէնտէ տէմէսէնտէ պէն նշանայաճաղմ,

օնայ կէօրէ պու՝ մէգթուպումուն ճիվապրնը պէկէ-  
րիմ :

#### ՏԻԿ. ՆԵԿՏԱՐԻԶԱ ՄԻՒՏԻՐԵԱՆ

Քրոջս փափաքը միայն ինձ նշանելու մէջ չէր  
կայանար. անոր նպատակը ինձ դիւրութեամբ եր-  
կիր տանիլն էր, վախճալով մի գուցէ յաւիտեանա-  
պէս փակուած մնամ այս երկրին և կամ շատ ուշ վե-  
րադառնամ : Բայց աւա՛ղ, որ ան չկրցաւ իր փա-  
փաքին հասնիլ : Եկողներ կը պատմեն թէ այն Նիր-  
զէցին որ Ամբրիկա կուգայ, ջոյրս պիտի երթար ա-  
նոր քով աչքի արցունքով պատուիրելու որ ինձ բե-  
րեն իր պահանջներն ու պայմանները : Ոչ այս ե-  
ղաւ, ոչ ալ այն : Մեր ծրագիրները ջուրն ինկան.  
ապագան դրեթէ խորտակուած է և մասամբ յուսա-  
հատութեան եմ ենթարկուած : Այսօր ուրեմն չկայ  
ջոյրս, որ երէկ զեղեցիկ ու կարօտալից նամակներ  
կը դրէր և ես արտասուելով կը կարգայի : Կորսը-  
ւած է թերեւս այն ջոյրս, որ երէկ եկողներու հետ  
նուէրներ կ'ուղարկէր ինձ և ես ուրախութեամբ կը  
վայելէի. չը կայ վերջապէս ան՝ որ իմ ապագաս  
բարուոքելու կ'աշխատէր : Որքա՛ն դառնաղէտ փո-  
փոփոխութիւն, այժմ ե՛ս եմ որ աւելի մտահոգուած  
եմ իր անյայտ ներկայով և դառն գալիքով : Թրքա-  
կան իժերն ո՞վ դիտէ ո՞ր սարերու վրայ մահացուցին  
դայն կամ բանտարկեցին հարէմի մէջ : Մի յուսա-  
հատի՛ր ջոյր իմ. երէկուան քու հետաքրքրութեան,  
փոխադարձ սէր ու կարօտ ունինք քեզ համար : Պի-  
տի հասնի մօտ ատենէն այն օրը, երբ ազատ շուշ

պիտի քաշենք և պիտի դանք միանալ ձեզ հետ :  
Դուք մեզ չէք մոռցած,  
Մենք ալ ձեզ չը պիտի մոռնանք :

### ՀՕՐԵՂԲԱՅՐՆԵՐՍ ՈՒ ԱՆՈՆՑ ԿԵԱՆՔԸ

Նախորդ էջերուն մէջ ըսած էի թէ Խորեան դեր-  
դաստանը որ մօտաւորապէս 1765 թուին Նիրդէ ե-  
կած Հաստատուած էր, իրենց զաւակները եղած են  
Պալ աղա, Սարգիս, Կարապետ և Խաչեր : Պալ ա-  
ղա յի մասին պէտք եղածները խօսած ենք, կարգը  
Սարգիսինն է : Սարգիս էմին աստուածավախ, մար-  
դասէր, քրիստոնեայ և ինքնագլուխ ծերունի մըն  
էր : Արհեստի ուէ ընդունակութիւն չունենալուն  
համար եղբայրներն յարմար դատած են զնել քանի  
մը զոյգ եղ և մէկ քանի կտոր արտ հողագործու-  
թեամբ պարապելու : Այս ալիւոր ծերունին ունե-  
ցած է երկու աղջիկ զաւակներ՝ Եղիսարեթ և Սրբու-  
հի : Եղիսարեթ ամուսնացած է Կարապետ աղա Բաւ-  
լիանի հետ, իսկ կրտսեր աղջիկը Սրբուհին՝ Կա-  
րապետ Հաճի Խաչերեանի հետ : Մանչ զաւակ չու-  
նենալուն՝ Խաչերեան — արդէն տան փեսայ — կը  
ձգէ աղջիկ զաւակներն ու կինը և մօտ 20 տարի է  
կորսուած կը մնայ : Սրբուհին իր աղջիկները մեծ-  
ցուցած է իր ճակտի քրտինքով, մեծը, ճարպիկ ու  
զործունեայ՝ գորգ կը շինէր և դիւրութեամբ օրա-  
պահիկնին կը ճարէին : Ծերունի Սարգիս էմին կը  
մեռնի 75 տարիքին մէջ, թողելով բաւականաչափ  
հարստութիւն, տուն, այգիներ և այլն :

Կարապետ Խորեանի մասին դժբախտաբար շատ  
տեղեկութիւն չեմ կրցած քաղել. միայն կ'ըսեն թէ

նրբաճաշակ և նիհարակազմ ըլլալուն համար ու  
 զարկած են Պօլիս որ վաճառականութեամբ զրադի:  
 Կարապետ էմին ունեցած է երկու զաւակներ մէկ  
 մանչ, մէկ աղջիկ Սերովբէ և Եղիսարեթ: Եղիսա-  
 րեթ ամուսնացած է Յակօր աղա Հաճի Պետրոսեա-  
 նի հետ, իսկ Սերովբէն՝ Մաքրուհի Միւտիրեանի  
 հետ: Աղնիւ ու առաքինի տիկին մըն էր. ամուսինը  
 թէպէտ բարկացուտ, ինք սակայն լուրջ էր ու համ-  
 բերող: Ունեցած են 6—7 զաւակներ, բայց մէկ քա-  
 նին մեռնելով մնացեր են մէկ մանչ և երկու աղջիկ-  
 ներ, Կարապետ, Վերոնիքա և . . . . . : Բնութիւ-  
 նը չէ թողած որ հանգիստ կեանք վարեն: Չաւակնե-  
 րու մահէն ետք օր մըն ալ լսեցի որ կարճատեւ հի-  
 ւանդութենէ մը ետք Մաքրուհին ալ մեռեր է թողե-  
 լով փոքրիկ զաւակներ: Հօրեղբօրորդին Սերովբէն  
 կ'զրադէր երկաթազործութեամբ. ջղայնուտ էր ու  
 հայհոյասէր. բարկութեան պարագային չէր խնա-  
 յեր նոյնիսկ բարեկամի ու ազգականի: Ունեցած է  
 փոթորկալից կեանք մը: Վերջերս իր մէկ տղան Կա-  
 րապետը զրկած է Ամերիկա և ինք ալ զգալով թէ  
 շա՛տ շա՛տ մեղանշումներ է ըրած Տիրոջ դէմ գացեր  
 է Երուսաղէմ թողութիւն խնդրելու և միևնոյն ա-  
 տեն այնքան ցանկալի մահտեսի տիտղոսին արժա-  
 նանալու:

Սաչեր Ստրեան՝ աղնիւ ու զարգացած երիտա-  
 սարդ մը, իր ուսմունքն առած է (եթէ չեմ սխալիր)  
 Կեսարիոյ մէջ, և ուսուցչութեան պաշտօն վարած  
 է Նիրդէ 5—6 տարի: Ապա մեկնած է Պօլիս զրադ-  
 ուելով քանդակազործութեամբ, այնպէս որ շատ  
 խաղաղ և հանգիստ կեանք վարած է, միակ դըժ-



բախտութիւնը որուն ենթարկուած է պատանեկան օրերուն, այն է որ քարի մը տակ ճզմելէ վերջ իր ձեռքը, կորսնցուցած է երկու մատը: Պաշեր էմին ամուսնացած է . . . . . Հետ և աղջիկ մը ունենալէ ետք կինը մեռած է և երկրորդ անգամ ամուսնացած է օր. Նաղլու Ապահանի հետ: Յաղթանդամ, վայելչակազմ, գործունեայ և ճարպիկ տիկին մը, որու նմանը հազուադիւս է: Ունեցած է մէկ մանչ և հինգ աղջիկ: Նախորդ կնոջմէ ունեցած աղջիկը ամուսնացած է մօրեղբօրս Մ. Պօղոս Հանի Սարգիսեանի հետ, իսկ միւս զաւակներն են Երանիցայ . . . . . Չապէլ, Եղիսարեթ և Հայկանուշ: Պաշեր էմին բաւական դրամի տէր ըլլալով դիւղ կը դառնայ որպէսզի ծերութեան օրերը խաղաղ յարկի տակ անցունէ: Տղան Կարապետի պղտիկութեան պատճառաւ որեւէ գործ չեն կրնար ընել, որով պատրաստ դրամը շուտով կը հալի և ինք կը մեռնի 60—65 տարիքին, թողլով ընտանեկան ամբողջ հոգերը փոքրիկ Կարապետի վրին: Ան ստիպուեցաւ դպրոցը ձգել և դանակադործութիւն սովորիլ: Աղջիկները բարեբախտաբար շուտ հասակ առած գործ գործելով սկսան ապրիլ: Ունէին խաղողի այգիներ, պարտէզներ և տուն: Կարելի՞ է մտածել թէ այդ փափկասուն և արեւի երես շտեմնող օրիորդներուն վիճակը որքա՞ն մխիթարական է, հասնող լուրերուն նայելով մարդ պէտք է . . . . . խելագարի:

### ՄՆՈՒՆԴԷՍ ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ

Կը պատմեն թէ պղտիկութեանս եղած եմ սաստիկ ամօթխած, գրել-կարդալու անընդունակ, այն-

պէս որ բոլոր տարեկիցներս կը յառաջանային, իսկ  
 ես անկարող էի նոյնիսկ ա, բ, սովրելու: Բայց եր-  
 կար չմնացի այդ վիճակիս մէջ: Զգետնած այդ թու-  
 լամորթի ունակութիւնները, հազիւ 10—12 տարու,  
 հողով-սրտով փարեցայ գրքերուս: Մի քանի տար-  
 ուայ ընթացքին անցայ ոչ միայն տարեկիցներս,  
 այլ՝ դասընկերներս, դրեթէ առաջին տեղը գրաւե-  
 ցի դպրոցին մէջ: Այս յեղաշրջումը տեղի ունեցաւ  
 պ. Կ. Ասլպէկեանի օրով. յետոյ՝ Սրապեան վար-  
 ժապետի ձեռքին տակ բաւական տաճկերէն սովրե-  
 ցայ: Ահա եկաւ սրն. Յակոբ Հաճնլեանը, Ս. Կա-  
 րապետի վանքէն բնջանաւարտ: Դպրոցը լրացուցած  
 առաջին անգամն էր որ ուսուցչութեան կը հրաւիր-  
 ուէր Նիրզէ Չձ ոսկի թոշակով, և հետզհետէ աւել-  
 ցաւ: Պրն. Յակոբ օժտուած էր լաւ ընդունակութիւ-  
 նով: Առաջին տարին պէտք եղածէն աւելի հող տա-  
 րաւ աշակերտներուն, այնպէս որ նախորդ ուսու-  
 ցիչներու չորս տարուայ սովրեցուցածը դրեթէ մէ-  
 կով աւարտեց: Դպրոցին մէջ բացառիկ դիրք կը դը-  
 րաւէինք հինգերորդ դասարանի աշակերտներս, պ.  
 Յակոբ կիսով չափ մեղմով կ'գրադէր: Դաս սիրելու  
 համար երեկոները մասնաւոր իր սենեակը կ'երթա-  
 յինք: Առանձնաշնորհեալներ էինք կարծես: Զեմ  
 մոտնար մէկ պարազայ միայն երբ օր մը առանց  
 յանցանքի լաւ ֆալախկա մը քաշեց ոտքերուս: Եւ  
 օր մըն ալ դաս չսերտելնուս համար իրրեւ պատիժ  
 եկեղեցու դուռը կանգնեցուց մեզ: Երկրորդ տարին  
 թուրքաւ անոր ետանդը: Գիւղացիք տեղեկացան ե-  
 ղելութեան: Հակառակ «գործիդ հող տար» սաս-  
 տումներուն, ան մնաց կրկին անտարբեր: Ըմբոս-

տութիւնը ծայր տուաւ, փորձեր եղան նոյնիսկ աշակերտութեան կողմէ՛ զայն ծեծելու: Բայց ես համամիտ չգտնուեցայ, միևնոյն տանն ընկերներուս վախէն ձայն չէի հաներ: Փորձը պարապ ելնելով՝ առաջին կարգի աշակերտներ սկսան պաղիլ դպրոցէն՝ բացի ինձմէ: Ես աւելի ետանդ մը զզացի: Հինգ հոգիէն ես միայն մնացի մեր դասարանը. դիւղացիք ալ չէին ուղեր ուսուցիչը, բայց որովհետեւ պայմանաւորուած էին ամբողջ տարուայ համար, ստիպուած էին Ց ամիս ես պահել: այս ժամանակամիջոցին ահա ան ջանաց իր կարողութեան չափով՝ ինձ սովբեցնել ի հեծուկս միւսներուն: Իսկապէս ես ալ ուսուցիչներուս մեծ գոհունակութիւն կը պատճառէի, որովհետեւ ժրջան և յառաջդիմասէր էի, նաև օժտուած սուր յիշողութիւնով: Ինչպէս ըսի, կը գոհացնէի տենջիբս հերոսի նման մրցանակներ շահելով: Երկու անգամ մրցանակի արժանացայ տարեկան քննութիւններուն: Յաճախակի մրցումներէն ալ շատ շահած եմ: Դասերու միջոցին ըրած դատողութիւններուս համար հիացում կը խլէի: Ծրանսերէնի մէջ թերի էի, ոչ մէկ փափաք ունէի սովբելու: Թուարանութեան մէջ այնքան յաջողակ էի որքան աշակերտի մը համար պատրաստուած յայտագիրը կը թոյլատրէր: Պատմութեան դասօ կը պատրաստէի ինձմէ պահանջուածէն աւելին. միւսներուն ալ գրեթէ հաւասար յաջողութիւն ունէի: Միակ դժբախտութիւնը գործնական երաժշտութեան բացակայութիւնն էր. անհուն տենջանքս էր նուազել որեւէ գործի: Այն համոզումն ունէի թէ անանց երաժշտութեան պատշաճ կրթու-

Թիւն չի կրնար ըլլալ: Պրն. Յակոբի անուրանալի բարիքներէն մին ալ սա եղաւ որ երբ առանձին էի մնացեր դասարանիս մէջ, սահմանուած դասերէն սկսաւ կրկնակի ժամեր յատկացնել ինձ և երեկոներն ալ բոլորովին յայտադրէ դուրս կը սովորէի Թուրքերէն օրէնսգիտութիւն, տաճկական գրականութիւն և այլն, որոնց որոշ չափով հմուտ էի:

Աւագ որ Տ ամսուան ընթացքն անյաւ շատ շուտ ու իմ ծրագիրներս մնացին կիս-կատար: Մեր սենեակներէն մէկուն մէջ ունէինք մասնաւոր շինուած անկողնոց մը, ուր դրացիներ կը հաւաքուէին ամէն իրիկուն (ձմեռը մասնաւորապէս) չին ու նոր կտակարանէ պատմութիւններ կ'ընէին:

Այսպէս թէ այնպէս, երկար վէճերէ ետք ու սուցիչս մեկնեցաւ գիւղէն և նոր վարժապետ մը բերուեցաւ Սաչիկ էֆ. անունով (Թոմարգացի): Առաջին օրը գացի դպրոց, որքան ալ իրենց տեղի վանքէն շրջանաւարտ, բայց մեր կարգացած գըրքերէն տեղեկութիւն իսկ չունէր, ուստի ստիպուեցայ լքել դպրոցը: Հայրս ու եղբայրս առաջարկեցին ինձ Ս. Կարապետ երթալ, յիմարարար մերժեցի: Թալաս քօլէճ նոյնպէ՛ս: Մշտական առարկութիւնս այն էր թէ բաւականաչափ հայերէն գիտեմ: Հայրս չէր յուսահատեր սակայն, այս անգամ ուրիշներու միջնորդութեամբ սկսաւ գործի մինչև չը կրնալով զիմանալ մօրաբրոջս եւ աղջկան պնդումներուն, խոստացայ վանք մտնել և վարդապետ դուրս գալ, ուրախ էին ամէնքն ալ, որովհետև մեր բաղձամարդ տունէն երեւի մէկն հարկաւոր էր որպէս միջնորդ արքայութիւն մտնելու զիւրաւ:

Մ. էՖ. Միւտիրեանի ձեռքով վերջ էին դրած բանակցութիւնները տեսչին հետ ինձ ձրիավարժ ընդունելու: Պատրաստ էի մեկնելու երբ յանկարծ այցելութիւնն ընդունեցի մեր ազգականներէն Զապրեան Ադա Պապային: Պատմեցի մտադրութիւնս անոր և սաստիկ զայրացաւ և բացարձակապէս յիմարքայլ անուանեց ու դառնալով ինձ ըսաւ. «Բեզ կ'ըսեմ, տղա՛ս, վարդապետէն փարա չերլլեր, մարդապետէն խօսիր նայինք: Կուզե՞ս ապառային խակական մարդ մը դառնալ, անցիր արտասահման, Եւրոպա կամ Ամերիկա. ոչ ամուսնացիր և ոչ իսկ մտածէ՛ այդ մասին: Կղերական երբէք չըլլաս»:

Քաջալերուած նոր խրատներէն սկսայ յամառօրէն մերժել: Իբր սպառնալիք չհամակերպումիս, հայրս որոշեց ինձ աշկերտ տալ որեւէ արհեստաւորի մօտ, բայց մեղքնալով տարիքիս աննկատ անցաւ:

Քոյրս տան մէջ գորդ կը շինէր, առժամապէս կարգուեցայ անոր օգնական, բայց աւա՛ղ, շատ քիչ տեւեց հաճոյալի զբաղմունքս, փոխադրուեցայ այս անգամ հօրս մօտ: Իսկապէս կարօտ չէր ինձ, որովհետեւ կային մէկէ աւելի օգնողներ, ինչ և իցէ երկրորդ տարին բաւական գո՛հ կը ձգէի զայն: Յետոյ ունեցանք նպարավաճառի խանութ մեծ եղբօրս ձեռքին տակ: Օրին մէկն ալ իմացանք որ ան առանց մեզ լուր տալու ձգեր Պօլիս է գացեր: Յաջորդը ևս եղայ, փոքր ըլլալով սակայն թիւրքի մը հետ ընկեր եղայ: Վեց ամիս հազիւ տեւեց և յանկարծ եղբօրմէս նամակ եկաւ Ամերիկայէն որ ինձ կ'ուզէր անպայման: Հազիւ քիչ շատ վարժուած գործիս, կրկին հեռացայ երկար ճամբայ ձեռք առ-

նելու: Չմոռնամ ըսելու որ այդ շրջանին մէջ վաշ-  
լած կեանքս պէյերու և աղաներու հետ ո՛չ ունեցեր  
եմ և ո՛չ ալ կրնամ ունենալ:

### ԴԷՊԻ ԱՄԵՐԻԿԱ

Նախ քան նամակն ստանալս, հայրս մարդ էր  
ուղարկած ետեւէս դատկի արձակուրդն իրենց հետ  
անցնելու և անձամբ պատմելու անտեղի լուրեր, ո-  
րոնք կը խօսուին եղեր իմ մասին. մերժեցի երթալ  
խանութն առարկելով: Բայց ամիս մը անց՝ կըր-  
կին նոյն մարդը՝ Կարապետ Թորոսեան ետեւէս ե-  
կաւ եզրօրս նամակն ալ հետը: Դժուար էր դիւզէն  
բաժնուիլ, բայց ստիպումին չէի կրնար ընդդիմա-  
նալ: Եղելութիւնը պատմեցի ընկերոջս, շատ ցա-  
ւեցաւ, բայց ի՞նչ օգուտ, պէտք էր համակերպէի:  
Վերջին մնաք բարով ըսելէ վերջ բարեկամներու  
մեկնեցայ դիւզ: Մեր տան մէջ մեծ եռուզեռ կար,  
ամէն ինչ պատրաստուած էր ճամբու համար: Մա-  
յիս վեցն էր մեկնումի օրը: Յաջորդ օրը մայիս եօ-  
թը, Նիքոլէի պաշտօնական ուրախութեան տօնն է,  
հակառակ ատոր չէի կրնար ետ մնալ: Ազգականներ  
ու բարեկամներ նախօրօք շրջապատած էին մեզ,  
կերութիւն, ուրախութիւնը կատարեալ էր. վեր-  
ջին օրը, ժամը եօթին երբ ճամբայ պիտի ելնէինք,  
հիւրասեղանին նախադահող Տ. Գարեգինը խօսք ա-  
ռաւ դինիսով լեցուն բաժակը ձեռքը. — «Միրելի դա-  
ւա՛կս, այսօր քու վերջին օրդ է հայրենի օճախիդ  
մէջ: Բիշ վերջ պիտի մեկնիս դէպի հոն, ուր անծա-  
նօթ է քեզ: Վստահ եմ քու ծնողասիրութեան և հը-

նազանդութեան: Համեստ խրատ ծըն ալ ունի՞մ որ  
 երբէք չպէտք է մոռնաս, այն է՝ Զանա՛ որ տէր ըլ-  
 լաս առողջութեան, ու ապա դրամի: Երեքէն պա-  
 կաս և հինգէն աւելի շրջալ թէ կենաս: Մի մոռնար  
 ծնողքիդ արցունքը դէթ...»: Մաղթանքով ու կար-  
 ծիքով վերջացաւ սեղանը ու թափօրն ուղղուեցաւ  
 դէպի նիրգէի համբաւաւոր Աղբիւրը, ուր հաւաք-  
 ուած կային մօտ 200 հոգի: Գոնէն դուրս ելած պա-  
 հուս տունը բոլորովին դատարկ գտայ, պատերուն  
 ըսի մնաք բարովս, կառքը կ'սպասէր, չէի կրնար  
 արդէն քաշել, որովհետև ուժասպառած էի քնատու-  
 թեան պատճառով: Գիշերուան փոքր մնացորդը  
 լուսցուցած էի առանձնացած անկողնիս մէջ, ևն-  
 թակայ անվերջ մտածումներու: Յիշեցի մա՛յրս,  
 այն պաշտելի հողին, որ մեզմէ բաժնուած էր երկու  
 տարի առաջ: Հետզհետէ աչքիս առջև կը պատկե-  
 բանային իրմէն վայելած գուրգուրանքն ու բարի-  
 քը: Ի՞նչ վիճակի պիտի ենթարկուէր խեղճ կինը ե-  
 թէ այսօր ողջ ըլլար: Երջանիկ պիտի զգայի՞ դէթ  
 վերջին անգամ ձեռքն համբուրելով, ինչ որ գերեզ-  
 մանին քանի մը կաթիլ արցունք տալով բաւականա-  
 ցայ: Երկուքի կարօտը հաւասարապէս հօրմէս առի  
 տաքուկ լացով: Ընկերներս մեկնած էին արդէն,  
 հարկաւոր էր աճապարել: Վայրկեան մը արհամար-  
 հելով ամէն թոյլ մտածում վար իջայ կառքէն ու  
 քաշեցի բազմութեան հետ: Գպրոցի աշակերտները  
 կ'երդէին աւուր պատշաճի շարականներ: «Ըրաշա-  
 փառով»... հասանք գիւղի գիմաց: Վերջին պահն  
 էր. ճակտիս գրօշմուած համբոյրներուն համբանք  
 չկար: Ա՛խ, որքան ջերմ էր ու գուրգուրոտ քրօջս

Համբողջը: Փոքր դրամական նուէրներով վարձա-  
աւը բնէ վերջ ժամկոչն ու տնտեսը և աշակերտնե-  
րը, կառքը շարժեցաւ... ո՞ւր... Հայրս և մի քա-  
նի բարեկամներ ընկերացան մեզ մինչև Կեսարիա:  
Ճամբորդ ընկերներս էին Կարապետ Քէհեանեան և  
Հայկ Ազատեան: Ե—7 օրէն Հասանք Մերսին. կարգ  
մը դրամական խնդիրներու. Համար մնացինք հոն  
չորս օր: Իտալիայով պէտք է անցնէինք: Գիւղեր ու  
քաղաքներ Հանդիպելէ վերջ Հասանք Աղէքսանդ-  
րիա և երկու օր մնալէ ետք մեկնեցանք Նարոլի, և-  
ընթացական լոյսերով օժուն, Իտալիոյ պատմական  
քաղաքներէն: Ծ—6 օր մնացինք մաքուր հօթէլի մը  
մէջ, բոլոր ծախքը կը հողար նաւային ընկերու-  
թիւնը: Հայ խաչագողներու ստուար բանակ մը  
բոյն դրամ էր հոն, բայց մենք ազատ էինք անոնց-  
մէ: Նարոլիէն մինչև Նիւ Եօքք Հասանք 12 օրէն:  
Ճամբու հօթեր ունէի պահած, դժբախտաբար կոր-  
սընցուցած եմ, կը փորձեմ վերիվերոյ յիշածս հիմ-  
նական կէտերը միայն գրի առնել: Նարոլիէն այս  
կողմ շատ դժբախտ կղզայի, ուտել ու խմելէ հրա-  
ժարած էի: Հիւանդութեանս պատճառաւ դրամս  
յանձնած էի Քէհեանեանի, ու ահա էլիս Այլլընտ ել-  
նելու ժամանակ իրարմէ բաժնուած էինք անգիտակ-  
ցաբար: Մնացեր էի առանց դրամի: Երկու օրուան  
սպասումէ վերջ միայն եղբորմէս դրամ ստացայ ու  
համբայ ելայ Ուօթրթաուն, 910 յունիս 15ին շա-  
բաթ երեկոյեան ժամը 4ին տեղս Հասայ և երկու օր-  
ուան Հանգստէ վերջ դործ առի անմիջապէս Հուտ  
Բըպըրի մէջ, որ երկու օր տեւեց, մեռքերս վիրա-  
ւորեցի ստիպուեցայ ձգել: Յունիս 20ին կրկին ներս



ընդունուեցայ փէֆինկ րուսի մէջ գիշերը դորձելու՝ ուր կը կենամ մինչև այսօր: Կաշառակերութիւնը սարսափելի ասիտ էր դարձած դորձ հայթայթող կարգ մը մարդերու համար: Ասանց բացատութեան հայեր էին ամէնքն ալ, որոնք 5—50 տօլարի միշտ դորձ կը ճարէին: Ասոնց շարքին մէջ առաջնակարգ տեղ կը զբաւէր Յակոբ Հաճնլեան՝ նախկին սիրելի ուսուցիչս: Իր մասին լսած էի նախապէս եւ այն յոյսն ունէի որ փոխանակ զիս ալ շատ նորեկներու կարգը դասելու, ինձ աւելի հող պիտի տանէր: Սըխաւ դուրս եկայ: 25 տօլարով լաւ դորձի տիրացայ պրն. Յակոբի ոչ այնքան դորձը այլ ևրնւոյթն էր որ վատ ազդեց գրաս: Մէր էր առաջուան դազափարպան ուսուցիչս որ այսօր նիւթի տղմոտ խողովակէն կը սողար օրն ի րուն: Գործարանի մէջ կարգ մը յաջողութիւններ ունեցայ, իրն կը պարտիմ: Գործի փոփոխութիւններու ընթացքին կարգ մը եղբայրական սախանձներու հանդիպեցայ և քանի՞ անգամներ դորձէ զրկուելու վտանգին նօթարկուեցայ: Մինչև այսօր գրշերը դորձած եմ շարունակ և ոչ սէկ ասպատեհութիւն չստանամ: Նրբականով ոչ այսքան, բայց առողջութիւնովս նախանձելի եղած ես: Գործարարս սէկ ու կէս տարի մնալէ ետք եղբորս Վահանի հետ մեծ եղբորս հետ անհաստատանութիւն ունեցանք և բաժնուեցանք: Այս եղաւ պատճառ որ մեծ եղբայրս բոլորովին կտրէր յարաբերութիւնը ծնողքիս հետ, որոնց օգնելու պարտաւորութիւնը ուներուս ծանրացաւ: Վհատելու պատճառ մը չեղաւ այդ սակայն, ես հողացեր եմ ու պիտի հողամ մինչև կեանքիս վերջին օրը: Խնա-

յաճ գրամս որը որին հասցուցած եմ հօրս, նեղուե-  
լու պարագային՝ տակօսով կը նարէի ու կը զբէլէի.  
ահաւաստիկ զրկածս գրամին ընդհանուր դուժարը.  
198 օտմ. ոսկի և կամ 902-95 սէնթ:

Այս ժամանակամիջոցին եղբայրս գրամ չը զբը-  
կելէ զատ հօրս հանդիսան ալ խոտովելու դանազան  
հնարքներ կը բանեցնէր: Աղբայրական կապս թոյլ  
չի տար հրապարակելու անտեղի խնդիրներ: Միայն  
թէ երկրէն իմանալով զրկեցին նամակ մը ուղղուած  
մեծ եղբորս: .....

Գծառութեան ընթացքին շատ բարեկամներ ու  
ընկերներ սկսան ինձ խրատել որ խնայած ամբողջ  
գրամս չը յատկացնեմ ծնողքիս, որովհետև ապա-  
գային պիտի մնայի բացարձակապէս սէնթէ զուրկ  
և խրատ կուտային կրկին հաշտուիլ եղբորս հետ որ  
մասամբ ալ ան օգնէր: Այս առթիւ եկած են բազմա-  
թիւ նամակներ:

Շատ հետաքրքրական է մօրեղբորս Հանի Գօ-  
ղոսին այդ մասին գրած նամակը որմէ կուտամ քաղ-  
ուածաբար:

Դեկտ. 11, 1911, Նիրզէ

ՏրակՅլու

Սենեքերիմ պէկ Խըարեան

Արդուու եկէնիմ Սենեքերիմ, եիւքսէք նամը  
էլիտիեօրմ չօզ մէմնուն օլուեօրմ: Շու հալտէ սա-  
նայ պէր բիւամ վար, կէրէք ար քի զապուլ էտէ-  
սին. պու մէքթուպում սիզա կէլէնէ զատար Մնունդ

կէլիր կէօրէիմ սէնի Մնունդտայ դարտաշընին ես-  
նընայ կէթ վէ թէպրիզ էյլէ . պէօյիւք դարտաշն նէ  
դտար քէօթիւ իսէտէ կէնէ սիզ պէնիմ պաճմտան  
սօղտունզ լազմ տր տիւշման օլմամայլը : Սէվկիւլիւ  
եկէնիմ Սենեքերիմ պէկ, թոսունմ շիմտի սիզին ազ-  
լընըզ էիւքսէք տր . լազին պիր տէֆայ տաիին պա-  
շընտան կէշէնլէրը հիսայ էթ տէ , օնայ կէօրէ Ալ-  
լահա եարար Քիքիրէ խզմէթ էթ , եօզ իսէ սէնին  
քեարն Գըզլլ Լյմազ սուեու կիպի օլսա կէնէ Քայ-  
տասզ տր : Պու եազտզլարմայ գուսուր էթմէ կէնէ  
սէն պիլին : Պէնիմ պաշմտան կէշէնլէրի հիսայ էթ-  
տիմ վէ օնայ կէօրէ պու նամէի եազում էօյլէքի  
դանաթըն օլսուն : Պազի աֆիէթտէ դատիմ օ-  
լասն : Մա Քամիլեայ ճիւմլէթէն Հաթընզը սիվալ  
էտէրլէր :

Տայնզ

ՀԱՃԻ ՊՕՂՈՍ ՀԱՃԻ ՍԱՏԳԻՍԵԱՆ

Հակառակ զանազան դիմումներու ես շարունակ  
կը դրկէի հօրս Հարկ եղամ օգնութիւնը , այնպէս որ  
ոչ մէկ խղճի խայթ տանջած ըլլայ ինձ երբէք : Գո-  
վեստի նամակներ ալ ստացեր եմ զլիտ տէր բարե-  
կամներէ : Անոնցմէ մէկը կը գրէ .

1911 Օգոստոս 1 Նիրզէ

Սէիսավերլու

Պիրատերիմ միւսի Սենեքերիմ Խաղրեան  
Ճանիպի ալիսինէ

Իվէլլա պիլ խաստա սէլամ էտուպ խաթրը նազի-  
կանէլէրինիզ իսթիֆասար օլունուր ինշալլահ ա'հէթ

տասըներդ. սանիյէն պէնտէնիդի սէվալ էտէրսէ-  
նիդ յուլիս 4 թարիսլի մուհասպէթ նամէնիդի օ-  
գուեուպ զաթընըդտան մէմնույէթիմի իպրազ էյլէ-  
րիմ. պիրատէր Ալլահ կէօյնիւլիւն խայրըլի միւրա-  
տընը վերսին. հէվիսինին խաթըրընը ալտըդտան  
սօնրա շօնուզլարը տախի տիւշիւնիւեօրսունուզ.  
մէքթուպ կէլտիկընտէ Խտըր ազա Համխտեատա  
տիւլիւնէ տավէթլի իտի պալադա իլէ պէրասպէր Մի-  
րանը էվէրտի տարըսը պաշընըզա օլսուն պիրատէ-  
րիմ միւսիւ կարապեաէ տախի խուսուսի օլարազ  
սէլամ էտուպ կիւլ խաթըրընը արգու իլէ սէվալ է-  
տէրիմ ինչալլահ էյի բահաթսընըդ միւսիւ Վահանա  
տախի սէլամ էտուպ կիւլ խաթըրընը իսթիֆսար է-  
տէրիմ Վահան կէթտին կիտէլի պիր սէլամընը է-  
շիտմէտիմ պոււտան սօնրատա իսթէրսէն եազ իս-  
թէմէզսէն եազմա ճիւմլէ դօմշուլարա սէլամըմը  
զէպրիք էտէսին:

Պագի տօվալէր

ՅԱԿՈՒ Ս. ՃԷԼԷՊՃԵԱՆ

Իրերու այդ վիճակին մէջ գրեթէ անտեղեակ  
էի շրջապատիս ընկերային իրադարձութեան մինչև  
վրայ հասաւ Եւրոպական պատերազմն ու Հայկա-  
կան Աղէտը: Շատերու նման ես ալ մասնաւորապէս  
սկսայ յաճախել հայկական ժողովները և հետևիլ  
մամուլի: Վերջապէս նկատելով թէ անհատի բարձր  
պարտականութիւնը կը կայանայ հայրենիքի օգնե-  
լու գերին մէջ, որոշեցի անդամագրուիլ յարմարա-  
գոյնին: Չորս կուսակցութիւններէն ամենաժողո-

վրբդականը դուր եկաւ ինձ, այն է Հ. Յ. Դաշնակ-  
ցութիւնը: Ուստի համոզում կայացուցի նուիրուիչ  
էութեամբ անոր դրօշին: 1914 դեկտ. 20ին անդա-  
մադրուեցայ ուր կը մնամ և պիտի մնամ մինչև մահ:

Ամերիկա հասնելուս, առաջին բնակավայրս ե-  
ղաւ հայ համեստ ընտանիքի մը տունը: Պանդխտու-  
թիւն ըսուածը չէի զգացած կեանքիս մէջ: Շարու-  
նակ ապրած հայրենի օճախի մէջ հօր ու մօր հովա-  
նիի տակ, կեանքի պայմաններէն ստիպուած եկանք  
զարիպութեան գիրկը և բարերախտ եմ ըսելու որ  
հանդիպեցայ այնպիսի բախտաւորութեան, որը ա-  
զատեց ինձ մինչև այսօր պանդուխտ զգալէ: Ինչ-  
պէս ըսի առաջին անգամ հիւրընկալութիւնը վայելե-  
լեցի մի հայ ընտանիքի օժտուած ամենալաւ յատ-  
կութիւններով: Կար ալեւոր մազերով, ժպտուն  
դէմքով, աստուածավախ ծերունի կին մը զոր մայ-  
րիկ կը կոչէի և բառի իսկական առումով մայրիկ  
կոչուելու արժանի էր: Ինիկ Արարկիրցի, բայց  
կեանքի մեծ մասը անցուցած է Պալքանի մէջ: Ու-  
նեցած է ազգ. դաստիարակութիւն ստացած զա-  
ւակներ, որոնք Պուլկարիոյ մէջ ամուսնացած են:  
Իր աղջիկը ամուսնացնելով կիսակիրթ մարդու մը  
հետ և կամ են Ամերիկա 1906ին: Մայրիկին անունն  
էր Հեղինէ Արղումսեան: Ընտանիքի միւս անդամ-  
ներն էին Միհրան և Տիկին Ռ. Տօտազեան, և իրենց  
զաւակները Կ. Ս. և օր. Ս.: Հարուստ չէին, բայց  
միշտ կ'ապրէին ուրախ ու զուարթ կեանք մը: Տի-  
կին Ռ. ուսած է Պուլկարիոյ մէջ ու ապա՝ Պօլիս:  
Երեք տարուայ շրջանիս այնքան կը յարգէի զանոնք  
իրբեւ հարազատներ որ փոխադարձ կը յարգէին

դիս: Կը գուրգուրային վրաս՝ ինչպէս մայրս. այդ ընտանիքէն տեսած բարիքս շեմ կրնար ոչ մէկ ատեն փոխարինել, ատոր համար միշտ երախտագիտական վառ զգացում մը ունիմ անոնց հանդէպ:

Տիկին Ռ. համաձայն իր կրթուած մտքին, այսպէս կըսէր յաճախ. — «Եթէ կոշտ վարձունք կը տիրէ հայի ընտանեկան յարաբերութիւններուն մէջ, եթէ անպակաս են բամբասանքն ու կոխը, եթէ կը ստեն, կը խարեն և իրար կ'անարդեն, եթէ կը պակսի հոն գութն ու համակրանքը, հեղութիւնն ու ճշմարտախօսութիւնը, հայ մանուկը անխուսափելիօրէն պիտի վարակուի այդ ախտէն: Մենք՝ հայրերս ու մայրերս կը տեսնենք թէ պատասխանատուութեան ինչ ծանր բաժին վիճակուած է մեզ ապագայ սերունդն հասցնելու գործին մէջ»:

Այսպէս և նման նիւթերու շուրջ էր միշտ անոր խօսակցութիւնը. «Ճշմարիտ է, կ'աւելցնէր ան երբեմն, մեր յարկին տակ ալ կը պատահին այս կերպ վէճեր ու անհամաձայնութիւններ, բայց իմ կամքէս անկախ...»:

Ես խնդադին կը ծափահարեմ այս տիպի կիներու գնահատական քայլը և որքա՞ն զովելի է իսկապէս իրական սեռի այս յառաջդիմութիւնը: Թող բեկանուին այլեւս աւանդական այն շղթաները, որ դարեր շարունակ ճնշած են մեր մայրն ու քոյրը: Զարգացած մայրերն են որ պիտի առաջնորդը ըլլան ա յագայ սերունդին, որոնց այնօան կը կարօտի հիւծուած ու տանջուած հայրենիքը:

## ԵՂՐԱՅՐՆԵՐՍ

Անդրանիկ եղբայրս՝ Կարապետ ծնած է 1883 թուին: Քանի մը տարի դպրոց երթալէ ետք, հօրս մինակութեան պատճառաւ կը ստիպուի ձգել դըպրոցը: Կ'ամուսնանայ 1905ին օր. Ն. Ասլպէկեանի հետ: Բաւական լաւ դիրք ունէր ան Նիրզէի մէջ եւ կ'ղրադուէր յաճախ ազգային գործերով: Յետոյ մօրեղբօրս հետ թափառեցաւ երկու տարի շարունակ կարդ մը մեծ քաղաքներ, ի միջի այլոց Կեսարիա, Սերասսիա, Անտարա և այլն: Ոչ մէկ օգտակարութիւն ունեցած է այդ շրջանին, բացի փորձառութենէ և քիչ մըն ալ ինքնազարգացումէ: Պէտք եղածէն աւելի ընկերասէր ու ազգասէր էր ան, այնպէս որ ձմրան եղանակին ընկերներու համար սարքած երեկոյթներն անպակաս էին: Կարճ ժամանակ աշխատեցաւ հօրս հետ ու ապա բացաւ նպարավաճառի խանութ և յաջողութիւն գտաւ. բայց օրին մէկն ալ լսեցինք որ Ամերիկա եկած է: Առաջին անգամ կը հաստատուի Հըտսըն և մի քանի ամիս վերջ կը փոխադրուի Ուօթրթաուն՝ համբաւաւոր Հոլտին մէջ գործելու: 1910ին ես ալ եկայ իր քով և Տ—Ս ամիս վերջ ծրագրեցինք Վահանն ալ բերել Նուրիցային հետ: Ախոսս որ կնոջը գալէն ետք մեր ընտանեկան խաղաղութիւնը վրդովուեցաւ: Երկու տարի առած փէշս դեռ դոց իրեն տուած եմ, նոյնպէս և Վահանը: Բայց եղբայրս դուրս չեկաւ այն ինչ որ կ'ակնկալէինք. առաջին գոհը եղաւ Վահանը. ես իմացայ ու լուցի: Կը սպասէի վերջաւորութեան, բայց եղբայրս իր սանձը տուած էր կնոջ ձեռքը:

Օր ժը Վահանը տեսայ լալով, Հազար ու մէկ բաներ անցաւ մտքովս, մի գուցէ Հայրս մեռած ըլլար և կամ նման դժբախդութիւններ: Վերջապէս պընդումներուս վրայ ան սկսաւ պատմել.—

«Քանի ձը բողէ առաջ խնդուքի ձայներ լսեցի խոհանոցէն. ներս մտայ, եղբայրս ու Հարսն էին. ինձ տեսնելուն ինչ որ բան ծածկեցին ու կարմրեցան. տեսայ որ երկրի նսմակի թուղթ կար ձեռքերուն մէջ և որ ինձմէ կ'ուղէին պահել. լուռ ու ձունջ դուրս ելայ, ձայները վերսկսան: Մասնաւոր Հետաքրքրութիւն ձը արթնցաւ մէջս խմանալու թէ ինչ էր: Պզտիկ սատանայի պէս պահուած մէկ անկիւն սկսայ մտիկ ընել: Աստուած իմ, երբէք չէի կրնար երեւակայել այդպիսի դեհիկ վարձունք եղբորս կողմէ Հանդէպ մեր Հօր: Ձայները որ կը լսէի ոչ թէ ուրախութեան, այլ ծաղրանքի ճիշեր էին խոհանոցում կ'ընէ... քահքահին: Եղբայրս ասկէ առաջ իր պանակախիմ միջոցաւ կը փորձէ Հօրմէս 100 լիբրայի մուրհակ ձը առնել երեւակայութեամբ վճարուած կամ վճարելի պարտքի մը: Հօրս բացարձակ մերժումէն ետք, երբ կը ձգէ կ'երթայ գիւղ մը գործի, Հոն վէհի կը բռնուի միւտիքիմ Հետ և ապտակ մը կ'ուտէ, այդ պարագան կը յիշեն նսմակին մէջ և ապա եղբորս ու Հարսին ուրախանալու պատճառն այս էր...».

Վահանը զաղբեցաւ պատմելէ, արտասուքը կը Հոսէր սակայն: Ելայ անկողնէս ծայր աստիճան զայրացած, ինչ ընելուս անտեղեակ: Ու սկսայ մտածել ակամայ. ի՞նչ աստիճանի վատութիւն, ո՞՞րազործութեան աստիճան: Տարիներով ապրել Հօր թելին տակ անգործ ու թափառա-



չբըջիկ ու ապա անկէ ծուրհակ պահանջել շտրուած գրամի փոխարէն: Անմիտը չէր մտածեր որ թէպէտ իրմէն փոքր, բայց մտքով աւելի բարձր և բազուկով զօրաղոյն զեռ շատ եղբայրներ կայինք զոհուելու ամբողջութեամբ մեր հօր: Չկրցայ երկար համբերել. մտայ խոհանոց և մերկացուցի շատ կտրուկ — Դուն այլևս մեր եղբայրը չես, ըսի. անարժա՛ն զաւակ այն խեղճ ծերունիին, որու ապտակ ուտելովը կը հրճուիս, ամօթ ու նախատի՛նք: Այսօր ուրնէ պէտք է խզես յարաբերութիւնդ մեզ և մեր հօր հետ:

Չայրալից խօսքերուս փորձեցին պատասխանել երկաթի ճաղով ու փայտի կտորով: Բնականաբար խուսափիլ պէտք էր ու անմիջապէս մտայ սենեակ դուռը փակած. փառաւոր ծեծէ մը աղատեցայ լոկ մի քանի Մարաշլիներու միջամտութեան շնորհիւ: Այդ օրն իսկ հեռացայ տնէն Վահանին հետ: Կեանքերնիս խաղաղեցաւ ու աւելի եռանդով սկըսանք փարիլ մեր հօր օգնելու գործին:

Եկաւ պարագայ մը, որ գրամի պէտք ունեցանք, բայց պարտք ընելով գոհացանք: Ան ունեցաւ երեք զաւակներ Վարդուհի, Յովհաննէս և Եւա, բայց պէտք է ըսել որ ոչ մէկին ծննդեան կամ մկրտութեան ներկայ ենք եղեր: Երեք տարի շարունակ զժտուած ենք ապրեր: Հարկ կը համարեմ շեշտել որ այս խառնակութեան մէջ շատ կեղտոտ դեր խաղցաւ կրկին նախկին ուսուցիչս պարոն Յակոբը, շարափոխելով միշտ երկու կողմի խօսակցութիւնը: Գիշ հտք հաշտուեցանք, այդ ալ երկար չը տեսեց կնոջ անտաննիւ վարձունքին պատճառաւ:

## ՎԱՀԱՆԸ

Եղբորս՝ Վահանի ծննդեան թուականն է 1894: Ծատ չարքաչ պատանի էր: Դպրոց երթալու ոչ մէկ փափաք ունէր: Այդ պատճառաւ հօրս ու մօրս արհամարհանքին էր ենթակայ: Միատեղ կ'երթայինք, և յաճախ կռիւ կը ծագէր երկուքիս մէջ: 1911ին եկաւ Ամերիկա. ան ալ մեզ նման ապաստանեցաւ ՀԱՄԵՐ. 1—2 տարի վերջ ուրիշի խօսքին անսալով ձգեց, ցորեկներն աշխատելու համար, թող որ տարի մը վերջ կրկին դարձաւ: Արտաքին երեւոյթով ինքնահաւան ու խորամանկ կ'երեւի, բայց շատ անկեղծ է ու բնաւորութեամբ՝ հեզ: Միշտ սիրուած է իր շրջանակէն, միակ պակասութիւնը՝ սարսափելի շոայլ է. մինչև այսօր սէնթ իսկ չէ խնայած: Հայրենասէր է ծայր աստիճան և միշտ զոհուող կուսակցական շահերուն: Փոքր ատեն (հազիւ 9 ամսու) բանտ պատկամ է մօրս հետ, մօրեղբորս պատճառաւ: Բայց ո՞ւր է հիմակ. աւելորդ է ըսել, պարտականութեան ձայնին անսալով, նա հրամարեցաւ մեզմէ զորոքով ապացուցանելու այն՝ ինչ որ կը խօսէր երէկ ու առաջի օր: Պատուի դաշտն է հիմա իր հանգստավայրը...

## ՀՕՐԵՂՅՕՐՄ ՈՐԴԻՆԵՐԸ

Ներկայիս Ամերիկա ունի՞մ երկու հօրեղբորորդիներ Կարապետ Խ. Խըտրեան և Կարապետ Ս. Խըտրեան: Կարապետ Ա. ը ծնած է 1890ին: 5—6 տարեկան էր ան երբ հայրը վերադարձաւ Պօլսէն, ամէն ջանք կը թափէր ան շուտով սովորեցնելու տը-

դուն ինչ որ դիտէր. բայց ես կարծեմ որ անոր գործադրած մեթօսը տղուն դիտցածն ալ մոռցնել կուտար: Պզտիկ եղած ատեն շատ ուշիմ էր Կ-ը, այնպէս որ ա ու բ-ը անկէ սորվիլս լաւ կը յիշեմ: Դըսըրոցական պատանի էր զեռ ան երբ հայրը մեռաւ: Մօր և հինգ քոյրերու ապրուստը ինք պէտք էր հայթայթէր. ուստի ձղեց սեղան ու դիրք և զնաց Պէլէկէսի կոչուած գիւղը զանակադործութիւն սորվելու: Հինգ տարիներ դործելով շատ լաւ կըրցաւ ապրեցնել զանոնք: Քոյրերու դորդ շինելն ալ բնականաբար մեծ տեղ կը բռնէր: 1912ին եկաւ Ամերիկա. քիչ ժամանակէն իր պարտքը վճարելէ ետք, մօրն ալ օգնութեան հասաւ: Աշխարհասասան պատերազմը սակայն ոտնատակ ըրաւ ամէն ինչ: Ոչ մէկ լուր քոյրերէն ու ալեհեր մօրմէն: Բայց կարապետն յոյսով է թէ պիտի գայ դարձեալ այն օրը երբ խմբովին երկիր դարձած պիտի վերանորոգենք մեր քանդուած օճախները, խայթող վամբիրներու սատակին վրայ:

Ինչպէս բոլոր ներգէցիները նոյնպէս Խըտրեան գերդաստանի դաւակները պէտք է կուտանն ըլլան վերականգնեցնելու Խըտրեան տունը:

### ԿԱՐԱՊԵՏ Ս. ԽԸՏՐԵԱՆ

Որդին Սերովբէ Հօրեղբորս: Բարձրահասակ, յաղթանդամ, և քաջատղջ: Ծնած է 1894ին: Պատանեկութեան ատեն թոյլակազմ մէկն էր: Հօրը անուսութեան պատճառաւ տղան ալ մնաց դպրոցէ դուրի: Երկար տարիներ շարքաչ կեանքով օգնած է Հօրը խանութին մէջ: Երկու քոյրերէն և չորս եղ-

բայրներէն ինքն է միայն ողջ մնացած: Վերջերս՝ մօր. մահէն ետք թողելով տունն ամառի եկաւ Ամերիկա 1913ին: Ինչպէս մենք բողոքս՝ ան ալ ընդունուեցաւ: Հանրային համալսարանը, համբաւաւոր ՀՈԱՄԸ ու մի քանի տարուան խնայողութեամբ տէր եղաւ խանութի մը Ասաւրի Պօքրընի մէջ, ուր կը մնայ ներկայիս:

### ՊԱՐՈՅՐԸ ԵՒ ՍԱՐԳԻՍԸ

Երկու աննման անուններ 16 և 13 տարու: Տունին վարդերը, մեր զարդերը, ապագայի յոյսերը միակ: Պարոյրն օժտուած էր լաւ յատկութիւններով: Կարմրայտ, միջահասակ, կապոյտ աչերով, դեղին մազերով պատանի մըն էր: Արտաքինը համապատասխան ներքինին, միշտ հիացում կը խլէր ծանօթներէն: Աւանդական ամօթխածութենէ բուրրովին դերձ, նոր սերնդի նոր շառաւիղ էր ան. մեծ ու պզտիկ, հայր ու մայր տարբերութիւն չունէին անոր համար, շափահասի նման կ'արտայայտուէր ան համարձակ ու խրոխտ: Իր դիտակցութիւնը Խըտրեան գերդաստանի պապայի տեղն էր յառած զայն: Հպարտութեամբ կը դիտէինք զայն ու կը դուրդուրայինք յարգանքով: Վերջին աստիճանի սիրահար էր ուսման և շէր ուզէր բացակայիլ դպրոցէն մէկ ժամ իսկ: Կը սորվէր 4 լիզուններ եւ բաւական յառաջացած, քանի՜ անգամներ անդլիներէն դրած ու պահանջած է որ զինք բարձր դպրոց դրկեմ: Ս. Կարապետ կամ Թալաս դօլէն, այնտեղ էր ուղղուած շարունակ իր մասսեւեհոմունքը, իր փամակներէն օրինակ մը —

1913, Նոյ. 7, Նիքոէ

## Մեծապատիւ

## Նղբարք Աննեֆերիմ և վահան

Թուականէս շարաթ մը առաջ ձեր մէկ ձեռագիրն ստանալու պատիւն ունեցանք. որչափ ուրախութիւն զգացինք չեմ կրնար պատմել, անգոր է զբիշս: Է՛հ, հիմակ սիրելի եղբարք, ձեռնէ խնդրանք մը ունիմ: Նախ վեց Հարուածեան մը (ալթը արթէշ) . երկրորդ ժամացոյց մը, երրորդ լաստիկ կօշիկ մը, չորրորդ զլխարկ մը (քէփ) ասոնք ես կուզեմ ոչ թէ միայն ինձ համար այլ ձեր պատիւը բարձր պահելու համար: Նամանաւանդ դուք արդէն խոստացած էիք, եթէ խօսքերնիդ կը յարդէք, կատարեցէք ձեր խոստումը. առաջ կը փափաքէի Ամերիկա գալ, բայց ներկայիս չեմ ուզեր գալ հոս Ս. Կարապետ կամ Դալլաս դպրոց պիտի երթամ մինչև որ վկայական առնեմ: Պայմանաւ որ ապսպրանքներս զրկէք: Դար ձեռք կրկնելով կըսեմ թէ վերողբեալ պահանջներս անպայման պէտք է զրկէք որպէսզի ես ալ հոս դըպրոց երթամ: Յարգանքներով:

## Նղբայրնիդ

ՊԱՐՈՅՐ ԽԸՏՐԵԱՆ

1913ին, Հօրս մահէն ետք ստացոյ կարդ մը նամակներ որոնցմով բոլորովին տարբեր կ'արտայայտուէր երբեմնի ուսումնասենջ եղբայրս: Ատրճանակ մը ու ժամացոյց էր պահանջած: Զարմանալի կը թուէր ինձ. երէկուան դառնուկն այսօր գայլա-

բանութիւն կը փորձէր վրաս: Ուրիշներու գրեցի  
և տեղեկացայ որ առանց հսկողի մնալը առաջնոր-  
դեր է զինքը դուրսի աշխարհը՝ պաղելով դպրոցէն:  
Բոլորիս հանդէպ տածած է ան բուռն սէր, իր բոլոր  
նամակները կարդացեր եմ միշտ արցունքով, որով-  
հետև բոլորն ալ կը շօշափէին մահէ առաջ տեսու-  
թիւն: Ահաւասիկ իր տողերը.

Դեկտեմբեր 2, 1913, Նիքոլ

### Հիւրմէքլու

Պերատէր ազիզիմ Սենեֆերիմ վէ վահան

Պու կիւն Դեկտեմբեր 1, կիրակի կիւնիւ աղչամ,  
Աւագեան Սարգիս աղա կէլտի. լագին եաննայ կի-  
տիպ պիր խապէր ալամատմ: Իւզիւմ լիւզ մէսէլէսի  
իշուն փարա կէօնտէրմիշսին շօզ մէմնունում. Ալլահ  
կէօյնիւիւն միւրատնը վերսին. է՛յ պիրատէրլէր  
մէվլա պիղէ անա, պասպա մինասիպ կէօրմէմիշ  
պագալմ սօնումուղ նէ օլանաղ: Ամմա, պէն  
տախի նէ օլանաղմ օրաեայ մը կէլէճէղիմ եօզ իսէ  
պիր մէքթէպէմի կէօնտիրէճէգսինիղ. հէր հալ պա-  
նայ պիլտիրին, Ալլահ սաղլըզ վերսին պիր կիւն օ-  
լուր պուտայ կէշէր: Էհ, Սենեֆերիմ ալա աճապայ  
տիւնեայ կէօղիւ իլէ պիր կիւն կէօրիշէ պիլէճէգ-  
միիղ: Եօզ իսէ օտամը եօզ: Աղիզ պիրատէրիմ նէ օ-  
լուր իտի շու դարայ կիւնլէր օլմասսա իտի. «Տօզ-  
տում էօքսիւզ էօլտիւմ Փուդարէ կիւլտիրմէտի շու  
ճիհան պէնի»: «Ահ դարա ճիհան նէ օլուր իտի էթ-  
մէսսի իտի պէօյլէ պէնի...»: Եագանաղմ շօզ տըր

լազին լիսանմ վարժանոր. շուարէ տէկիլիմ քի սիղէ  
հէր թիլլիւ շէյլէր հաղաիմ. գուսուրայ նազար էթ-  
մէին պաղի աֆիէթ :

Միննէքտար պիրատերինիգ  
ՊԱՐՈՅՐ ԽԸՏՐԵԱՆ

Որոշումս կայացուցեր էի անժիջապէս զայն  
քովս բերել. 20 ոսկինոց չէք մը զրկած էի Սերովրէ  
էֆէնտիին որպէսզի Պարոյրը ճամբայ հանէ : Ան-  
միջական վրայ հասաւ Եւրոպական տաղնատալից  
կնճիւր որուն անձաան շմնաց կեսարիա : Քիչ ետքն  
էր որ Պարոյրէն նամակ ստացայ որով կը պարզէր  
թէ ինչպէս ճամբայ ընկնելու օրն իսկ վար են դրած  
բոլոր կառքերը և առժամապէս հրաման չկայ դուրս  
մեկնելու : Ահաւասիկ նախաքայլը քաւթառներու  
ապաղայ ջարդարարութեան : Կ'սպասէի անհամբեր  
երկրորդ նամակին, ստացայ՝ աւելի դառնաղէտ  
լուրեր պարունակող դրութիւնը, թէ կառավարու-  
թիւնը կարօտ է ժողովուրդի օգնութեան ու տունե-  
րէն քաղաքավարի թալանը սկսած է ծայր տալ, կը  
տանին առարկայ թէ ուտեստեղէն : Քսան ոսկի կըր-  
կին ուղած էր Պանք Օթօմանի հասցէով, ուղարկե-  
ցի շուտով : Երեք տարի է այս՝ ալ ոչ մէկ լուր :  
Վստահ եմ թէ ոճրագործի ճիրաններուն զոհ գնաց  
Պարոյրս : Հողակոյտիդ պիտի տամ վերջին համ-  
բոյրս, սիրելի եղբայր, թէ կարելի ըլլայ շիրիմդ  
գտնել, զուր տեղ պիտի հարցնեմ քեզ սպաննողի ա-  
նունը, անցած եմ քեղմէ, բայց վրէժիդ անլուծելի  
մնալն է որ ինձ կը տանջէ այսպէս չարաչար :

Սարգիս աղբարիկս արդար ու անմեղ երեխայ

մըն էր: Բարձրահասակ, սև մազերով, սև աչքերով, ժպտուն դէմքով Հնազանդ ու անկեղծ: Որևէ հրաման մեծերու կողմէ կը կատարէր բոլորակապ: Լաւ յատկութիւն մը ևս ունէր ան: Եթէ մէկէն առնելիք ունէինք, առանց մեզ լուր տալու ետեւէ կ'ըլլար ան մինչև որ գանձէր, այս նշան էր որ ան ապագային իր գործին տէր մէկը պիտի ըլլար: Բայց ո՞ր է հիմա. թերեւս ան հաղարաւոր անմեղ մանուկներու հետ թուրք եաթաղանին տակ աւանդեց հոգին:

Գլորոց երթալ երբէք չէր սիրեր: Միակ փափաքն էր ձի կամ էջ հեծնել, այս իսկ պատճառով հազար ու մէկ յանդիմանութեան կ'ենթարկուէր, բայց ինչ հոգն էր, տնական գործերով զբաղուիլ կ'ուզէր և հետևաբար մեր խրատները տեղ չէին բռներ: Այսօր ի՛նչ վիճակի ևս սիրելի Սարգիս: Գիտեմ թէ բանտարկուած ևս խցիկի մը մէջ կամ ընկած արիւնաթաթախ դաղանի մը հարուածէն, վստահ եմ սակայն որ անմեղներու արիւնը չի ցամքիր մինչև անով սնած ծաղիկները չբաղուին մօտաւոր ազգականներէն, վառ գոյնէն գուշակելու դործառուած ու՛րբը, որուն միակ վկաներն են անոնք, այդ անկեղու ծաղիկն ու խոտը...:

### ՄՕՐԵՂԲԱՅՐՍ ԵՒ ՈՐԴԻՆԵՐԸ

Միբայելի Հանի Սարգիսեան ծերունի մարդ մը, պուրժուա դասակարգին կը պատկանէր: Չէր ուզեր երբէք ուրիշին յառաջդիմութիւնը, ամէնքի մէջ պէտք էր ինք միայն մատնանշուէր: Հարստութիւն դիզելու միակ սկզբունքն անոր համար կձծիու-



Թիւնն էր, հետեւաբար երբէք չէր շեղեր անկէ: Իր կինը՝ մեծ մայրս, աշխատասէր և հնազանդ ըլլալով, էրկան հետ որոշ չափով հասած էին իրենց նըպատակին: Ունեցած են երեք տղայ, և երեք աղջիկ զաւակներ: Հանի Պապայ, Կարապետ, Հանի Պապոս, Եւա, Եղիաթեթ և Մարիամ: Հանի Պապան հօրը պէս կծծի ու նիւթապաշտ, գիշեր ցերեկ կ'աշխատէր: Ամուսնացած է բարեկեցիկ ընտանիքի մը աղջկան հետ: Հազիւ 45 տարու, յարաշար աշխատելուն պատճառաւ կը կնքէ մահկանացուն: Տէկ ամսուայ ընթացքին էրիկ-կնիկ կը յաջորդեն իրար, Թողելով երկու զաւակներ Աստուր և Միքայէլ: Վերջինին անունը փոխելով կ'ըսեն Աղապէյ: Աստուրը գործունեայ տղայ մըն էր: Իր նախահայրերուն նման կը գործէր անարտունջ: Ընտանեկան բուր հոգերը իր վրայ առած կը գիմազբաւէր ամէն խոչնդոտի: Աղապէյի մասին վերջէն պիտի խօսիմ համառօտ ակնարկով:



ՀԱՅԻ ՊՕՂՈՍԻ ԸՆՏԱՆԻԲԸ

## ՀԱՃԻ ՊՕՂՈՍ ՀԱՃԻ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Հաճի Պօղոս Ճանկութենէն եղամ է չափազանց շարքաչ ու բմբոստ և միշտ անհնազանդ ուսուցչի ու ծնողքի: Փոքր հասակէն կ'արթննայ անոր մէջ վառ սէրը դէպի յեղափոխութիւն և զարչանք՝ հանդէպ թրքական կարդ ու սարքին: Հնչակեան կուսակցութիւնը երկիր մուտ գտնելէն անմիջապէս ետք մասնաճիւղ կը հաստատուի Նիրդէի մէջ, սրուն կ'անդամագրուին տէրտէրէն սկսած մինչև վերջին համեստ գիւղացին: Հազիւ քանի մը տարուան կեանք ու ահա հալածանքի պատճառաւ կը կաղձալուծուի ամբողջապէս և ամէնքն ալ բացի շեռիէս, բերանները կը սրբեն: Հաճի Պօղոս սակայն երդում ըրած էր, տղամարդու ուխտ, յաւէտ մնալ հաւատարիմ իր ընդդրկած զաղափարին, ու ան առանց վհատելու տարիներ շարունակ ծառայաւ հալածանքին դէմ միտ-միտակ: Գոհ պիտի մնար գիւղացիներու անսարքերութենէն, եթէ մասնութիւն և դաւ չ'ընէին. ու խեղճն հարկադրուեցաւ նոյնիսկ աւազակութիւն ընել կիմն ու իր փորը կշտացնելու: Կեանքին մեծ մասն անցուցած է մեծ քաղաքներու բանակներուն մէջ, ի վերջոյ ներումի արժանանալով եկաւ գիւղ, գրպանով զատարկ, Ֆիդիքականով տկար:

Յեղափոխութիւնն ընդդրկելէն առաջ ամուսնացած էր հօրեղբորս աղջկան հետ, նրբալայել ու փափկակազմ տիկին մըն էր ան: Ամուսնոյն քաշած շարշարանքին ի տես սրտի ցաւի բնուեցաւ: Ունէին երեք աղջիկ և մէկ մանչ. Եղսարեթ, Սուլթան Մայրենի և Հաճիպէյ: Եղիսարէթ ամուսնացած է 18

տարիքին էֆէրէնցի լաւ երիտասարդի մը՝ Աւետիս Ազօղլանեանի հետ: Մօրեղբորս կինը տիկին Լուսաբեր քանի՛ անգամներ բանտ դացած է երկխան դիրկը: Միւս մնացած երկու զեռնաւոր օրիորդներն ո՞վ գիտէ ո՞ր թուրքի քմահաճոյքին ենթարկուեցան:

Հաճի պէյ ծնած է Նիրդէ 1893ին. քիչ ժամանակ պիւղի դպրոցն է յաճախած: Ի՞նչ տրամադրութեամբ խեղճ տղան հետեւէր դասերուն, երբ անդին ամէն օր ակննատես էր իր հօր վրայ գործադրուած չարչարանքին: Երկաթագործութեամբ կը պարսպէր: 1913ին եկաւ Ամերիկա, աւելորդ է ըսել մեր ՀԱՍՏը, ուր կը մնայ ցարդ: Հակառակ յեղափոխականի դաւակ ըլլալուն, այնքան ալ կրակոտ չէ Հաճի պէյը. խոնարհ ու լուրջ է, բայց և ունի ազատական ձգտումներ: Զինքի գործածութեան ալ բաւական հմտութիւն ունի: Ազգային ոգին իրմէ միշտ անպակաս է. կը հետաքրքրուի ազգային ցաւերով: 1915ին մտաւ Հ. Յ. Դ. դրօշին տակ, կը հաւատամ որ յաւիտեան պիտի մնայ հաւատարիմ:

Գանք Ազա պէյին, որի կեանքը կը նմանի ալեկոծ ծովու, եթէ մանրամասնութեան մտնենք՝ հատոր մը պէտք է գրուի: Ծննդեան թիւն է 1888: Հազիւ մէկ տարու հայրն ու մայրը կը մեռնին, բայց անոնց թողած հարստութեան շնորհիւ տղան լաւ պայմաններով կը խնամուի: 7 տարեկանէն սկսած համբաւ չահած էր իրրիւ վնասակար տղայ: Բոլոր զիւղացիք կը տրանջային անոր հասցուցած վնասին համար: Փայտէ դաւազան մը ունենալու համար չէր խնայեր պտղատու ծառերու: Մինչև վերջ դուրսն ապրողին համար աւելորդ չէ ըսել որ ուսում չէ ըս-

տացած երբէք: Հետզհետէ մեծնալով խանութ կ'երթար եզրօր հետ ոչ թէ գործելու, այլ օգնելու առ ու ծախի վերաբերեալ խնդիրներու մէջ: Այնքա՛ն ճարտիկ էր ու խարոյ որ շատերը գինք մամպագ կը կոչէին: Հասկցած-չհասկցած գործին մէջ կը մտնէր, և զարմանալին այն է որ միշտ յաջող դուրս կուգար: Առաջին կարգի ձիավարժ էր ու զէնք գործածող, թէպէտ շատ փորձանքներ են ելած ձեռքէն: Գպրոց, հարսանիք կամ այլուր, միշտ անբաժան եղած է պաղ երկաթէն: Ձին որու պարտէզ որ տանէր արածելու տէրը փոխան բարկութեան իր երեսը կ'առնէր ու կը հեռանար: Հակառակ իր անառակութեան, ասպետի ջիղ ունէր մէջը, որու համար կը յարգուէր մասնաւորապէս բարեկամ ու ազգականներէ: Առանց Աղապէյի ընկերական հաւաքոյթը անհամ էր: Երկրէն մեկնելուս չկրցայ գինք տեսնել վերջին անգամ: Քանի ծր ամիս ետք, իրմէն նամակ մը ստացայ որ ամուսնացեր է, չէի հաւատար. ուղեցի ստուգել և ահա պ. Յ. Ճէլէպճեան կ'իմացնէր ինձ որ ամուսնանալէն քիչ ետք զօրք են տարեր. բազմաթիւ փորձերէ ետք անկարելի եղաւ ազատել որեւէ կերպով: Բայց անոր նման ըմբոստ աղու մը համար ալ անհանդուրժելի էր գինուորական, այն ալ տանկական քմահաճ օրէնքը: Պալքանեան պատերազմը ծագած էր արդէն և իտիրունէն կոուի գլխաւոր կեդրոն: Ծնորհիւ իր ճարտիկութեան և կայտառութեան սիրելի կը զառնայ բանակին մէջ: Պատերազմի ճակատ չի գրկուիր, շատ հանդիստ ժամանակ կ'անցնէ: Իտիրնէն կը գրաւուի, Աղապէյ անորոչ գիրքի մէջ կը մնայ. կը ծրա-

գըրէ փախչիլ ու կը յաջողի: Քանի մը շարաթ կը անցունէ ժօրաբրոջ մօտ՝ Պօլիս. վերջն ալ կ'անցնի Ամերիկա 1913ին. Ան ալ Հուլան է, ուր կը դործէ ներկայիս:

### ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՈՒՅՈՒՄ ՃԵԱՆ

Գիւղի մեր մօտիկ ազգականներէն, Գուլումճը-եան դերդաստանէն Յովհաննէս անուն մէկը, մօտաւորապէս 1820ին կ'սկսի կեղծ դրամ շինել և հըրապարակ հանել 2—3 ընկերներով: Գաղանիքը չի տեսեր երկար. կառավարութիւնը կը հետապնդէ եւ կախաղան կը բարձրացնէ ընկերները, իսկ Գուլումճեան կերպով մը կը փախչի Երուսաղէմ: Շատ չանցած Հապէշխտանի թագաւորը ուխտի կուգայ հոն և Գուլումճեան կը յաջողի կերպով մը անոր ծանօթանալ: Կ'ըսուի որ այդ ժամանակները Հապէշխտանի մէջ գործածուած դրամը կաշի է եղեր: Գաղտնիքը կը պարզէ թագաւորին ու հետը ճամբայ կ'իյնայ: Տասը տարի վերջ ան կ'ընտրուի ներքին գործոց նախարար ու հակառակ երկիրը ամուսնացած ըլլալուն կ'ստիպուի երկրորդ կին մը առնել, որովհետեւ անկարելի կը դանէ առաջինը հոն տանիլ: Օտար պայմաններու տակ ապրելով հանդերձ չի մոռնար հայրենիքը և մանաւանդ կինն ու զաւակները, Երուսաղէմը ընտրելով հաղորդակցութեան միջոց: Օրին մէկը տղան՝ Աստուր չբաւականանալով եղած օգնութենէն, կ'որոշէ երթալ հօրը քով, այս նպատակով կ'անցնի Երուսաղէմ ու կը դիմէ վարդապետներուն: Ինչո՞ւ պիտի երթաս, կը հարցընեն. հայրս պիտի տեսնեմ անձամբ կը պատաս-

խանէ: Վարդապետները կը խոստանան անոնց հոն երթալու դրամը վճարել և խեղճ տղան համոզուելով 100 ոսկի կ'աննէ ու կը դառնայ: Այդ լճացած որջի բնակիչներուն վրայ մեծ կասկած կայ, կը կարծուի որ Գույումճեանի ուղարկած ահադին քանակութեամբ դումարներէն մէկ քնջին մասը միայն իրեններուն հասած է: Ուղղակի իրենց չէր կըրնար դրկել, որովհետև կառավարական հետապնդումներ տեղի կ'ունենային: Ամէն անգամ որ վարդապետները Աստուրին 50—60 ոսկի կուտային, զաղանիքը երեւան ելած է, աւաղ որ, մինչև այդ ատեն Յ. Գույումճեանը մեռած էր: Ինչպէս ըսի, բարձր դիրքի տիրանալով, մահուան պարագային մօտ չորս հարիւր միլիօն անգլիական ոսկի կը կըտակէ Նիրզէ բնակող ընտանիքին: Այդ լուրը «Ազատամարտ»ի միջոցաւ կը հասնի գիւղ: Իր թողը Յովհաննէս Գույումճեան կ'սկսի գործի. տարաբախտաբար կտակ ընողը չէ յիշած որ տեղացի ըլլալը, որով շատ մը Գույումճեաններ ոտքի կ'եննեն, բայց որոշ վկայութիւն չկարենալ տալուն բոլորն ալ անյաջողութեան կը մատնուին: Մերոնք բաւական դրամ ծախսելով մարդ կը դրկեն Պօլիս գործը հետապնդելու: Գույումճեան մեր գիւղի եկեղեցուն Հասէլչիստանէն նուէր էր դրկած մէկ ծածկոց (սեղանի) և սկիհը, որուն վրայ գրուած էր թուականը և իր անունը: Այդ աննէն մեծ փաստն էր և կը վաւերացուի Սուլթան Համիտէն և Օրմանեան պատրիարքէն: Գրեթէ ապահովուած էր դրամը: Համիտի թիկնապահներէն չէրքէզ... փաշան կ'առաջարկէ 5000 ոսկիի դատը գնել. չեն տար: Դժբախտա-

բար Սահմանադրութիւնը վրայ հասաւ, Սուլթանը՝ զահւրնկէց և Օրմանեան պաշտօնանկ, չէր քէզ փաշան փախաւ, դատն ալ կորսուեցաւ: Ոմանք կը կարծեն թէ դրամն իւրացուած է Համիտի և Օրմանեանի կողմէ, բայց թէ ի՛նչ աստիճանի իրականութիւն է՝ չենք դիտեր:

### ԱՍՏՈՒՐ ԳՈՒՅՈՒՄ ՃԵԱՆ


Երեւակայական հարստութեան անյոյս շառաւիղներէն մէկն է, ծնած Նիրզէ 1895ին: Բարեկեցիկ ընտանիքի մը զաւակ, ունէին խոշոր այգիներ Սըվղն ըսուած գիւղի մէջ: Յովհաննէս ազան ունեցած է երկու մանչ, մէկ աղջիկ, որոնց ոչ մէկը կրթութիւն ստացած է, կարապետ, Քիրրիանոս և Աննա: Տըղաքն հպարտ իրենց մականունով ամենամեծ դորձերու են ձեռնարկած, հոգ չէ թէ դուրս եկածը վընաս ըլլայ: Միակ պատճառը անոնց անդրադէտ ըլլալն էր: Քիրրիանոս ամուսնացած է հօրաքրոջս աղջկան Եղիսարեթին հետ և ունեցած է երկու մանչ, երեք աղջիկ: Աստուրն ըլլալով անդրանիկ զաւակը, հօրը մահէն վերջ ընտանեկան բեռին տակ ինկաւ: Եկեղճ պատանին կօշկակարութիւն սորվեցաւ, բայց այդ ալ բաւարար միջոց մը չէր տուն պահելու: Եղիսազար մօրեղբայրը բնականէն զթասիրտ կ'օղնէր անոնց կարելի եղած չափով: Օրին մէկը հօրմէս նամակ ստացայ, որով Աստուրի Ամբրիկա դալը անհրաժեշտ կը համարէր: Թիքէթ մը ճամբեցի ու ինք հոս հասաւ 1913ին: Առաջին տարիէն իսկ սկսաւ օղնել մօրը: Այսօր, պարտքերը տալէ վերջ՝ հանդիստ կ'ապրի, անձկանօք սպասե-



լով աղէտի վերջնական կէտին, այն յոյսով որ  
մայրն ու թոյրերը կրկին պիտի դանձ հող չէ կիսա-  
մեռ վիճակով:

### «ՆԻՐՁԷԷՆ ԼՈՒՐԵՐ»

1917 Օգոստոս 11 Թուակիր նամակ մը ստացայ  
Խնոււէն, ստորագրութեամբ Մելքոն Միւտիւրեա-  
նէ. նամակագիրը կ'ըսէ. Նիրզէին մէջ դրեթէ մարդ  
չէ մնացած, բացի քանի մը անհատներէ, իսկ Նիր-  
զէի գեղեցիկ աղջիկները շրջալայ թուրք դիւղացի-  
ները տարած են: Նամակագիրը կուտայ նաև շատ  
մը անուներ, որոնք ոչնչացել են դադանի ճիրան-  
ներուն մէջ: Ուէ Նիրզէցի ընթերցող մը անպայման  
կ'արտասուէ: Պարոն Մելքոնը Տարտանէլի կուրին  
մա նուկցած է, յետոյ դացած է Երզնկա և կերպով  
մը փախած է Խնու: Ըստ նամակագրին Նիրզէցի-  
ներէն մաս մը կ'ապրին դեռ դանադան քաղաքնե-  
րու մէջ և քանի մը երիտասարդներ ալ, զինուորու-  
թեան մէջ կը ծառայեն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՍԱԿԱՆՈՐԴԱՆԵՐ

## Գ Լ Ո Ւ Ն Գ.

## ՆԻՐԶԷՑԻՆԵՐԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

1890 թուականներուն Ամերիկա եկած են 3—4 նիրզէցիներ: Յովհաննէս աղա Թորոսեան, որդին՝ Յարութիւն, և Ս. Աւագեան: 6—7 տարիներ Լորէնս մնալով կը վերադառնան երկիր: Հին բէթիմի ժամանակ էր արդէն և կառավարական խստութիւններու կ'ենթարկուին: Ասոր վրայ նիրզէցիներ չեն համարձակիր մինչև անգամ Ամերիկան բերաննին առնել: Գաղարը տեսած է երկար. 1909ի առաջին ճամբորդն եղած է եզրայրս՝ Կարապետ Խըարեան: Հաստատուելով Ուոթրթաունի մէջ, քաջալերական նամակներ կը գրէ երկիր, ասոր վրայ նիրզէյի բոլոր երիտասարդութիւնը կը փափաքի Ամերիկա գալ: 1910ին ուրիշ երկու հոգիներ ևս են եկանք: Երկրորդ տարին 9—10, երրորդին ա՛լ աւելի այնպէս որ 130 տունէ բաղկացած գիւղէ մը 1914ին մօտ 70 մարդ կար այստեղ, մեծ մասամբ Ուոթրթաունի մէջ:

Օգտակար ըլլալու միակ բաղձանքով կ'ուղեմ հակիրճ տեղեկութիւններ տալ տեղիս Կեսարացիներուն մասին: Անցողակի ըսեմ որ 40—50 հոգի կան, որուն մեծ ու կարևոր մասը կը կազմէ երիտասարդութիւնը: Հարեանցի դիտող մը այս երիտասարդ-

ներուն վրայ չի կրնար ազնիւ հպարտութիւն մը շունենալ: Դժբախտութիւնը հոն է որ շատ քիչ թիւը ազգային ցաւերով կը հետաքրքրուի: Արհեստաւոր կամ վաճառական չկայ, բոլորս ալ դործաւորներ ենք: Աւաղ որ այս երիտասարդութեան մէկ քնջին մասին ներքին կեանքը իրականութեան մէջ տխուր պատկերներ միայն կը պարզէ: Մանաւանդ դասակարգ մը կայ, որոնց ուշադիր դիտող մը կամ մանաւանդ անոնց մօտ ապրող մը կրնայ տեսնել թէ ինչեր կան անոնց մէջ, ու ինչե՛ր կ'աջնին կը դառնան: Յաւալի է ըսել որ երիտասարդներ, փոխանակ ազնիւ ու բարձր դաղափարներով ապրելու ու սնանելու, փոխանակ հայրենասիրութեան սուրբ կայծը իրենց կուրծքերուն տակ վառ պահելու, աւելի ստորին և ցած հաճոյքներու կը հետեւին: Բարեբախտաբար այդ մարդոց թիւը շատ սահմանափակ է և երթալով կը նուազի: Յոյսի բերկրութեամբ կը սպասենք մօտ ատենէն բոլորին ալ մաքրուելուն:

Ինչպէս ըսի Նիրզէցիներուն մեծամասնութիւնը Ուօթրթաուն ըլլալուն հանգամանքով կազմած են Կրթասիրաց Միութիւն մը 1913 մայիս 1ին: Առաջին խնճոյքը տեղի ունեցաւ 1914 ապրիլ 20ին 107 Արլինկիքըն Սքրիթի սրճարանին մէջ: Ներկայ էին բոլոր հայրենակիցներ: Հանդանակութիւն բացուելով դոյացաւ 200 տօլար: Կրթասիրացի շուրջ շատ ազմուկներ բարձրացան գիւղաւիներուն մէջ, այնպէս որ շատ անգամներ երեք ամիսը մէկ վարչութիւն կը փոխուէր:

Յաճախ վարչութիւնը դեռ դործ մը իսկ շտապած կը տապալուէր: Անձնական հակառակութիւ-

նը շատ գէշ դեր կը խաղար այս գործերուն մէջ: Կրթասիրացը կը կաղայ մինչև այսօր կարգ մը տը-  
հաս մարդոց երեսէն: Կրթասիրացի երկրորդ խըն-  
ճոյքը տեղի ունեցաւ 1915 յուլիս 25ին, որու ար-  
ձանագրութիւնը յուշատետրիս մէջ ըլլալով կ'ար-  
ձանագրեմ բառ առ բառ:

Կ. Ն. գիւղի Կրթասիրաց Միութեան Հանդէս  
խնճոյքը Պրայլընի Ռէտի Հօլին մէջ, ուր ներկայ  
էին բոլոր պարտաճանաչ Հայրենակիցներ: Ատենա-  
պետ պրն. Ասլպէկեան քանի մը հակիրճ խօսքով  
բացատրեց ժողովին նպատակը, յետոյ բեմ հրա-  
ւիրեց պրն. Լ. Պասպա Թորոսեան և պրն. Կ. Ոսկեր-  
չեան, որոնք բացատրութիւններ տուին կրթական  
հաստատութիւններու օգտակարութեան մասին:  
Գեղեցիկ ժամանց ունեցանք լսելով օրուայ պատ-  
շաճ ատենախօսները:

Հանդէսին աւելի փայլ կուտար պ. Յ. Շաղո-  
եանի կարճ-կտրուկ ճառը և հինգ լեզուեան երգը:  
պ. պ. Սարաճեանի, Թորոսեանի և Գ. Նաղարեա-  
նի մեներգներէն վերջ հանդէսը վերջացաւ: Երկ-  
րորդ մասը կը կադմէր առատ կեր ու խում: Հանդի-  
սականները կարճես 2—3 ժամուայ համար մոռնա-  
լով մայր հայրենիքէն եկած դժնդակ լուրերը խմբո-  
վին երգեցողութիւններ, բաժակաճառեր տեղի ու-  
նեցան ընկերական ջերմ շրջանակի մէջ: Հանգանա-  
կութիւն բացուելով գոյացաւ 228.10 տօլար:

Խնճոյքը նիւթական շահէն զատ ունէր նաև բա-  
րոյական մեծ արդիւնք: Բայց ոգելից ընպելիի շա-  
փազանց առատութենէն և կարգ մը մարդոց անզի-  
տակցութենէն վերջաւորութիւնը տխուր եղաւ:

1915 Մեկտ. 26ին Կրթասիրաց ընդհանուր ան-  
 դամական ժողով ունեցանք 2. Յ. Դ. Քլըպին մէջ,  
 հաշիւները քննելով տեսանք թէ պատրաստ դումար  
 ունինք 600.77 տօլար: Նոյն օրը որոշուեցաւ հան-  
 դէս-ժողով մը կամ ներկայացում մը սարքել օժան-  
 դակելու համար Հայ Ազատագրութեան սրբազան  
 դատին: Տեղիս Կեսարացիները որչափ որ այս երկ-  
 րին բարիքներէն ու վայելչութիւններէն հրապուր-  
 ուած, բայց չենք մոռցած մայր Հայաստանը ու  
 չղիաի մոռնանք հայրերնիս, մայրերնիս, որոնք  
 մեռքի չափ հացի կարօտ կը մեռնին: Նկատի ունե-  
 նալով վերոյիշեալ դուլումնահար վիճակը հայ ժո-  
 ղովուրդին, նկատի ունենալով անդամներու որո-  
 շումը, Կրթասիրաց Վարչութիւնը կը ձեռնարկէ  
 ներկայացում մը տալ Եւոնիքն հօլին մէջ: Ներկա-  
 ցումը կը տրուի 1916 մայիս 30ին օժանդակու-  
 թեամբ 2. Յ. Դ. «Մովակ» գերասանախումբի: Զը-  
 բապարակ կը հանուի 1000ի մօտ թիքէթներ, հայ-  
 բենակիցներու ժրաջան աշխատութեան շնորհիւ  
 բաւական կ'սպասի. բայց դժբախտութիւնը հոն է  
 որ կարգ մը հայրենակիցներ դեռ թիքէթներու փո-  
 խարժէքը չեն վճարած և յանձնախումբն ալ թոյլ  
 ըլլալուն դորձը մնաց կիսկատար. այսօր մայիս 10,  
 1917 դեռ հաշիւները կը մնան առկախ: Ներկայա-  
 ցումէն անմիջապէս յետոյ դրամը պիտի զրկուէր  
 Կաթողիկոսին: Կարօտեալները անօթի', ծարա՛ւ,  
 մե՛րկ ու բոպի՛կ, մինչդեռ մենք հոս տաքուկ սեն-  
 եակներու և փափուկ անկողիներու մէջ ժամանակ  
 կ'անցնենք և ոչ մէկ փորձ չենք ըներ օգնութեան  
 փութալու:

Նիրդէցիները ուրիշ ձեռնարկ մըն ալ ըրած են, ատոր մէջ բաւականաչափ յաջողած են, անոր ալ արձանագրութիւնն ունենալով յուշատետրիս մէջ կէտ առ կէտ կարտագրեմ հոս :

«Կեսարիոյ Նիրդէ գիւղէն քանի մը երիտասարդներ մտարեւելով Հայ Ազատագրութեան դատը, կ'որոշեն հանդանակային ժողով մը սարքել, մեր բաժին սարտականութիւնը կատարելու և խառնելու մեր սէնթերը հաւաքուած հազարաւոր տօլարներուն : Անմիջապէս լուր կը տրուի բոլոր հայրենակիցներու 89 էլմ Սքրիթ պրն . Կ . Գարակէօզեանի սենեակն հաւաքուելու : Որոշեալ ժամուն 30ի չափ հայրենակիցներ ներկայ էին : Այլեայլ խօսակցութիւններէ վերջ օրուան ատենապետը Կ . Գարակէօզեան ժողովին նպատակը պարզելէ ետք, թոյլատրեց ներկաներուն որ արտայայտուին : Այդ ատենները խիստ պայքար կար Հ . Յ . Դ . ի և Ազգ . Պաշտ . Միութեան միջև : Նոյն աղտոտ պայքարէն ազդուած, ներկաներէն մի քանին անհիմն առաջարկներ բերին ժողովին, բայց չյաջողեցան : Թերուդէմ կարծիքներ յայտնուելէ վերջ որոշուեցաւ հանդանակութեան սկսիլ : Անոնք որ կը պահանջէին թէ հանդանակուած դրամը Կաթողիկոսին զրկուի կամ թէ հոս Ամերիկայի Ազգ . Պաշտ . Միութեան տրուի՝ չեռացան առանց մէկ սէնթ տալու : Մենք սկսեցինք դործի, հանդանակելով 300 տօլար : Ընտրուեցաւ յանձնախումբ մը որ դուրսը գտնուող հայրենակիցներուն ալ դիմեն, նորընտիր յանձնախումբը կը յաջողի : Դժբախտաբար անոնց մէջ ալ կը պատահի անհամաձայնութիւն : Ժողովէն չեռա-

ցող պարոններէն ոմանք կուզան կը համոզեն յանձնախումբի անդամներէն մէկ քանին, նախատինքներ տեղացնելով Դաշնակցութեան և Ազգ. Պիւրոյի հասցէին և կ'սկսի որոմի մշակութիւնը... կը յաջողին մասամբ: Անդամները տարուելով դրդումներէն չեն համաձայնիր դրամը «Հայրենիք»ի միջոցաւ ղրկել Ազգ. Պիւրօին: Շարաթներ շարունակուելով այս ազտոտ վէճը, նկատելով նաև թէ վերջաւորութիւնը լաւ չպիտի ըլլայ, որոշուեցաւ դարձեալ ժողով դուստրել, համաձայնութեան դալ: Ժողովունեցանք 1915 փետրուար 7-ին, ներկայութեամբ 65 հայրենակիցներու: Երկար վիճելէ ետք կրկին չկրցանք համաձայնիլ: Երկու շարեաց փոքրագոյնը որոշուեցաւ երկու թուղթ ներկայացնել իւրաքանչիւր հանդիսականի. մէկուն վրայ գրուած կաթողիկոս, միւսին ալ Ազգ. Պիւրօ: Ազատ ձգուեցաւ ամէն կողմ ուզածնին յատկացնել: Ժողովը վերջացաւ շատ տղեղ երևոյթով 250 տօլար բաժին ելաւ Ազգ. Պիւրօյին և 100 տօլար Ազգ. Պաշտպանութեան Միութեան: Մենք Ազգ. Պիւրօին հաւատացողներս դրամը ղրկեցինք Հ. Յ. Դ. Ամերիկայի Կեդր. Կօմիտէի միջոցաւ՝ հետևեալ բանաձևով.—

«Ներփակ կ'ստանաք 250 տօլարի չէք մը, հաճեցէք Ազգային Պիւրօյին ղրկելու, որ հաւաքուած է Կեսարիոյ Նիրզէ գիւղացի կարգ մը պարտաճանաչ երիտասարդներու կողմէ այն նպատակով թէ, այսօր ընդհանուր հայութիւնը բաղձանք մը ունի այն է հայկական ազատութիւն, ան ալ կարելի է Հ. Յ. Դաշնակցութեան արտադրած մարտական ուժով ձեռք բերել: Կեսարացի երիտասարդ-



ներս կը հաւատանք Դաշնակցութեան, իբրև գործօն կուսակցութիւն հայ իրականութեան մէջ, այսօր պողպատէ գրահի պէս կուրծք կուտայ մեր դարաւոր թշնամիին դէմ, անհամար հերոսներով, որ ընդհանուր հայութեան յոյսն ու հաւատքը կը վայելէ :

Կեցցէ՛ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը,  
Կեցցէ՛ Հայ Ազատագրութիւնը,  
Կեցցե՛ն Հայկական Կամաւորները :

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԻՐԶԷՑԻՆԵՐՈՒՆ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԸ

«ՄԵՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ»

Ինչպէս ըսած եմ Ամերիկա առաջին անգամ եկողը եղբայրս եղած է, վարձած է սենեակ մը Ուօթըրթաունի մէջ, կ'ապրէր ամենանպաստաւոր միջոցներով: Հետզհետէ շատցան Նիրդէցիներ գրեթէ բոլորն ալ նոյն օրինակին հետեւեցան, մինչև որ բաւականաչափ դրամի տէր դարձան, բայց այսօր բոլոր Նիրդէցիներ առանց բացառութեան կանոնաւոր կերպով կ'ապրին, Ուօթըրթաունի մէջ աւազնակարգ տեղը կը գրաւեն, այնպէս որ ամենուկերջին սքայլըզ զարդարուած սենեակներու մէջ կ'ապրին հոգ չէ թէ քանի տօլար է վարձքը:

Մենք ալ իբրև Ամերիկա նոր եկող վարձեցիներ տուն մը, (մէկ յարկ) կը բնակէինք հոն, ոչ թէ իբրև սինկլ ալ կանոնաւոր կերպով կահաւորած էինք, ընտանիք կը կազմէինք 6—7 հոգիէ բաղկացած, շատ սիրով էինք որովհետև մէկ գերդաստանի

անդամներ էինք, այդ անդամներուն անունները հետեւեալն է:

Սոյն տողերը գրողը, հօրեղբորորդիներս, Կ. Ս. Խըտրեան, Կ. Խ. Խըտրեան, եղբայրս Վահանը, քեռորդիս Աստուրը, մօրեղբորորդիներս Աղապէյ և Հանիպէյ, քեռայրս Կ. Միտիրեան. վերոյիշեալ եօթը անձնաւորութիւններ մէկ հողի, մէկ մարմին կը կազմէին, այնքան սիրով որքան կարելի է, այս միութիւնը հաստատուած էր 1912ին: Միութեան անդամները բոլորն ալ մաքուր նկարագրի տէր մարդիկ են: Ով որ առաջարկ բերէ կ'ընդունուէր բացարձակ հաւանութեամբ, իրերամերժ քաղաքակաւնութիւնը բնաւ զոյութիւն չունէր, ամբողջը միաբերան կ'ըսեն այո, այո, ոչ ոչ, այսպէս կը կարգադրուէր անդամ ամենակնճոտ խնդիրներ: Բոլոր տունը մաքուր կերպով կահաւորուած էր, ունէինք կահկարասի այնքան որքան որ կունենայ ուէ ընտանիք, պարզ այդ պատճառաւ երբեմն փորձ կընէինք տունը պատրաստել մեր կերակուրը: Հազիւ քանի մը ամիս շարունակելով կը ձանձրանայինք, միաձայնութեամբ կ'որոշենք ճաշարան երթալ, եւ կ'երթանք, այսպէս 3—4 տարի նախանձելի կեանք ունեցանք: Ամէն կիրակի անպայման սեղան մը կը սարքուէր: Ուրախութիւնը և հաճոյքը շափ ու սահման չէր ունենար. մեր մէջ ամենաշատ կատակախօսն էր Ալապէյը, միշտ կը խնդացնէր մեզ, այսպէս շարունակութեամբ եկաւ 1917 տարուայ ձմեռը, որոշեցինք կերակուրնիս տունը պատրաստել, այնպէս որ ճաշարաններէն վերջին աստիճան զզուած էինք. այս որոշումը տեղի ունեցաւ

81 Արլիճկաբըն Սքրիթի բնակարանը, շարունակեցինք Յ—Վ ամիս: Այնքան սիրով որքան որ կարելի է: Մենք կը խորհինք թէ Ամերիկա դալէն ի վեր առաջին անգամն էր որ այսպէս հանգիստ կեանք մը ունեցանք, և համեղ կերակուրներ կը ճաշէինք շքեղորհու քեռայրս պ. Կարապետ Միտիրեանի, անմիջապէս Քալիֆորնիայէն գինի բերել տուինք երկու տակառ, կը կարծէինք թէ այս ձմեռը առաջին ձմեռն է որ կը վայլենք, անցան այս ուրախ ու զրուարթ օրերը, եկան տխուր և սև օրեր: Բամբասանք, կոխ, ստուժիւն, անարգանք իրարու դէմ: Կարծես չէր բաւեր երկիրէն եկած սրտակտոր լուրերը, լրագիրներուն մէջ կը կարդայինք մեր սիւններուն անօթի ծարաւ մեռնիլը: Կարծես մոռլիներուն անօթի ծառաւ մեռնելին: Կարծես մոռցընել տուին բոլոր այդ անցեալները: Այս բոլորին պատճառը միայն ու միայն անձ մըն է, եկաւ սատանայի պէս մտաւ մեր սրբապան ընտանիքին մէջ, տակն ու վրայ ըրաւ ամէն ինչ: Զրպարուեց, բամբասեց, յերիւրեց, խծրծեց: Ստիպեց որպէսզի այդ սրբազան միութիւնը քայքայուի: Բոլորն ալ պատուաւոր բարոյականի տէր մարդիկ էին: Անմիջապէս որոշուեցաւ ցրուիլ առանց խնդիրը մեծցնելու, բաժնուեցանք իրարմէ արտասուալիր աչքերով, ոչ ոք իր ստացուածքին տէր չեղաւ, զրպարտութեան չափն ու սահմանը անցած էր, հինգ տարուայ միութիւնը քար ու քանդ եղաւ... շնորհիւ մէկ մարդու այն է . . . . . իրմէ զատ ուրիշ մըն ալ մեղսակից էր իրեն հետ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԻՐԶԷՑԻՆԵՐՈՒՆ ԱՆՈՒԱՆԱՑԱՆԿԸ  
ԶԱՏ ԶԱՏ ՔԱՂԱՔՆԵՐՈՎ

## Ուօրրքաւն

Թիւ	Տարիք
1. Սենեքերիմ Խըտրեան	27
2. Կարապետ Խըտրեան	34
3. Կարապետ Խ. Խըտրեան	28
4. Վահան Խըտրեան	24
5. Կարապետ Մարկոսեան	45
6. Սողոմոն Մարկոսեան	30
7. Եփրեմ Ասլզէկեան	43
8. Գրիգոր Սէֆէրեան	36
9. Սարգիս Սէֆէրեան	27
10. Աբսէն Սէֆէրեան	24
11. Արմենակ Սէֆէրեան	24
12. Կարապետ Սէֆէրեան	24
13. Սերովբ Սէֆէրեան	21
14. Յակոբիկ Սէֆէրեան	25
15. Ստեփան Հաճնիկեան	35
16. Խաչեր Թորոսեան	27
17. Յակոբ Թորոսեան	23
18. Կարապետ Թորոսեան	52
19. Թորոս Թորոսեան	20
20. Ստեփան Մխչեան	26
21. Հայկազուն Դաւիթեան	22
22. Քերովբէ Մանիկեան	25
23. Օննիկ Բակլաեան	44
24. Հայկարմէն Նշանեան	25

25. Կարապետ Զրյրզեան	25
26. Արմենակ Էմճիեան	28
27. Մկրտիչ Էմճիեան	24
28. Կարապետ Էմճիեան	55
29. Կարապետ Սարաճեան	25
30. Կարապետ Զաքարեան	28
31. Յարեթ Քէչեան	23
32. Կարապետ Քէչեան	44
33. Միսաք Քէչեան	26
34. Սարգիս Բարսեղեան	33
35. Միսաք Բարսեղեան	35
36. Կարապետ Բարսեղեան	20
37. Կարապետ Ս. Միւտիւրեան	34
38. Կարապետ Յ. Միւտիւրեան	33
39. Միսաք Յակոբեան	36
40. Յակոբ Մինասեան	23
41. Յարութիւն Մինասեան	30
42. Աստուր Գույումճեան	21
43. Աղապէյ Հաճի Սարգիսեան	29
44. Հաճի պէյ Հաճի Սարգիսեան	24
45. Սաչատուր Հաճի Սարգիսեան	22
46. Միհրան Գարազոչեան	25
47. Արմենակ Հաճի Սաչեղեան	27
48. Ռուբէն Հաճի Սաչեղեան	31
49. Կարապետ Ն. Բարսեղեան	37
50. Գրիգոր Ապաճեան	31
51. Ստեփան Գերիեան	42
52. Եղիազար Ապաճեան	25
53. Դանիէլ Մարկոսեան	46

54. Գրիգոր Մարկոսեան 23  
 55. Պաշիկ Հաճի Պետրոսեան 26

## Պօսթ-օմի մէջ

56. Եղիազար Յովսէփեան 31  
 57. Յարութիւն Թորոսեան 34  
 58. Ներսէս Թորոսեան 31  
 59. Ստեփան Պալեան 24

## Սառիք Պօսթ-օմի մէջ

60. Կարապետ Խըտրեան 24  
 61. Աւետիս Միւտիրեան 27  
 62. Գասպար Միւտիրեան 31  
 63. Կարապետ Ասլպէքեան 38  
 64. Սեդրակ Քէչեան 34  
 65. Սարգիս Թեղերեան 35  
 66. Գրիգոր Պաղտաղեան 38  
 67. Գալուստ Թեքերեան 35

## Տիբրօիքի մէջ

68. Հայկ Հաճիպետրոսեան 26  
 69. Համբարձում Յակոբեան 33  
 70. Կարապետ Քէչեան 32  
 71. Կարապետ Պուտաղեան 50  
 72. Յարութիւն Պուտաղեան 23  
 73. Արիստակէս Պաղտաթեան 26  
 74. Յովհաննէս Թորոսեան 28

## Նիւքըմ Ըփփըրֆօլսի մէջ

75. Միհրան Հաճնլեան 34

## Բախարիի մէջ

76. Հաճի Նշանեան	48
77. Կարապետ Ղալալճեան	33
78. Սեդրակ Ղալալճեան	26

## Էֆրըն Օհայօի մէջ

79. Յովսէփ Ասլպէկեան	37
80. Մխսաբ Ասլպէկեան	28
81. Եղիա Ասլպէկեան	25
82. Ծիպրակ Ասլպէկեան	22
83. Սրապիոն Գալղաղճեան	27
84. Տիգրան Սարըեան	31
85. Միհրան Նշանեան	22

## Նիւ Եօրֆի մէջ

86. Յարութիւն Բաւլեան	34
87. Արմէն Բաւլեան	26
88. Կարապետ Հաճնիեան	32
89. Յակոբիկ Բարսեղեան	30
90. Ստեփան Ալեանազեան	22

## Վաւիմկընի մէջ

91. Սարգիս Նշանեան	43
92. Միհրան Սէֆէրեան	28
93. Եղիազար Պալեան	27

## Մօլտընի մէջ

94. Արմենակ Գարագոջեան	28
------------------------	----

## Հըստընի մէջ

95. Կարապետ Գարակէօզեան 38  
 96. Միսաք Գարակէօզեան 34

## Բէյսիմի մէջ

97. Մկրտիչ Հաճի Սարգիսեան 32  
 98. Հաճի Սարգիս Հաճի Սարգիսեան 26

## Քիւիմզիի մէջ

99. Տատուր Մարկոսեան 34  
 100. Յարութիւն Ասլայէկեան 29

## ԵՐԿԻՐ ԳԱՅՈՂՆԵՐ

- Սերորէ Մանիկեան 33  
 Սարգիս Քէչեանեան 31  
 Սարգիս Աւաղեան 55  
 Գրիգոր Քէչեանեան 35  
 Օննիկ Միսեան 43  
 Բարսեղ Սէֆէրեան 45

## ԿԱՄԱՒՈՐ ԳԱՅՈՂՆԵՐ

- Խաչիկ Հաճի Պետրոսեան (Կովկաս)  
 Վահան Խրտրեան  
 Մկրտիչ Եմճեան  
 Կարապետ Ասլայէկեան  
 Յակոբ Թորոսեան  
 Եղիազար Ապանեան  
 Ստեփան Պալեան  
 Ստեփան Ալեանազեան (Կովկաս)  
 Կարապետ Սարաճեան (Կովկաս)



## ՄԵՌԱԾՆԵՐ

Հայկ Ապահեան	24
Գրիգոր Պալեան	20
Ստեփան Ալեանազեան	22

## ԵՐԿԻՐ ՎԵՐԱԴԱՐՁՈՂՆԵՐԸ

Յիշեալ ցանկէն քանի մը հոգիներ, 2—3 տարի մնալով Ամերիկա և իրենց ապագան ապահովուած նկատելով վերադարձան երկիր, իրենց հայրենի օճախը: Վերադարձողներն են. Բ. Սէֆէրեան, Գ. Քէհեան, Ս. Մանիկեան, Ս. Նշանեան, Ս. Աւազեան, Օ. Մխչեան, ասոնք բոլորն ալ աժուսնացած զաւակի տէր մարդիկ էին. բնական է երկու երեք տարիէն աւելի չէին կրնար մնալ հոս օտար երկինքի տակ: Գացին անոնք բոլորն ալ ուրախ ու զուարթ: Անոնք կարօտը կը քաշէին իրենց մայր հայրենիքին: Անոնք կարօտը կը քաշէին իրենց սիրելի զաւակներուն: Անոնք կարօտը կը քաշէին իրենց սիրելի տիկիններուն: Վերջապէս անոնք կարօտը կը քաշէին իրենց հայրենի օդին ու ջուրին: Բայց աւա՛ղ որ թուրք բռնապետական ճիրանները սեղմե զանոնք իրենց դեռ ոտքին փոշին չմաքրուած: Ահա զինուորական պատրուակին տակ խուճր խուճր քշեցին դէպի անձանօթ վայրեր շնք գիտեր թէ ուր: Սարեր ու ձորեր, քարեր ու խոտեր վերջին վկայութիւն պիտի ընեն թէ ինչ եղան մեր այս մեկնող պարթեւահասակ երիտասարդներուն վիճակը: Ամերիկայէն հե ի հե գացին իրենց կարօտութիւնը յագեցնելու համար, կարծես

Եկած ըլլան ողջակէզ ըլլալու իրենց մայրենի հողին վրայ, մեր հայրերը, մեր մայրերը, մեր քոյրերը տաճիկ բարբարոս խուժանէն բռնաբարուեցան, հարէմներու մէջ արդելափակուեցան, բայց մէկ բան ունինք ըսելիք, երկրին մէջն էին ապա ուրեմն անխուսափելի էր: Բայց ի՞նչ ըսենք այս երիտասարդներուն համար որ Ամերիկայէն դացին. անոնց մասին առասպելական լուրեր իմացանք: Երբեմն ըսին թէ, Ամերիկայէն եկած են շատ դրամ ունին, ատոր համար կառավարութիւնը պետելը պատճառ բռնելով բոլոր դրամին ձեռքնրնէն առած է: Երբեմն ըսին թէ Սուրբ Գրիգորի կալին մէջ հրացանազարկ եղած են իրրեւ թէ Ամերիկայէն եկած աւելի վտանգաւոր մարդիկ: Ինչ որ ալ ըսեն ճշմարտութիւնը այն է թէ վերջ ի վերջոյ ընդհանուր հայութեան բախտին արժանացան: Ո՛վ դուք պատուական հայրենասէր երիտասարդներ. ի՞նչու դացիք ազատ Ամերիկայէն, որպէսզի ձեր արի՞ւնն ալ խառնուի ձեր սիրելիներու արիւնին հետ: Ինչո՞ւ դացիք դուք որպէսզի ձեր մեռելները մնան անթաղ շիրմի իսկ չարժանացաք: Վստահ եմ թէ ձեր արիւնով դետեր գունաւորուեցան. դուք ինկաք լեռներու ամայի կողին վրայ, մի դուցէ անտառներու, դաշտերու մէջ մնացիք անպաշտպան, ձեր մարմինները դիշատիչ թռչուններու կեր եղան, ձեր ազաղակէն երկինք սարսեցաւ, անոնք բոլորը մեզի ծանօթ են բոլորս տեղեակ ենք անպայման: Պիտի գայ վերջապէս հատուցման օրը պիտի տեսնանք այդ օրը, դուք ձեր անյայտ գերեզմաններէն պիտի ելլէք և պոռաք «Զարկէք անդադար Թուրք խուժանին

որպէսզի դիտնան թէ ինչ ըսել է բնաջնջել մեզի պէս  
 երիտասարդները: Մենք չենք մոռցած ձեզի: Ի սէր  
 Հայրենիքի և ձեր վրէժին համար հազարաւոր մղոն  
 հեռաւորութեամբ ովկէանոսը կտրելով անցանք,  
 դացինք կովկասի սահմանները Վասպուրականի սա-  
 րալանջերու վրայ մարտնչեցինք: Չոհեցինք զոհ-  
 ուեցանք մեռանք ու մեռցուցինք. շարունակեցինք  
 փոխ հատուցման կոիւր ծինչև այսօր: Կովկասէն ե-  
 կած մէկ մարտական կոչին հազարաւոր երիտա-  
 սարդներ արձազանգ տուին: Ահա այսօր է որ դար-  
 ձեալ մարտական հրաւէր կայ և մէկ քանի շարթը-  
 ւան մէջ տասնեակ հազար երիտասարդներ կ'արձա-  
 նադրո-ին՝ կամաւորապէս երթալ իրենց արինը  
 թափելու համար:

Պիտի դանք այս անգամ ձեզի մօտ . . . . .  
 այդ պատմական Հայրենիքը պիտի դանք դէպի ձեզ  
 տեսնելու և ձեր կտակած վրէժը լուծելու, մի կար-  
 ծէք թէ հոս Ամերիկայի փառքն ու վայելչութիւն  
 ները մեզ կաշկանդած են և մեր Հայրենասիրական  
 զգացումները մարած է, ո՛չ պիտի դանք դէպի . .  
 . . . և պիտի տեսնենք ձեր անթաղ դիակները,  
 թերեւս այդ մեզի համար սփոփանք մը ըլլայ:

Պիտի խոնարհիմք ձեր արիւնոտ դիակներուն ա-  
 ռաջ և պիտի ըսեմք եկեր եմք ձեր վրէժը լուծելու:

Յարգանք ձեր յիշատակին սիրելի Հայրենա-  
 կիցներ:

## ՆԻՐՉԷՑԻՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

Համերոպական պատերազմը ծագելէ առաջ Նիբրդէցիներէն դացին 4—5 հոգի, և քանի քանիներ ալ կը պատրաստուէին երթալու, բազդին բարի բերումով հրաժարեցան այդ նպատակէն, որոնց կարգին էր Ա. Գարազոչեան, գործարանի գործը ձգելով կազմ ու պատրաստ էր մեկնելու դէպի երկիր, դէպի կարօտալի հայրենիքը: Բայց պատահամար նոյն օրը պանֆիմ պուֆը կ'անհետանայ, չարագործներ պայուսակին մէջէն կը վերցունեն իրեն բացակայութեան, ատոր վրայ կատիպուի քանի մը օր սպասել. այդ ուշացումը պատճառ կ'ըլլայ շերթալուն: Արդէն այդ քանի մը օրուայ մէջ Թուրքը պատերազմ յայտարարեց: Բնական է որևէ հայ երկիր չէր կրնար երթալ, քանի որ զինուորագրութեան վախ կար: Այդպիսով Արմենակ ազատուեցաւ ստոյգ մահէն: Թուրքին պատերազմ յայտարարելէն վերջը կարգ մը հեռագիրներ եկան յերիւրեալ մարդոց, Մ. Գարազոչեանի, Ա. Գարազոչեանի, Կ. Թորոսեանի, և այս տողերը դրողին, բոլորս ալ վըճարեցինք առանց բացառութեան. հեռագիրներ կու գալին Կեսարիայէն, Բանկ Օթօմանի միջոցաւ, բայց ցաւալին այն է թէ մինչ ցարդ ոչ մէկ պատասխան չենք ստացած: Մեր հայրերը, մայրերը, քոյրերը երթալէն ի դատ դրամնիս ալ վրայ դնաց: Ութըրթաունի մէջ կայ մօտաւորապէս 50—60 Նիբրդէցիներ, ամէն շաբաթ 20—30 նամակներ կուգար երկիրէն: Պատերազմէն ետք ոչ մէկ նամակ չէ եկած, բացի քանի մը բացառութիւններէ, որ եկան մեզ աւելի վիշտ պատճառելու. նամակներէն մին եկած

կը մօրեղբայրս Աստուրին որ կը գրէր մօտաւորապէս հետեւեալ կ'երպով. «Սիրելի եղբայրներս, երկաթագործ ըլլալու համար, ես մնացի և անուս Լ'ի մէտ մկրտեցին. բնաւ մէրագ մի ընէք, ոչխարները դայլը կերաւ, գիւղին մէջ մարդ չէ մնացած չենք գիտեր թէ ուր գացին: Այս է եղեր մեր բաղդը»: Ներգէցիներ գէթ կսպասէին տարագրուած տեղերնէն նամակներ դար բայց այդքանին ալ չարժանացանք: Նիրգէցիներ ինքզինքնին չկրցին զսպել այս կատարուած իրողութեան առաջ անմիջապէս ձեռնարկի մը սկսեցանք հաւաքեցինք բաւականաչափ դրամ և ամերիկեան կառավարութեան միջոցաւ հեռագրեցինք, Թուրքիոյ Ամերիկեան դեսպանին, որպէսզի Նիրգէն կարելի եղածին շափով լուր մը հասցնէ մեզ. այս գործը կը կատարէր պրն. Սվազլըեան. տարաբաղդարար մինչև այսօր, մօտաւորապէս տարի մը կըլլայ ոչ մէկ լուր ստացանք, եւ ոչ ալ Պրն. Սվազլեան մեր դրամը ետ վերադարձուց:

Նիրգէցիներ բաւական կը հետաքրքրուին ազգային գործերով, կը յաճախեն ժողովներու, ազգ. հաստատութիւններու կողմէ եղած հանգանակութիւններու կը մասնակցին պէտք եղած շափով. բոլոր Նիրգէցիներ զրեթէ լաւատես են դէպի ազգային հարցը. յոռետեսներու թիւը շատ սահմանափակ է: Կուսակցութիւններու մասնակցողներու թիւն ալ շատ քիչ է, հազիւ 5—10 հոգիներ, կը մասնակցին Հայ Յեղափոխական Դաշնակցութեան և Հ. Ս. Ռ. կուսակցութեան և խոշոր մաս մըն ալ համակրութիւն ունին նոյն կուսակցութիւններուն: Նիրգէցիներ այս ու այն ազգային հաստատութիւններու մաս

նակցեւէ զատ կօզնէին անհատներու նիւթապէս թէ  
 բարոյապէս, որոնց կարգին է էֆէրէցի Տէր Մես-  
 րոպ քահանայ. տէր Հայրը բաւական անցուկ վիճակ  
 ունենալով, եկած էր Ուօթրթաուն, Նիրզէցիներ  
 անմիջապէս ի մի հաւաքուելով 2—3 ական տօլարով  
 մասնակցեցան Հանդանակութեան, որմէ գոյացաւ  
 մօտաւորապէս 100 տօլար: Նիրզէցիներ Ամերիկայի  
 մէջ բացասական գործ մը ունին, գործաւորութիւն  
 ընելնին է, զարմանալին այն է թէ իբրև Կեսարացի-  
 ներ, առուտուրի ընդունակ մարդիկ, պէտք էր մե-  
 ծամասամբ պիսնիզմէններ ըլլային, այսօր մատի  
 վրայ կը համրուի պիսնիզմէնները: Նիրզէցիներ ա-  
 ոանց բացառութեան մաքոր հասուած չիք երիտա-  
 սարդներ են, ուտելու, հագուելու համար զոհողու-  
 թեան առջև կանգ չեն առներ, ատոր համար ոչ մէկ  
 վատասող չի կայ բոլորն ալ առոյգ աշխոյժ երի-  
 տասարդներ են, բոլոր ուրիշ դաւառացիներ յոր-  
 դանքով կը վերաբերին Կեսարացի երիտասարդնե-  
 րու հետ, բոլորն ալ դէշ ունակութիւն մը ունին սա-  
 կայն տաճկերէն լեզուին գործածութիւնն է բոլոր  
 Նիրզէցի Հայերէն լեզուն գիտնալով մէկտեղ տան-  
 կերէն լեզուն կը գործածեն, այս չափազանց դա-  
 տապարտելի է: Բայց բարեբաղդաբար բոլորն ալ դը-  
 բել կարգալ գիտեն, Հայերէն լեզուն գրեթէ բոլոր-  
 րին ալ ծանօթ է: Անոնք Հայերէն չեն խօսիր պարզ  
 այն պատճառաւ որ շատ անգամներ Հայախօս Հայ-  
 բնակիցներու արհամարհանքին կենթարկուին:  
 Գիտես թէ այդ անիծեալ լեզուն մեր միսին և ոս-  
 կորին հետ մարմնացեր է: Կեսարացիներ Ամերի-  
 կայի մէջ գրեթէ լաւ գործերու տիրացած են, Նիւ

Եօրքի մէջ ամենամեծ վաճառականներ (գորգի) Կե-  
սարացի են Պօթօնի մէջ նոյնպէս իսկ գործաւորներ  
գործարաններու մէջ լաւ գործեր ունին և գոհացու-  
ցիչ բեռ կստանան :

### ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԻՐԶԻՑԻՆԵՐԷՆ ՄԵՌԱՄՆԵՐ

Նիրգէցիներ եկած էին 1909ին և մինչև 1918ին  
ուսեցան քանի մը ցաւալի մահեր, որոնց առաջինն  
է, Հայկ Ապաճեան, հիւանդանոցի շորս տառա-  
պանքի տարիներ վերջը 1916 մայիս 10ին կնքեց իր  
մահկանացուն : Հայկ ծնած էր Նիրգէ գիւղը և հա-  
զիւ 25 դարուներ բոլորած էր : Թաղման և իր կեն-  
սագրական մանրամասնութիւնը տես «Հայրենիք»  
օրաթերթի 1916 թիւը :

### ԳՐԻԳՈՐ ՊԱԼԵԱՆ

Աղքատ ընտանիքի մը զաւակ, համեստ և սա-  
կաւախօս պատանի մըն էր . կարծես հօր աղքատու-  
թիւնը ժառանգ մնացած էր, մինչև որ Ամերիկա ե-  
կաւ դարձեալ բաղդը իրեն չժպտեցաւ . ճամբոր-  
դութեան ժամանակ Բաթրաս կուդայ հոն քանի մը  
օր մնալէն յետոյ պիտի մեկնէր Ամերիկա դժբաղ-  
դութիւնը հոն է որ նոյն օրը դրամը կը գողցուի  
խեղճ տղան կը մնայ առանց դրամի, կստիպուի ետ  
Պօլիս երթալու . Ամերիկայէն իր մեծ եղբօրը օգ-  
նութեամբ դարձեալ կուդայ Ամերիկա, այս բոլոր  
ծախսերը կը հոգայ եղբայրը Ս . Պալեան, Գրիգոր  
կուդայ Ամերիկա բայց իր տարիքին և հասակին  
համապատասխան գործ մը չի կրնար գտնել . կըս-  
տիպուի ճաշարանի մը մէջ ամաններ լուալու, (տիշ-

ուաւոր) բայց պղտիկ տղայ մը ի՞նչպէս պիտի տո-  
կայ այդ անտանելի կեանքին, բնական է որ պլտի  
հիւանդանայ: Հազիւ քանի մը ամիսներ անցան,  
սկսաւ պատանիին դէմքը դեղնիլ, արիւնի հետք բո-  
նաւ չէր մնացած, բժիշկներ քննելով անմիջապէս  
տեղեկացուցին թէ, Գրիգորը թոքախտով վարակ-  
ուած է, և թելադրեցին թէ պէտք է երկիր երջիայ,  
խեղճ եղբայրը ծախսերը յանձն առնելով ղրկեց կե-  
տարիս, այն հաւատքով թէ երկրին ջուրը կօղնէ.  
բայց խեղճ տղան հազիւ Պօլիս հասաւ Փրկիչի հի-  
ւանդանոցին մէջ մեռաւ հազիւ երկու օր ապրելէն  
յետոյ, 18 տարեկան հասակին մէջ: Ահա այսպէս է  
եղեր գործաւորին կեանքը: «Գործաւորին համար  
չի կայ աշխարհի վրայ կեանք, քանի որ զխտակցու-  
թեան չէ եկած»:

### ՄՏԵՓԱՆ ԱԼԵԱՆԱԳԵԱՆ

Օին մէկը Նիւ Եօրքէն հեռագիր մը ստացանք  
որ կըսէր Ստեփան Ալեանագեան ջրամոյն եղու:  
Այս տիտը լուրը բերնէ բերան չբջելով, բոլոր հայ-  
բնակիցներ իմացան, չի կայ մէկը որ ծանօթ ըլլայ  
և չ'վշտանայ այս երիտասարդին վրայ:

Ծնած էր Նիրզէ գիւղը 1893 թուականին. ու-  
բիշներու պէս այն ալ եկած էր Ամերիկա իր ապ-  
րուտը նարելու միտումով: Ընկեր Ստեփան հեզ ու  
լոսկեաց էր, բայց բնաւորութեամբ անյողոզող  
իրք հայ իր վրայ ծանրացած պարտականութեան  
խոր զխտակցութիւնը ունէր. վերջերս միացած էր  
Հ. Յ. Գաշնակցութեան Նիւ Եօրքի կօմիտէին: Երբ  
կամաւորական շարժումը սկսեցաւ, ընկեր Ալեա-



նազեան չ'կրցաւ զսպել ինքզինքը: Չգից անձնական  
 Հանգստութիւնը, դնաց դէպի արիւնտոս ճանապարհ-  
 չէն քալելու համար. 1915 օգոստոս 29ին մեկնեցաւ  
 Կովկաս մասնակցեցաւ բոլոր կռիւններուն: Ապա  
 դէպքերու բերումով վերադարձաւ Ամերիկա գլխի-  
 կոր և սկսաւ շարունակել իր գործը, բայց դարձեալ  
 Հանգիստ չէր, կուզէր կռիւի միանալ: Երկրորդ  
 կամաւորական շարժման ժամանակ չկրցաւ համբ-  
 րել. կարճանագրուի իրրև կամաւոր, Նիւ Եօրքի  
 Ազգային Միութեան միջոցաւ մեկնելու համար...  
 Հէք Ալեանազեանի մուրազը փորը կը մնայ: Նիւ  
 Եօրքի ծովեզերքը լողնալու ատեն շփոթութեան  
 պատճառաւ ջրամոյն կըլլայ Հանգիստ քու ոսկոր-  
 ներուդ սիրելի ընկեր:

(Մանրամասնութեան համար տես «Հայրենիք»  
 օրաթերթի 1917 սեպտ. 1 կիրակի 1634 թիւը):

### ՅԱՐԷԹ ՔԷՀԵԱԵԱՆ

Նիրզէցիներս ունեցած էինք 3—4 հատ զոհեր  
 Ամերիկայի մէջ կարծես այդ չքաւականանալով, օ-  
 տար հողին յանձնեցինք Յարեթ Քէհեաեան անուն  
 երիտասարդը. ծնած է մօտաւորապէս 1892 թուա-  
 կանին միջակ ընտանիքի մը զաւակ, եկած է Ամե-  
 րիկա դրեթէ չորս տարի առաջ, բայց ոչ մէկ գոր-  
 ծին մէջ չէ յաջողած: Վերջերս դժբաղդութիւնը  
 ունեցած է թեւին վրայ վէրք մը ունենալու և այդ  
 պատճառաւ գործելու անկարող եղած էր: Իր հօ-  
 րեղբայրը կարապետ Քէհեաեան վերջերս ազարակ  
 մը գնած է և Յարեթը հոն կանչած է այն յոյսով թէ  
 ազարակին օգը կարելի է օգնէ բայց խեղճ Յարեթը

իր մահկանացուն կը կնքէ ծաղիկ հասակին մէջ :  
 Յարէթ որքան որ կրթութիւն չէր ստացած, բայց  
 զգացումով ազգասէր էր և այդ պատճառով միացած  
 էր Հ. Ս. Ռ. կուսակցութեան գէթ նիւթական օ-  
 փանդակութիւնը ընելու ազգային ձեռնարկներուն :  
 Հանգիստ իր ոսկորներուն :

### ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ

Հայկական Դատի Պաշտպաններ  
 Թուրք զինուորութենէ ազատելու համար  
 Ամերիկա եկանք թողլով հայր ու մայր  
 Հաղիւ եօթը տարի անցաւ ցաւով անհամար  
 Ախոսս երիտասարդ կեանքերնիս եղաւ աննըշ-  
 մար :

Սեւանար այն օրը ծնած չըլլայինք  
 Եթէ ծնանք ինչ կար մեծցած չըլլայինք  
 Կոտրեր ոտքերնիս եկած չըլլայինք  
 Կուրանար աչքերնիս տեսած չըլլայինք :

Խուլանար ականջնիս լսած չըլլայինք :  
 Ելէք ով եղբայրներ շուտ ոտքի ելէք  
 Չ'հասանք մուրազնիս զարկաւ մեզ Ֆէլէք :

Յառաջ միշտ յառաջ... անկցի գերութեան կաշ-  
 կանդոզ շղթան :

## ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ

1917 թուականին էր երբ բերնէ բերան շրջեցաւ թէ՛ պէտք է կամաւոր արձանագրուիլ, ահա այդ կոչին պատասխանեցին հետեւեալ Նիրդէցիները․ Վահան Խըտրեան, Կարապետ Ասլաէքեան, Մկրտիչ Էմենեան, Եղիազար Ապանեան, Յակոբ Թորոսեան, Ստեփան Պալեան։ Նիրդէ գիւղի կրթասիրացը յարմար տեսաւ խնճոյք մը սարքել, ի պատիւ յիշեալ անձնուէրներուն․ խնճոյքը տեղի ունեցաւ Պօսթօնի մէջ 1917 մայիս 30ին (խնճոյքի մանրամասնութեան համար տես «Հայրենիք» 1917 Յունիս 22, ուրբաթ 1568 թիւը) այս հայրենակիցները շատ հանգիստ կեանք կը վայելէին Ամերիկայի մէջ։ Բայց արհամարհեցին այդ խաղաղ կեանքը, արդէն պարտականութիւնը այդ կը պահանջէր։ Մեկնեցան դէպի հոն որու ճանապարհը օձապտոյտ է, որու ճանապարհը արիւնոտ է բայց յանձն առին ամէն խոչընդոտ, որովհետեւ անոնք կզգային ազգին հալածանքները եւ թշուառութիւնները, կիմանային անոնց շարչարանքները, խոշտանգումները եւ բռնաբարութիւնները։ Այս աննախընթաց զուլումը տեղի ունեցաւ Պարսկաստանէն սկսեալ մինչեւ Հայաստան եւ Կիլիկիոյ խորերը։ Նիրդէցի պարտաճանաչ ու անձնուէր երիտասարդները իմացած էին թէ, հայ պատիւը բռնաբարուեցաւ մանուկներ սրախողխող եղան, մէկ մէծիտի կամ աւելի պակասի իրրեւ գերի ծախուեցան։ Անոնք իմացած էին թէ իրենց եղբայրները բռնի կերպով զինուորագրութեան պատրուակին տակ ոչնչացուցին։ Նիրդէցի անձնուէրները իմացած էին

թէ Հայ Հարուստը եւ աղքատը իրենց ստացուածքն զրկուելով տեղափոխուեցան մոռնալու նոյնիսկ հընարաւորութիւն չունին: Հազարաւոր կիներ եւ մանուկներ ծերեր եւ երիտասարդներ իրենց փախուստի ճամբուն վրայ ինկան, որովհետեւ անօթութիւնը մէկ կողմէն անկարողութիւնը միւս կողմէն սարսափելի կերպով կը տանջէր: Նիրգէցի պարտաճանաչ երիտասարդներ իմացած էին թէ, Հայկական փափկասուն օրիորդներ եւ տիկիներ թուրք զարթիէներէ կը Հալածուէին, ետեւին սուր ու հուր, առջեւին լեռ ու ձոր, ձիւն ու փուք առանց գիտնալու թէ ուր կերթան, ահա ասոնք էին որ Հայ երիտասարդութիւնը ոտքի հանեց, եւ մեր Հայրենակիցները պարտականութեան մղեց: Այս է պատկերը մեր սիրելի եւ պաշտելի Հայրենիքին: Յիշեալ երիտասարդները հակառակ անոր երկար ժամանակ է Ամերիկա էին, չեն հրապուրուած օտար երկրին բարքերէն եւ վայելչութիւններէն, չեն մոռցած մայր Հայաստանը: Յիշեալ երիտասարդները կը հետեւէին ազգային կեանքին եւ կը կարգային Հայկական պատմութիւններ. որովհետեւ անոնք օրինակ առին այն Հերոսներէն, որոնք մերժած էին գերութեան ստրուկ կեանքը եւ բռնութեան անարգ շղթան: Անշուշտ 25—30 տարուայ յեղափոխական պատմութիւնը այսպէս կը դաստիարակէր, այդ պատմութեան պտուղն է որ այսօր կը քաղենք. վերջին յեղափոխական պատմութիւնը ուսումնասիրող մը պիտի տեսնայ թէ, քաջեր եւ Հայրենասէրներ Հայրենիքի ազատութեան եւ Հայ ժողովրդի փառքին եւ յարօրութեան Համար, իրենց անձը իրենց արեան

վերջին կաթիլը նուիրեցին, ահա այդ դրուադներն է որ երիտասարդ Նիրզէցիները կը բոցավառէր եւ կը մղէր փշոտ ճամբաներ..... նամէրտ տուշմանէն վրէժ լուծելու.....: Դուք եւ ձեզի պէս հայրենասէր երիտասարդներն են որ պիտի իրազործեն այդ խոէալը, որուն 500 տարիներէ ի վեր կերազենք. «Գացէք հոն, ու Կիլիկիան աշխարհը ձեզ կը կանչէ». պիտի երթան մեր հայրենակիցները ուր դերեզման կայ. պիտի երթան հոն ուր մահ կայ, չարչարուիլ ու մեռնիլ կայ. հոն պիտի տեսնան քաջեր եւ հայրենասէրներ, որ կէս ճամբուն վրայ ինկած են, անազորոյն ձեռքերու տակ և հարուածներու տակ ճղմուած են, սարի և ձորի տակ ծուիկ ծուիկ եղած այրուած են: Ես վստահ եմ թէ պիտի մօտենան անոնց ցուրտ շիրիմներուն տակ հանգչող նահատակներուն, պիտի դզան անոնց տաքուկ շունչը եւ ազնիւ զաղափարները: Մտիկ պիտի ընեն անոնց գերեզմաններուն, եւ պիտի տեսնան թէ ոսկորներն անդամ կեանք եւ ապստամբութիւն կաղաղակեն: Ո՛վ դուք Նիրզէցի երիտասարդներ, Աստուած մի արասցէ, ձենէ ունէ մէկը նահատակուի այն ատեն ձեր անուան յուշարձաններ պիտի կանգնեցնենք եւ ձեր անմահ յիշատակին շուրջ պսակներ պիտի հիւսենք, դո՛ւք Նիրզէցի ասպետ հողիներ, եթէ դուք նահատակուիք, հայրենիքը պիտի փրկուի, իսկ եթէ դուք մարտիրոս ըլլաք, հայրենիքը յարութիւն պիտի առնէ:

Ո՛հ, երանի ձեզի որ պիտի տեսնէք առաջին անգամ այս հալածական կեանքի ազատուիլը Հայաստանեայց աշխարհին: Դուք հայրենասիրական պար

տականութիւնը կատարելու համար կամաւորապէս  
 գացիք: Եթէ պատահի որ նահատակութիւնք ձեր դերեղ  
 մանկերը ձեր աղօթատունները պիտի ըլլան եւ ձեր  
 յիշատակները ձեր պարծանքը պիտի ըլլայ: Ո՛վ  
 դուք Նիրզէցի երիտասարդներ, գացէք դուք զէնքը  
 ձեռքերնիդ, եւ վստահ եմ որ պիտի ըսէք շան թուր-  
 քէն, բորենիներ, միթէ անզէն եւ անպաշտպան հայ  
 կիները եւ երեխաները մորթելու համար է ո՞ր պա-  
 տերազմի մտաք: Ըսէք տանիկին այս սկիզբն է ձեր  
 վախճանին մարդակեր հրէշներ, միթէ՞ այսքան ա-  
 բիւն եւ ոճիր անպատիժ պի՞տի թողունք. ուրեմն  
 «իբելի եւ անմոռանալի հայրենակիցներ, շարժեցէք  
 դէպի յառաջ, դէպի գործ, դէպի զէնք եւ դէպի զար  
 գացում: Յառաջ քայլեցէք այդ արիւնոտ ճանապար-  
 հէն դէպի պարտականութիւն. դուրս ելէք առնակա-  
 նօրէն, ցոյց տալու համար ձեր գործունէութեան ո-  
 ղին, ցոյց տուէք ձեր տաղանդը, ձեր ձիրքը, այդ-  
 պէտով է որ ձեր յոյսերը լիուլի պիտի իրականա-  
 նան: Դո՛ւք Նիրզէցի անձնուէրներ, դուք էք որ պի-  
 տի ողջունէք ազատութեան արշալոյսը, որ պիտի  
 ծագի այսօրուայ արիւնոտ աւերակներու մէջէն.  
 դո՛ւք էք որ պիտի ծածանեցնէք հայկական դրօշա-  
 կը, Հայաստանի ամենարարձր գազաթներէն: Ու-  
 րեմն կեցցէ ազատագրուած Հայաստանը, կեցցէ ա-  
 զատագրուած Կիլիկիան եւ կեցցէ հայկական կա-  
 մաւորները:

Յ. Գ.— Սոյն գրութիւնը տպագրութեան չը  
 յանձնած իմացայ որ մօրեղբորորդիս Հաճի պէյ,  
 Հաճի Սարգիսեան եւ իրեն քեռայրը Աւետիս Ազօղ-

լանեան, 1917 սեպտ. 22ին մեկնած են վերը յիշուած նպատակներուն իրադործման համար. յաջողութիւն կը մաղթեմ իրենց հայրենասիրական զգացումներուն:

### ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԱՄԱԽՈՐՆԵՐ

Առաջին կամաւորական շարժման մասնակցեցան Նիրզէցիներէն հետեւեալները. Կարապետ Սարահան (ներկայիս Ամերիկա է), Խաչիկ Հոճի Պետրոսեան (ըստ ոմանց Պարսկաստան է), Ստեփան Ալեանագեան (վերջերս Նիւ Եօրքի մէջ ջրամոյն եղաւ): Յիշեալ կամաւորները իրենց պայմաններուն ներած չափով մասնակցած են կռիւի:

### ՎԵՐՁԻՆ ՊԱՀՈՒՆ

Ամերիկեան բանակին մէջ ծառայելու համար իրրեւ զինուոր կանչուած են հետեւեալ Նիրզէցիները. Ք. Մանիկեան, Մ. Քէհեան:



ՆԻՐԶԷ ԳԻՒՂԻ ԲՆԱԿԶՈՒԹԻՒՆԸ  
ԵՒ ՀԱՐԱՏՈՒԹԻՒՆԸ (1914-ին  
ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ԱՌԱՋ\*)

Բնակչուքիւն		Հարստութիւն
Հոգի		Ոսկի
Գրիգոր Պաղտաթլեան	3	100
Պետրոս Թէքիրեան	5	.50
Նազար Մինասեան	5	100
Խըտր Խըտրեան	8	700
Ստեփան Խըտրեան	4	200
Խաչեր Խըտրեան	5	400
Սերոբէ Խըտրեան	4	500
Սրբուհի Խըրտեան	2	300
Յակոբ Հանի Պետրոսեան	4	600
Կարապետ Հանի Պետրոսեան	4	200
Յար. Հանի Պետրոսեան	3	200
Գէորգ Հանի Պետրոսեան	4	200
Սուլթան Տոմճիկեան	3	400
Մկրտիչ Միւտիրեան	5	1500
Սիմոն Միւտիրեան	4	300
Կարապետ Ս. Միւտիրեան	6	600
Գերորէ Ս. Միւտիրեան	9	2500
Մելքոն Ս. Միւտիրեան	3	200

\* ) Վերոյիշեալ անունները կը նշանակէ մէկ ընտանիք, սեփական տուն ունեցող :



Յարութիւն Միւտիւրեան	9	5000
Պաղտասեր Միւտիւրեան	4	400
Կարապետ Միւտիւրեան	2	400
Աւետիք Հանի Պետրոսեան	12	900
Աւետիս Հանի Պետրոսեան	4	700
Հ. Պօղոս Հանի Սարգիսեան	6	3500
Աստուր Հանի Սարգիսեան	6	3000
Աւետիս Ճէլէպճեան	6	1500
Յակօրճան Ճէլէպճեան	2	900
Մ. Աւետիս Գարազոյեան	7	7500
Կարապետ Թորոսեան	6	400
Սաչեր Թորոսեան	5	400
Գարբրիէլ Հանի Սարգիսեան	7	500
Օննիկ Պապահան	3	200
Գրիգոր Պապահան	4	250
Լեւոն Ճէլէպճեան	3	400
Գալուստ Թեքիրեան	3	-50
Եղիա Էմճիեան	8	500
Եղիազար Յովսէփեան	3	500
Յարութիւն Թորոսեան	5	425
Համբարձում Ղալայճեան	8	650
Նշան Բարսեղեան	5	400
Գրիգոր Հանի Սաչերեան	9	1500
Յովաննէս Հանի Սաչերեան	6	400
Սրբուհի Հանի Սարգիսեան	7	250
Մկրտիչ Հանի Սարգիսեան	5	425
Հ. Սարգիս Հանի Սարգիսեան	4	500
Աւետիս Ազօղլանեան	4	300
Օննիկ Պալեան	3	100
Հանի Պալեան	3	150

Եղիազար Կըտրեան	7	1000
Ճիւղան Սէֆերեան	4	400
Տիգրան Սէֆերեան	9	500
Խաչեր Սէֆերեան	4	200
Սէֆէր Սէֆերեան	8	800
Բարսեղ Սէֆերեան	7	600
Սարգիս Սէֆերեան	8	800
Եղիազար Պալեան	7	700
Յարութիւն Պալեան	6	500
Սեդրակ Քէչեան	4	200
Նշան Քէչեան	5	200
Կարապետ Քէչեան	6	425
Յովհ. Հաճի Պետրոսեան	5	500
Սարգիս Թէքիրեան	4	200
Սեդրակ Գալբազեան	5	300
Խաչեր Զօլազեան	8	300
Մանուկ Զօլազեան	9	300
Պետրոս Հաճի Խաչերեան	7	2500
Կարապետ Դաւիթեան	6	700
Աղատատէ Գարազոյեան	7	3500
Յարութիւն Մանիկեան	7	600
Կարապետ Մանիկեան	5	550
Դաննէլ Մարկոսեան	6	525
Կարապետ Ալեանազեան	4	600
Սարգիս Քէչեան	4	150
Յովհաննէս Թորոսեան	9	900
Յակոբ Պէօճիւքեան	4	225
Յակոբ Թորոսեան	5	300
Աբիստակէս Պաղտաթլեան	4	150
Օննիկ Մխճեան	5	500

Յակոբ Զիւմպիւլեան	5	700
Պաշատուր Քէչեան	6	300
Գրիգոր Քէչեան	4	200
Ասատուր Ասլպէկեան	5	200
Սարգիս Քէչեան	4	250
Սարգիս Հանի Սարգիսեան	5	275
Ստեփան Մաթոսեան	5	550
Կարապետ Ինէեան	4	225
Սարգիս Աւագեան	6	600
Սիմոն Զապնեան	7	2500
Պետրոս Քէչեան	6	225
Ստեփան Զապնեան	2	150
Կարապետ Մարկոսեան	7	500
Կարապետ Պարծամեան	6	200
Մ. Գարիէլ Գարագոչեան	4	5000
Սարգիս Բաւլեան	2	250
Գասպար Նշանեան	8	1500
Սերորէ Գալբաղճեան	6	900
Մ. Պաշատուր Աւետիքեան	3	500
Նազար Բարսեղեան	4	250
Քերորէ Գալբաղճեան	5	1000
Հանի Հանի Պաշեան	6	600
Կարապետ Գարագոչեան	12	5525
Մկրտիչ Բարսեղեան	6	425
Օննիկ Բակլաեան	6	300
Ստեփան Գերիեան	6	400
Վարդան Գարագոչեան	5	600
Յովհաննէս Գուլումճեան	9	450
Կարապետ Գուլումճեան	6	400
Յովհաննէս Գուլումճեան	0	250

Կարապետ Պուտազեան	3	200
Փիլիկոս Քէօշկերեան	8	250
Կարապետ Եսայեան	5	475
Սերոբէ Եսայեան	7	350
Յակոբ Մարկոսեան	2	175
Կարապետ Մարկոսեան	4	300
Կարապետ Բաւլեան	5	275
Գէորգ Մարկոսեան	6	.75
Յակոբ Սարբեան	4	225
Գրիգոր Ապանեան	3	250
Հայկ Ապանեան	2	200
Սրապիոն Գալբադճեան	3	800
Քերոբէ Հաննլեան	5	200
Ստեփան Հաննլեան	5	250
Միհրան Հաննլեան	3	200
Հանի Եղիա Սուլազեան	7	2000
Կարապետ Պարսամեան	3	500
Կարապետ Զազարեան	4	350
Խաչատուր Զըյրդճեան	5	150
Յովհաննէս Զըյրդճեան	6	600
Անդրէաս Կօշկարեան	4	300
Եղիա Կօշկարեան	6	150
Կարապետ Կօշկարեան	3	100
Ներսէս Աւետիքեան	5	900
Յովակիմ Աւետիքեան	4	300
Կարապետ Աւետիքեան	3	300
Կարապետ Ասլպէկեան	4	200
Յարութիւն Ասլպէկեան	4	450
Ասուա Ասլպէկեան	5	4500
Ասատուր Ասլպէկեան	12	4000

Մարզար Հաճի Պաշերեան	4	900
Հաճի Յակոբ Ասլպէկեան	4	4000
Կարապետ Գարազոյեան	4	150
Գրիգոր Գարազոյեան	6	4100
Կիրակոս Գարակէօզեան	6	2555
Մարտիրոս Գարակէօզեան	2	1500
Ճիվան Սարըեան	4	300
Պետրոս (Փրօտ)	2	150
Բարսեղ Բարսեղեան	5	200
Կարապետ Կիւլիւեան	5	325
Յովհաննէս Կիւլիւեան	6	175
Յարութիւն Կիւլիւեան	4	800
Եփրեմ Ասլպէկեան	4	100
	<hr/>	<hr/>
150 ընտանիք ընդհ. գիւղը	762	125,550



## ԱՐՄԵՆԱԿ ԲԱՒԼԵԱՆ

Ծնած է 1891 թուականին Կեսարիոյ Նիրզէ գիւղը միջակ ընտանիքի մը զաւակ. Հայրը Կարապետ Բաւլեան երկաթագործ էր որ մեռաւ 1910ին. մայրը Նղիսարեթ. եղբայր մը ունէր Յարութիւն Բաւլեան. ունէր երկու քոյրեր որոնց կրտսերը ամուսնանալէ երկու տարի վերջը մեռաւ:

Արմենակ իր ուշադրութիւնը տուած էր ուսման. բոլից մը պարապ ժամանակ չէր անցնել. 10—11 տարեկան հասակին մէջ կուզէր օգնել իր ընտանիքին ալ. անոր համար պարապ ժամերը տունը գործ կը գործէր: Տարեկան քննութեան ժամանակ օր մը ներկայ կըլլայ ազգականներէն մօրքրոջորդի պրն. Վահան Ս. Քիւրքճեան (Կեսարիոյ ընդհանուր տեսուչ) տեսնելով որ Արմենակը բաւական ապագայ կը խոստանայ և նկատելով որ պէտք է աւելի բարձր դպրոց յաճախէ, անմիջապէս Արմենակին եղբայրը յանձն կառնէ բոլոր ծախքերը և կը դրկուի Թալասի Ամերիկեան բարձրագոյն դպրոցը:

1902 սեպ. 5ին կը մեկնի Նիրզէէն Թալասի ամերիկեան բարձրագոյն դպրոցը և հոն կը մնայ եօթը տարի: Եօթը տարուայ մէջ քանի քանի անդամներ մրցանակներ շահած է և իր կարգին մէջ միշտ առաջինը եղած է: Կատարեալյաջողութեամբ շրջանաւարտ ըլլալէն մի քանի ամիս յետոյ, Կեսարիոյ Էվէրէք գիւղաքաղաքին Հայոց ազգային վարժարանէն հրաւէր մը ստացաւ անդլիերէնի ուսուցչութեան համար. հոն պաշտօնավարեց մէկ տարի և յաջորդ տարին վերադարձաւ ծննդավայրը Նիրզէ. սկսաւ հոն ուսուցչութիւն ընել հակառակ անոր որ

կեսարիոյ Ս. Աստուածածինի դպրոցին հետ պայ-  
ճանաւորուած էր աւելի թոշակով, բայց մերժեց այդ  
նախամեծար համարելով իր ծննդավայրին մէջ պաշ-  
տօնավարել. դպրոցին մէջ աւելի ուժ կուտար անդ-  
լիերէնի. հաստատեց Ֆրանսերէնի դասընթացք մը :

Ինչպէս ուրիշներ նոյնպէս Արմենակն ալ մեկ-  
նեցաւ դէպի Ամերիկա 1912 օգոստոս 28ին և Նիւ  
Եօրք հասաւ 1912 նոյ. 17ին, իր եղբօրը քով որ  
կզբադուէր դերձակութեամբ. Արմենակի Ամերիկա  
գալու մտադրութիւնն այն էր թէ քանի մը տարի  
դպրոց յաճախելով բժշկութեան վկայական մը ձեռք  
ձգել հակառակ իր բաղձանքին սակայն, չկրցաւ ի-  
րագործել իր ծրագիրները և ստիպուեցաւ գործա-  
ւորութիւն ընել. ներկայիս կը գործէ Նիւ Եօրքի հի-  
ւանդանոցներէն մէկուն մէջ. տիրացած է առաջնա-  
կարգ և դիւրին գործի մը. Արմենակը պէտք եղածին  
չափ ազգասէր է. երկրին մէջ բաւական ուշագրաւ  
գործեր ընելէ յետոյ, այսօր Լ. Յ. Դաշնակցութեան  
Նիւ Եօրքի կօմիտէին մէջ գործունեայ ընկեր մըն է :

### ՆԻՐՁԷՑԻ ԿԱՄԱԽՈՐՆԵՐԸ

Ամերիկայէն գացած Նիրզէցի կամաւորները որ  
դրած էի դրքիս առաջին մասին մէջ, ամբողջէն ալ  
նամակներ ստացուած է եւ ողջ-առողջ հասած են  
մարզավայրը, դժբաղդութիւն մը որ պատահած է  
Մարսիլիայէն Փորթ-Սաիթ երթալու ատեն նաւը  
ընկղմած է բայց բաղդին բարի բերումով բոլորն  
ալ ազատած են անվնաս : Ներկայիս կը գտնուին  
Կիպրոս :

Եղբայրս Վահանէն նամակ ստացայ, կիմացնէ

թէ «մարզանքը լրացած է եւ ներկայիս կը գտնուիմ Եդիպտոսի մէջ. և քանի մը օրէն պիտի մեկնիմ պատերազմի դաշտ» . նամակագիրը կ'ըսէ . «Եթէ կան Ամերիկայի մէջ թերահաւատներ, զրկեցէք չոս թող տեսնան հայկական բանակը . ես վստահ եմ որ ամենէն այլասէրը պիտի ըլլայ ամենէն ազգասէր» :

### ՏԻԱՐ ՎԱՀԱՆ ՔԻԻՐՔՃԵԱՆ

Ուելէ փորձ չպիտի ընեմ Տիար Վահան Քիւրքճեանի կենսագրութիւնը ընելու, այլ միայն համառօտ տեղեկութիւն մը պիտի տամ զբժիս ընթերցողներուն :

Վահան էՖ . Քիւրքճեան աղքատ ընտանիքի մը զաւակ էր . հայրն էր Սարգիս Քիւրքճեան, արհեստով հիւսն, հազիւ իր ընտանիքին ապրուստը կրնար ճարել . մայրը Սիմա, խիստ ճարպիկ Իւրօրեան գերդաստանէն աղջիկ մըն էր եւ իր ամուսինին կէս առ կէս կ'օգնէր կտաւագործութեամբ եւայլն : Բաղդին մի բարի բերումով Վահան էՖ ., կը զրկուի Ս . Կարապետի վանք . շնորհամ ըսելու թէ Նիրզէի մէջ Վահան էՖ . ամենէն առաջադէմ աշակերտը եղած է : Ս . Կարապետի վանքին մէջ կարդացած է եօթը տարի եւ շրջանաւարտ ելած է առաջին տիտղոսը ստանալով . անմիջապէս կանչուած է Կեսարիա ուսուցչութեան պաշտօնին . քանի մը տարի յետոյ ուսուցիչներուն մէջ ամենէն բարձր թոշակը կ'ստանար : Օրտուցիներ տեսնելով տիար Վահանին ձեռնհասութիւնը եւ կարողութիւնները, կանչած են իրենց շաղաքին մէջ պաշտօնավարելու եւ խոստա-



ցած են վճարել աւելի թուշակ, բայց Վահան էֆ. Հազիւ տարի մը շարունակեց իր պաշտօնը եւ օդին աննպաստ ըլլալուն համար ստիպուեցաւ ձգել հոն եւ ետ դալ Կեսարիա: Այս անգամ աւելի բարձր պաշտօնի կանչուեցաւ, յանձնուելով իրեն ընդհանուր տեսչութեան պաշտօնը: Տիար Վահան Քիւրքճեան ձեռնհասօրէն պաշտօնավարեց իրեն յանձնուած պաշտօնը. իրազեկ աղբիւրէ կ'իմանամ թէ իր տեսուչ եղած ժամանակ միացած է Հ. Յ. Դաշնակցութեան եւ Կեսարիոյ մէջ զարկ տուած է կուսակցութեան յառաջդիմութեան, եւ պատճառ հանդիսացած է տարածման: Տօքթօր Սաչիկ Տէօլլէթեան եւ Վահան էֆ. Քիւրքճեան երկու աննման գործիչներ զոհ դացին թուրք գազանութեան: Իրենց ժպտուն դէմքով եւ համակրելի արտայայտութեամբ արտասանեցին իրենց վերջին խօսքը կախաղանին վրայէն. «Մենք կը մեռնինք կախաղանի վրայ, բայց մեզ պիտի յաջորդեն շատերը և մեզ պիտի աւետեն Ազատութեան մօտալուտ Արեալոյսը»:

Մենք կեսարացիներս պարծանքով պիտի յիշենք ինչպէս շատերուն նոյնպէս այս երկու աննման ազգային եւ կուսակցական գործիչներու անունները:

Կեսարիոյ և շրջանի մտաւորականութեան մէջ ամենայայտնի և առաջնակարգ տեղ գրաւող դէմք մըն էր պ. Վ. Ս. Քիւրքճեան: Սիրուած՝ հայ հասարակութենէն, գնահատուած հայ պաշտօնական մարմիններէն և նոյնիսկ յարգանքը գրաւած իր հասարակական հակառակորդներուն, ան եղած է երկա-

րամեայ կրթական վաստակաւոր մը :

Մնած է նիրզէի մէջ, ի իստ աղքատ, բայց Համեստ ընտանիքի մը մէջ : Փոքրիկ Հասակէն ընդունուած է Սուրբ Կարապետի Ժառանգաւորաց միջնակարգ վարժարանին մէջ, և հոն ցոյց տալով մեծ ընդունակութիւն, իր դասընկերներուն մէջ ամենէն աւելի յաջողակութեամբ աւարտած է իր միջնակարգ կրթութիւնը : Տարի մը Օրտուի մէջ ուսուցչական պաշտօն վարելէ ետքը, Հաստատուած է Կեսարիոյ մէջ, մինչև Հայկական վերջին աղէտները մնալով իր ուսուցչական բաղմարդիւն դերին մէջ :

Պ. Վահանէն առաջ, Կեսարիա քաղաքը միջնակարգ դպրոց մը չունէր : Թաղային վարժարաններ էին բոլորն ալ, նախակրթական ծրագիրներով : Պ. Վահանի ջանքը եղաւ ստեղծել երկրորդական դըպրոց և յաջողեցաւ : Եաջողեցաւ դիտաւորաբար այն պատճառով որ, Կեսարիոյ Հայ ժողովուրդը մեծ վրստահութիւն ունէր անոր գործնական ընդունակութիւններուն վրայ, գիտէր անկէ եղած իւրաքանչիւր թելադրանքի արժէքը : Պէտք է հոս աւելցնել որ պ. Վահան այդ հիմնական յարգանքը և վստահութիւնը Հահան էր իր անբասիր և շիտակ մարդու նկարագրով վարչական անուրանալի կարողութիւնով և մանաւանդ տոկուն, անդույ և քրտնաջան աշխատասիրութիւնովը :

Պ. Վահան յաջողեցաւ Կեսարիոյ քանի մը նախնական վարժարանները միացնելով, յառաջ բերել Սուրբ Սարգիսի միջնակարգ ուսումնարանը, և ինք ստանձնեց անոր տնօրէն-ուսուցչի պաշտօնը, մինչև իր նահատակութիւնը :

Պ. Վահան մէկէ աւելի արժանիքներ ունէր, զորս կարելի է դասաւորել հետեւեալ ձևով. —

1. — Ան խիստ համեստ էր, այնքան համեստ որ՝ արտաքին երևույթին մէջ զինքը տեսնողը կը կարծէր որ ամօթխած մէկն է :

2. — Իր խօսքերուն և ըսածներուն արժէքը կը բռնէր զիտէր և մանաւանդ խիստ ծանրարարոյ բնաւորութիւն մը ունէր, ա՛յնքան որ իր բոլոր աշակերտները զինքը պաշտելու շափ կը սիրէին : Իր բաղձածեայ դաստիարակչական կոչումին մէջ ունեցած չէ աշակերտ մը՝ որ վշտացած ըլլայ իրմէ, ընդհակառակը բոլորն ալ զինքը հեռուէն ու մօտէն կը յարգէին ու կը հետաքրքրուէին իրմով, յաճախ գործակցելով իրեն, իր հասարակական գործունէութեան մէջ :

Սահմանադրութեան հռչակումէն ետքը, պրն. Վահան հայ կեանքի մէջ ունեցաւ գործօն մասնակցութիւն : Անիկա խմորատիպ հրատարակութեամբ մը «Շեփոր» անունով, պայքարի սկսաւ կարգ մը պահպանողական հոսանքներու դէմ և յաջողեցաւ, Հ. Յ. Դ. կաղմակերպութեան ուժերուն հետ, հեռացնել առաջնորդական ակնոցէն Տրդատ եպ. Պալեանը : Ան գործօն խմբադիրը եղաւ նաև «Հայիկ» շարաթաթերթին, որոչ շրջանի մը մէջ :

Սառնուածքով լուսկեաց էր, բայց դասարանէն ներս խիստ ազդեցիկ և համակրելի : Սորվեցնելու անժխտելի ընդունակութիւն ունէր և պէտք է ըսել որ պ. Վահան ամենէն առաջ ու ամենէն վեր խղճամբիտ տնօրէն-ուսուցիչ մըն էր : Իր պաշտօնակիցներուն հետ ապրիլ լաւ գիտէր և իր տնօրէնի հանգա-

մանքը աւելի շատ սիրցուցած է զինքը, քան կիրքեր կամ անձնականութիւններ յառաջացուցած :

Ինք համոզուած ազատական մըն էր : Անդամ էր Հ. Յ. Դ. տեղին կօմիտէին և միշտ գործօն մասնակից՝ կուսակցական աշխատանքներու : Համակիրներու ընդարձակ շրջանակի մը մէջ յայտնի և մանաւանդ մտերմօրէն և անչաճախնդրօրէն կապուած կեսարիոյ դաշնակցական գործիչ պ. Գէորգ Վիշապեանի — ուրիշ անդուգական և պաշտելի հասարակական գործիչ մը — ինք ամէն մէկ հայկական իրադարձութիւններու մէջ իր հեղինակւոր ձայնը ունէր :

Պ. Վահան Քիւրքճեան կեսարիոյ կեդրոնական դէմքերէն մէկն էր, մէկ խօսքով :

Իրրեւ ընտանիքի հայր եղած է անբասիր եւ խանդակաթ մարդ մը : Իրրեւ համոզուածի և սկզբունքի մարդ, եղած է տոկուն, իրրեւ վարչադէտ, եղած է առաջնակարգ դէմք մը :

Ամբողջ շրջանը կը ճանչնար զինքը, կեսարիոյ հայկական մարմիններու մէջ միշտ ալ աշխատանքի կը հրաւիրուէր : Շատ անգամներ եղած է ուսումնական, քաղաքական և՛ խորհուրդներու անդամ, Սր. Կարապետի խնամակալ եւայլն :

Կեսարիոյ շրջանի ուսուցիչներու տարեկան դասաւորումին մէջ մեծ դեր և ձայն ունէր : Իր թելադրութիւններով և ցուցմունքներով էին որ շատեր կը պաշտօնավարէին այսինչ կամ այնինչ տեղ : Ինք մասնաւոր խնամք և ուշադրութիւն կը սիրէր դարձընել զիւղերու կրթական գործին և նոր, մաքուր ուժեր կը տեղաւորէր զիւղերու մէջ :

Ներկայ մեծ ազէտի առաջին զոհերէն մէկը եղած է Վ. Քիւրքճեան, իր անբաժան ընկերոջ Վիշապեանի հետ: Ինքը վերջին անգամ առիթը ունեցաւ խուսափելու, բայց վերադարձաւ նորէն Կեսարիա, շուգելով լքել իր կրթական գործը, ընտանիքը և կուսակցական շրջանակը:

Նիրզէի պարծանքը կարելի է նկատել զինքը: Իսկ Սր. Կարապետի շրջանաւարտներու մէջ ամենէն փայլուն զիրք գրաւողներէն մէկը:

Իր յիշատակը պէտք է անձուհնալի մնայ իր համագիւղացիներուն սրտին մէջ: Կախազանի վրայէն անոր և Վիշապեանի կտակները պէտք է որ ամէն մէկ կեսարացի կամ նիրզէցի իր մտքէն չի հանէ: Անոնք մեր թանկագին զոհերն են. անոնց վրէժը պէտք է ալեկոծէ մեր սրտերը ամէն մէկ վայրկեան:

Յարգա՞նք անձնուէր նահատակին:

Վահան էֆ. որքան համակրութիւն շահած էր իր աշակերտներէն և կեսարացիներէն, ստորեւ գրուած նամակը կրնայ բաւարարութիւն տալ ընթերցողներուն: Ես ըլլալով Վահան էֆէնտի մերձաւոր ազգականներէն այս նամակը գրած է ինձ:

Մեծայարգ

Տեար Սենեքերիմ Խըտըրեան

Ուօրքքաւմ

Սիրելի հայրենակից,

Թերեւս ձեզ համար անակնկալ մը կը թուի անձանօթ նամակագրէ մը երկտող մը ստալաւ, թէպէտ

ստորագրեալիս ինքնութիւնը և անունը անձանօթ, բայց որպէս կեսարացի ծանօթ է, ցաւերու նոյնութիւնը և սեւ բաղդի անարդ ուրուականը ոչ միայն համաքաղաքացիները այլ և իրարմէ մղոններով հետու ապրող ցեղակիցները իրարու կը զօղէ, կը միացնէ :

Ալէկոստոմի բոնուած նաւու մը ճամբորդները բնազդաբար, անդիտակցաբար կը ջանան որ նաւարեկութենէ ազատուողներուն մեծամասնութիւնը իրենց ճանչուորները ըլլան նման յիշեալ նաւուն, տիկերական համարադիտումին մէջ անճիտուածներս ընդհանրապէս, Կեսարացի հայրենակիցները մասնաւորապէս իրենց աւերուած բոյնին, թալանուած, սրախողխող եղած եղբայրներուն կեանքի վրայօք, կը փափաքինք որ ոչ և մեկին տեղեկութիւն մը քաղել :

Ամերիկայէն մեկնող հայրենանուէր կռունկներուն երկրորդ երամբ եկաւ այցելութիւն տալու Սըւէտիոյ քաջամարտիկ ժողովուրդին, յիշեալ այցելուներուն մէջ ի միջի այլոց գտայ իմ ամենասիրելի ուսուցիչներէս Տ. Վահան Գիւրջճեանի մերձաւոր ազգականներէն և ձեր եղբայրը պ. Վահան Խըտրբեանը կարծես շորս տարուայ փոշիներուն տակ զընացող յիշատակներս (դպրոցական) զարթեցան պաշտելի ուսուցիչս Վ. Էֆ. Գիւրջճեանը կը յիշէի անդադար :

Համեստափայլ, պարկեշտութեան տիպար անձնաւորութեան մը քաղցր ժպիտը որ կը ծաղկէր կախազաններու — Ազատութեան կոթողներուն — կատարէն ճօճացող գլուխին վրայ հետաւոր հորիւններու

բու թանձր մշուշը պատուելով կուգար աւետելու ծագող արևուն գեղածիծաղ արշալոյսը :

Երջանիկ յիշատակներու դառն օրերուն վերյիշումը փոթորկոց թէ իմ և թէ եղբորդ վղձկող սիրտը : Կարծես մտերիմ ընկերներ էինք . որովհետև ցաւի, տառապանքի լեզի բաժակը հաւասարապէս մեր ամէնքին համար կ'երկնցուէին :

Ձեր եղբայրը ինձ յայտնեց թէ Ամերիկա եղբայր մ'ունիմ, եթէ հաճիք պարբերաբար թղթակ ցեցէք, ես ամենայն հաճոյքով դրական պատասխան տուի : Սիրելի հայրենակից, առաջին նամակովս ձեզի շատ գլխացաւութիւն չեմ ուզեր պատճառել, բընականէն աւելի երկարելով նամակս

Մնամ ցաւակից հայրենակիցդ

ՄԱՆՈՒՒՆ Կ. ՊԷՅԼԷՐԵԱՆ

6 Հոկտ. 1917, Բօր-Սախտ

Յ. Գ. Անշուշտ կը փափաքիք իմանալ թէ ով է այս նամակագիրը :

Ստորագրեալս բնիկ կեսարացի ծնած 1894-ին ի Կեսարիա . իմ նախնական ուսումս առած եմ Կեսարիոյ Ազգ. միացեալ ուսումնարանն, որուն տնօրէնի պատասխանատու պաշտօնը չորս տարի շարունակ ձեռնհասօրէն վարեց ողբացեալ Տ. Վ. Քիւրքճեան որ զո՛հ եղաւ թուրք (Իթթիհատ) կառավարութեան նենգաւոր քաղաքականութեան . 1913 Յունիսին չրջանաւարտ ըլլալով Տ. Վահանի յորդորով Գահիրէ եկայ . երեք տարի այլեւայլ տեղեր դրագիրի պաշտօնով ծառայելէ վերջ այժմ հինգ ա-

միսէ ի վեր կը գտնուիմ Բօր-Սախա Սուէյտիացի  
 գաղթականաց քէմբը ուսուցիչի սաշտօնով, ըս-  
 տանձնած ըլլալով, Աղդ. Պատմութեան և Աշխար-  
 հագրութեան ճիւղերը կը շարունակեմ իմ սաշտօ-  
 նը. միայն թէ ինձ համար օգտուելու աղբիւրներ կը  
 պահսին, ըլլայ պատմութեան ըլլայ աշխարհագրու-  
 թեան ընդարձակ պատմ. դիրք և աշխհ. քարտէս  
 (Հայաստանի) չը կայ: Մնացեալը դուք կը հասկը-  
 նաք: ՆՈՅՆ





## ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՄՏԱՄՄՈՒՆՔ

Ծուլութիւնը բոյն մըն է որուն մէջ շարութիւնը իր հակիթնները կածէ:

Անհաւատարիմ ամուսնութեանց մէջ էրիկը «անուն» է և սիրականը «գերանուն»:

Աղջկան մը սիրտը հանելուկ մըն է, ամուսնութիւնն ալ անոր մրցանակը, սակայն հանելուկը լուծողը չէ որ միշտ մրցանակը կստանայ:

Երեք տեսակ տգիտութիւն կայ. բան մը չգիտնալ, գիտցածը գէշ գիտնալ, անձին պիտանի չեզոզ բանները գիտնալ:

Ամտութիւնը կը յառաջանայ տեսնուելու համար, ուշիմութիւնը ետ կը մնայ տեսնելու համար:

Ով որ հարստութիւն, ընտանիք, զաւակ, հլու կին մը չունի, վարկ, նեցուկ, ուժ, հանգիստ չունի. սակայն սա ալ ստոյգ է որ ասոնցմէ և ոչ մէկը չունեցողն ալ հոգ չունի:

Կիրքով պատժելը պատժել չէ, վրէժ առնել է:

Այն որ խօսիլ կը փութայ ուրիշները լուելու կը հրաւիրէ, չէ թէ գինքը մտիկ ընելու:

Մարդու մը գիտութեան չափը հասկնալու համար պէտք է անոր չափ գիտուն ըլլալ:

Դրա՞մ պարզեւեցիբ, ապերախտ շահեցար, փո՞խ տուիր, թշնամի շահեցար:

Որտա՞ր տալը աւելի գիւրին է քան թէ անոր հետեւիլը:

Կեանքը կարճ է, արուեստը երկայն, առիթը խուսափուկ, փորձառութիւնը սահուն, և դատաստանը գթուարին:

Բարեպաշտ ըլլալը պարկեշտ ըլլալէն աւելի դիւրին է :

Քանիներ կան որոնք ծերանալուն բարեպաշտ եղած են բայց անպարկեշտ մնացած :

Ազահէն ոսկի մը կորզելը նախանձուտէն գովեստ մը ստանալէն դիւրին է :

Ձգուշացիր որոշում տալէ բարկութեանդ մէջ : Նաւալարը առազստ չի պարզեր փոթորիկի տանն :

Չարին անտեղեակ ըլլալը անմեղութիւն է պարգապէս և անմեղութեան մէջ արժանիք չիկայ, քանի որ հոն ոչ մրցում կայ ոչ ալ յաղթանակ :

Կինը ինչ որ ունի սուր է : Աչքերը սուր, ազանջները սուր, ահուաները սուր, լեզուն սուր, հոտաուութիւնը սուր, բայց սիրտ մը ունի որ բուր է :

Կինը սէր ունի մանուկը խաղալիք : Մանուկը իր խաղալիքով քիչ մը գրոսնելէ վերջը կը զգուի և հանոյք կիմանայ զայն խորտակելով. կինը իր սիրով տարրերութիւն շունի այդ մանուկէն :

Կիներու հանդէպ պէտք չէ տաք վերաբերում ունենալ որովհետեւ խմորի պէս են անոնք, տաքը քանի տեսնան կուռին ու կը թթուին :

Արուեստ մը կայ որուն մէջ կիները կը գերազանցեն իրենց ամենէն աւելի աղէկ դիտցած բանը չի հասկնալ ձեւացնելու արուեստն է անիկա :

Սելացի մարդը կնկանը բարկութենէն չի վախնար, աւելի խելացի մարդը կը ջանայ կնկանը բարկութիւնը չի գրգռեր :

Կիները իրենց դէմքերովը համբաւ կը հանեն,  
իսկ էրիկ մարդիկ զլուխով:

էրիկ մարդիկ աչքեր ունին տեսնելու համար,  
իսկ կիները աչքեր ունին տեսնուելու:

Աստուած երկինքին ամբողջութիւնն է, սիրտն ալ  
մարդուն ամբողջութիւնը:

Նրիտասարգը բոլոր ուժովը կը սիրէ, ուժ որ եր-  
թալով կը քիչնայ: Մերը բոլոր տկարութեամբ կը  
սիրէ, տկարութիւն մը որ երթալով կաւելնայ:

Բան մը չի բաւեր սէրին: Սէրը երբ երանութիւնը  
ունենայ դրախտը կուզէ, դրախտը ունենայ՝ եր-  
կինքը կուզէ, երանութիւն, դրախտ, երկինք սի-  
րոյ մէջն են:

Եթէ սիրող մը չըլլար տիեզերքիս մէջ արեւը  
թերեւս մարէր:

Կիները աւելի մեծ թշնամի շունին կիներէն զատ:

Նրկրորդ անգամ ամուսնացող կիներ, մէկ անգամ  
կարգուած կիներն աւելի օգտակար և պատուաւոր  
սեպուելու է, վասնզի գիրքի մը Բ. տպագրութիւնը  
Ա. տպագրութեան լաւ ընդունելութիւն գտնելը  
կապացուցանէ:

էրիկ մարդոց բոլոր դատողութիւնները ոչինչ  
կարժեն կնոջ մէկ զգացումին քով:

Եթէ ամէն ետեւը նայող կին Ղովտի կնկան պէս  
աղի արձան կտրէր, աղին գինը սաստիկ աժնցած  
պիտի ըլլար:

Կին մը կը խնդայ երբոր կարենայ, և կուլայ երբ  
որ ուզէ: Իր արբունքը թեւակոխած աղջիկ մը շատ  
անգամ կազէ շինուած տուն մըն է. ոչ մէկ ապահո-

վաշբազան ընկերութիւն կրնայ զայն ապահովել  
սիրոյ հրդեհին դէմ :

Չարերը կատղած շունի կը նմանին ձօտերնուն  
անվտանգ անցնելու համար, հարկ է պատրաստ ու-  
կոր ընուննալ իրենց նետելու :

Չրպարտութիւնը ամուսի կը նմանի, եթէ չայրէ  
գոնէ կը սեւցնէ դքեզ :

Յոյսը կաթի կը նմանի, երբ լաւ պահես սէր լը  
կապէ երբ շատ պահես կը թթուի :



## ՅԱՆԿ ՆՈՒԹՈՑ

Էջ

Կեսարիա .....	7
Նիրգէ գիւղը և մեր նախահայրերը .....	15
Նիրգէի հարսանիքը .....	17
Նիրգէի կազմակերպութիւնները .....	18
1909 թուականը .....	20
Երկրաշարժը .....	21
Նիրգէի ջուրերը .....	22
Էրնիէս լեռը .....	23
Նիրգէի դպրոցը .....	23
Նիրգէի մարգագետինը .....	25
Ս. Գրիգորի վանքը .....	26
Կաթ—Աղբիւրը .....	27
Ծակ Քարը .....	29
Նիրգէի Դիրքը .....	30
Մեծ Պահի Երկուսաբքին .....	31
896-ի Դէպքը Նիրգէի մէջ .....	32
Դարձեալ տէրտէրի հարց .....	33
Երտրեան գերդաստանը .....	37
Հայրիկիս կենսագրութիւնը .....	38
Մայրիկիս կենսագրութիւնը .....	47
Հօրաճոյրերս .....	54
Քոյրս .....	55
Հօրեղբայրներս .....	61
Ծնունդէս մինչեւ այսօր .....	63
Եղբայրներս .....	77
Հօրեղբօրս որդիները ..	80
Պարոյրը և Սարգիսը .....	82
Մօրեղբայրներս .....	86





